ՈՐՏՍ ԱՐԱՐԱՏԻ



Թիվ 2 (13), Մայիս - հունիս, 2007 թ

Այսօրվա Արևմուտքը բավարարված չէ անցյալ դարասկզբի իր կողմից հրահրված և իր հանցագործ գործիք հանդիսացող Թուրքիայի միջոցով իրականացված Հայերի ցեղասպանության արդյունքից: Եթե մեկ - երկու տասնամյակ առաջ դեռ քաղաքագիտական առումով վիճահարույց էր անցյալի 1918-23թթ. Արևելյան Հայաստանում հայերի ցեղասպանությունը ավարտին բերելու հարցադրումը, ինչպես և ԽՍՀՄ ինքնափլուզման ծրագրում այն մաս դարձնելու խնդիրը, ապա առնվազն 2003-ից (չհիշատակելով անգամ 1988-2000թթ. ընկած բոլոր արևմտյան և այլոց Հայաստանին և Արցախին ծնկի բերելու ջանքերը), ապա դրանից հետո Եվրոմիության, նրա տարբեր կառույցների ընդհանուր դեսանտի կողմից սահմանադրական - օրենսդրական ներխուժումների փաստացի իրողությունից կարելի է անվարան պնդել, որ այսօր ևս ծրագրում են ծնկի բերել Հայաստանն ու հայությունը: Հետո ինչ, որ սա թուրքի յաթաղան չէ, այլ իբրև թե ադրբեջանա-թուրքական ազգատյացության ու հայերի կողմից, իբրև թե՝ համաձայն երկրի սահմանադրության և օրենքների, իրենց երկրից հրաժարվելու միջազգայնորեն իրավական, հենց հայի ձեռքով հայի տունը ոչնչացնելու իրողություն: Ճչացող փաստ է, որ եվրո-դեսանտի՝ Վենետիկի, Ագոյի և մնացած խմբերը ամեն ինչ անում են, որ իրենք և իրենց կառույցները պատասխանատու չլինեն հայության հանդեպ սանձազերծված նոր հանցագործությունների համար:

Հատված ներդիրից



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խմբագրականի փոխարեն տե՛ս ներդիր էջ 1-8	էջ 15-22	
Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս	էջ 1-2	Հայկ Գաբրիելյան
Ցույցեր Թուրքիայում	էջ 3	Արտակ Շաքարյան
1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումներ. առիթը և պատճառները	էջ 4-5	Թամարա Վարդանյան
Իրանի պատմությունը համեմատական վերլուծությունների և վերագնահատումների լույսի ներքո	էջ 5-6	Արման Փոլադյան
Թուրքիայի ռազմական օգնությունը Ադրբեջանին	էջ 7-8	Հայկ Դեմոյան
Դավիթ Ամալյանի նախնիներն ու իր փնտրտուքը	էջ 9	Նանե Սևան
Արթուր Դանիելյան. Թալիշցի քաջորդին	էջ 10	Մկրտիչ Գասպարյան
Շուշին պահանջելու համար հարկավոր է Երևանը գրավել	էջ 10	Հ. Մանջյան
Հայ վրիժառուներ	էջ 11	Հակոբ Մանջյան
Ազատագրական պայքարը պետք է շարունակվի. Հայերը պայքարի այլ եղանակ, այլ ճանապարհ չունեն և չեն էլ ունենա	էջ12-13	Ջեմմա Բաղդադյան
... Երբ փայտը շնչում է	էջ 23	Դիանա Մակինյան
Իմ հանդիպումները Հովհաննես Շիրազի հետ	էջ 24-25	Լուսինե Թոփուզյան
Դարակազմիկ հայտնագործություն, որը կարող է մեռնել անհայտության մեջ	էջ 26-27	Վիկտորյա Բուռնազյան
Արմենականութիւն եւ Հայք	էջ 28-29	Վարդան Նիկողոսյան
Հովհան Օձնեցի	էջ 30	Արփինե Ալավերդյան
Արարատ լեռան ճանապարհորդության վերհուշը	էջ 31	Արա Ջոհրաբյան
Հայ սերունդ	էջ 31	Նարեկ Առուստամյան
Հոգեբանական դիմանկարներ՝ կանայք և տղամարդիկ	էջ 32-33	Նարինե Աբրահամյան
Հայկական Կիլիկիայի ամրոցները՝ Կիզիստռա	էջ 35	
Գելիգուզան	էջ 36	Հովիկ Մկրտչյան

Լրատվական գործունեություն իրականացնող «Ուխտ Արարատի» ՍՊԸ, հասցեն Կասյան 6/19, վկայական N-03A 069706, տրված 12.10.2005թ.

Տպաքանակը՝ 1000
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

Համարի թողարկման պատասխանատու՝ Տիգրան Փաշաբեզյան

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» տպարանում, ստորագրվել է տպագրության՝ 07.07. 2007

Խմբագրության հասցեն՝ 375010, Երևան, Ագաթանգեղոսի 7բ
Հեռ. (37410) 52-51-90

Official periodical of "Oukht Ararati" LTD

EDITORIAL BOARD
Responsible of the issue: Tigran Pashabezyan

Address: 375010, Yerevan, Agatangeghos 7b
Tel. (37410) 52-51-90
E-mail: oukhtararadi@yahoo.com

Գինը՝ 300 դրամ

«Ուխտ Արարատի» ամսագրից նյութեր արտատպելիս՝ խնդրում ենք հղում կատարել:

Հարգելով հեղինակային իրավունքը՝ ստացված հոդվածները չենք խմբագրում:

ԲՈՒՐԳԱՍ-ԱԼԵՔՍԱՆԴՐՈՒՊՈԼԻՍ

2007-ի մարտի 15-ին ստորագրվեց «Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս» նավթամուղի («Բուրգաս» նախագիծ) վերաբերյալ երկար սպասված համաձայնագիրը: Համաձայնագրի ստորագրումը տեղի ունեցավ Աթենքում, Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինի, Բուլղարիայի ու Հունաստանի վարչապետերի՝ Կոնստանտինոս Կարամանլիսի և Սերգեյ Ստանիշևի ներկայությամբ: Նավթամուղի նախագծի կառուցման հուշագիրը Ռուսաստանը, Հունաստանը և Բուլղարիան ստորագրել էին դեռևս 2005-ի ապրիլին: Խողովակաշարի կառուցումը կսկսվի 2008-ի սկզբներին և շահագործման կհանձնվի 2009-ի կեսերին:

Առաջին հայացքից խողովակաշարի պարամետրերն այդքան էլ տպավորիչ չեն. ապագա խողովակաշարի երկարությունը 282 կմ է լինելու, թողունակությունը՝ տարեկան 30-35 մլն տոննա նավթ կամ օրական 600-700.000 բարել: Առաջին փուլում տարեկան փոխադրվելու է 15 մլն տոննա նավթ, երկրորդում՝ 24, երրորդում՝ 35: Նախատեսվում է այդ թվաքանակը հասցնել տարեկան մինչև 50 մլն տոննայի: «Բուրգաս» նախագծի արժեքը գնահատվում է մեկ մլրդ դոլար, որից 700 մլն ծախսվելու է բուն խողովակաշարի կառուցման վրա, իսկ 300 միլիոնը՝ Բուրգասում ու Ալեքսանդրուպոլիսում (Դեդեագաչ) նավթի բեռնման ու փոխադրման կայանների կառուցման վրա: Բուլղարական Բուրգաս նավահանգիստն ի վիճակի է ընդունել մինչև 150.000 տոննա բեռնատարողությամբ հեղուկանավեր, իսկ հունական խորջրյա Ալեքսանդրուպոլիսն ի վիճակի է ընդունել սուպերհեղուկանավեր: Ռուսական նավթը Նովոռոսիյսկից հեղուկանավերի միջոցով կհասցվի սևծովյան Բուրգաս նավահանգիստը, որտեղից էլ այն կհոսի դեպի Ալեքսանդրուպոլիս՝ էգեյան ծով: Միակ դժվարությունը կայանում է նրանում, որ Սև ծովում անհնար է կիրառել մեծ ջրատարողությամբ հեղուկանավեր, ինչպես նաև չկան դրանց համար համապատասխան նավահանգիստներ (Բուրգասը, Նովոռոսիյսկը և Տուապսեն խորջրյա նավահանգիստներ չեն):



Նախագիծն իրականություն դարձնելու համար պահանջվեց 13 տարի (1994-ից բանակցություններ էին ընթանում), քանի որ կողմերին չէր հաջողվում պայմանավորվել ապագա նավթամուղի բաժնեմասերի հարցում: Սկզբնական շրջանում Բուլղարիան ու Հունաստանը պահանջում էին յուրաքանչյուրին տրամադրել բաժնեմասերի 33.3%-ը (225.5 մլն դոլար): Ի վերջո, կողմերը համաձայնվեցին, որ Բուլղարիան ու Հունաստանը ստանան բաժնեմասերի 24.5-ական տոկոսը, իսկ Ռուսաստանը՝ 51%-ը: Վերջինս պատկանում է «Ռուսնավթին», «Տրանսնավթին» ու «Գազպրոմնավթին»: Նախագծում Բուլղարիան ներկայացնում են «Bulgargaz» և «Transexportstroy» ընկերությունները, իսկ Հունաստանը ներկայացնում են «Hellenic Petroleum»-ը, «Latsis» խումբը և «Prometey Gas»-ը: Բուլղարիան ու Հունաստանն իրենց 49%-ի մի մասը կարող են զիջել երրորդ կողմին, որը կարող է լինել ամերիկյան «Chevron»-ը կամ ղազախական «ՂազՄունայԳազ»-ը:

Երկար ժամանակ նախագծի նկատմամբ որոշակի հակազդեցություն էին ցուցաբերում ամերիկացիները, որոնք առաջարկում էին նավթի փոխադրման ուղին Բուրգասից ուղղել դեպի ալբանական Վլերա խորջրյա նավահանգիստը: ԱՄՆ-ի կառավարությունը պաշտպանում էր «Ալբանիա-Մակեդոնիա-Բուլղարիա» նավթամուղի նախագիծը, որը տարածաշրջանում անմիջականորեն մրցակցում էր «Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս» նախագծի հետ: Սա պայմանավորված էր նրանով, որ «Բուրգաս» նախագիծը դառնում է «Բաքու-Թբիլիսի-Ջեյհան» նախագծի ուղղակի մրցակիցը, որին ԱՄՆ-ը աջակցում է ելնելով գեոքաղաքական նկատառումներից: Ի դեպ Բուրգասն առավելություն ունի «ԲԹՋ»-ի նկատմամբ, քանի որ այն անցնում է սեյսմիկ առումով ավելի անվտանգ և քաղաքական առումով ավելի կայուն երկրների միջով: Բացի այդ, «Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս» նավթամուղը, համեմատած «ԲԹՋ»-ի հետ, 4 անգամ ավելի էժան է: Հավելենք, որ հունական Ալեքսանդրուպոլիս նավահանգիստը շատ ավելի մոտ է Եվրոպային, քան թուրքական Ջեյհանը:

Ներկայումս իրավիճակը փոխվել է, և ո՛չ ԱՄՆ-ը, ո՛չ Եվրամիությունը «Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս» նավթամուղը չեն դիտարկում որպես էներգետիկ կայունությանը սպառնացող վտանգ: Այժմ նրանք մտահոգված են նրանով, որ Ռուսաստանը չօգտագործի իր նավթային ալյանսը Բուլղարիայի ու Հունաստանի հետ՝ առաջարկելով նրանց օգտվել նաև «Գազպրոմի» ծառայություններից: Հունաստանը նոր նախագծի շնորհիվ կդառնա տարածաշրջանային էներգետիկ կենտրոն, ինչն ավելի ակնառու է դառնում Կասպից ծովից ու Մերձավոր Արևելքից դեպի Եվրոպա կառուցվող «թուրք-հույն-իտալական» գազամուղի պարագայում: Բուլղարիան էլ իր հերթին, որպես տարանցիկ երկիր, նավթի փոխադրման համար տարեկան կստանա 2.5 մլրդ դոլար: Պետք է նշել, որ խողովակաշարի մեծ մասը (167 կմ) անցնում է հենց Բուլղարիայի տարածքով: Այսպիսով, նավթամուղի շնորհիվ Բուլղարիան ու Հունաստանը, որոնք ՆԱՏՕ-ի անդամներ են, կարող են հայտնվել աշխարհի էներգետիկ քարտեզի վրա:

Նավթամուղը թուլացնում է Ռուսաստանի տրանզիտային կախվածությունը Թուրքիայից: Սկզբնական փուլում «Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս» նախագիծն ի հայտ էր եկել, որպեսզի թեթևացներ Բոսֆոր ու Դարդանել նեղուցների ծանրաբեռնվածությունը: Նեղուցների պարագայում հեղուկանավերը ստիպված էին երկար ժամանակ՝ շաբաթներով, կանգնել նավահանգիստներում, ինչի պատճառով էլ նավթային ընկերությունները ստիպված էին տուգանք վճարել նավթը ժամանակին տեղ չհասցնելու համար: «Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս» նավթամուղի շնորհիվ Ռուսաստանը նավթի արտահանման համար ստանում է լրացուցիչ հնարավորություն: Բացի այդ, սկսած 1995-ից Թուրքիան սահմանափակում էր ռուսական հեղուկանավերի անցումը Բոսֆորով, Մարմարա ծովով ու Դարդանելով: Նեղուցները վերահսկելու շնորհիվ Թուրքիան ձեռք էր բերել Ռուսաստանի վրա ճնշում գործադրելու ազդեցիկ մի լծակ, որը սակայն վերանում է «Բուրգաս» նախագիծը կյանքի կոչելու պարագայում: Թուրքիան կորցնում է նաև իր կամրջային դերը, որը ձեռք էր բերել Կասպիական ավազանի ածխաջրածինների դեպի Եվրոպա փոխադրվելով:

Առաջիկայում նախագծին կարող է միանալ Ղազախստանը, որը ցանկություն ունի բաժնետեր դառնալ: Նախագ-

ծին միանալը, թերևս, տեղի կունենա այն ժամանակ, երբ կսկսվի Ղազախստանի տարածքում գտնվող աշխարհի խոշորագույն նավթահանքերից մեկի՝ Քաշաղանի (պաշարները գնահատվում են 4.8 մլրդ տոննա) շահագործումը: Եթե ղազախական նավթը սկսի հոսել «Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս» նավթամուղով, ապա վերջինս համաշխարհային չափանիշներով «փոքր» նավթամուղից գեոքաղաքական առումով կարող է վերածվել գիգանտի: Ռուսաստանը շահագրգռված է, որպեսզի ապագայում Քաշաղանի նավթահանքի նավթը հոսի ոչ թե «ԲԹՋ»-ով, այլ «Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս»-ով, դրա համար նա դիմում է բազմաթիվ քայլերի, որոնցից մեկն էլ հանդիսանում է «Եվրասիա» նախագիծը: Վերջինս նախատեսում է ջրանցքի շնորհիվ միմյանց կապել Ազովի (Սև) և Կասպից ծովերը: Նախագիծը գնահատվում է 5-7 մլրդ դոլար: Ջրանցքն ունենալու է 16 մ խորություն, 70 մ լայնություն, 640-650 կմ երկարություն և անցնելու է Դաղստանով, Կալմիկիայով, Ստավրոպոլի ու Ռոստովի շրջաններով: Նոր ջրանցքով կանցնեն ավելի մեծ ջրատարողությամբ նավեր, քան դա կարող էր տեղի ունենալ Վոլգա-Դոն ջրանցքի դեպքում: Բացի այդ, օտար պետություններից ներկայիս ջրանցքից կարող է օգտվել միայն Ղազախստանը: Դա բացատրվում է նրանով, որ ղազախական նավթն անարգել կարող է հասնել Սև ծով և Ռուսաստանը նպատակ ունի ղազախական նավթը շեղել «ԲԹՋ» խողովակաշարից, ինչպես նաև արգելք հանդիսանալ «Աքտաու-Բաքու» ստորջրյա (Կասպիցի հատակով) նավթամուղի կառուցմանը: Փաստորեն, ղազախական նավթի համար պայքարը նոր թափ է ստանում:

Ադրբեջանի վարչապետ Արթուր Ռասիզադեի կարծիքով «Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս» նավթամուղը չի հանդիսանա «ԲԹՋ»-ի մրցակիցը: Ավելին, ներկայումս Ադրբեջանում քննարկվում է այդ նախագծին հետագայում միանալու հեռանկարները: Այնտեղ ցանկանում են, որ ղազախական նավթը հոսի ոչ թե «Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս» նավթամուղով, այլ՝ «ԲԹՋ»-ով, քանի որ այսօր ադրբեջանական նավթագործները միայնակ չեն կարողանում ամբողջովին լիաբեռնել «ԲԹՋ»-ն:

Իսկ «Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս» նավթամուղով հոսելու է Կասպիական ավազանի նավթը: Դա ավելի ակնառու դարձավ այն բանից հետո, երբ շահագործման հանձնվեց Արևելյան Սիբիր-Խաղաղ օվկիանոս նավթամուղի (երկարությունը՝ 4188 կմ, հզորությունը՝ տարեկան 80 մլն տոննա) նախագիծը, ինչը ենթադրում էր, որ սևծովյան ուղղությամբ նավթի առաքման ավելացում չի դիտվի, քանի որ արևմտասիբիրյան ռեսուրսների մի մասն այլևս չի առաքվի դեպի եվրոպական շուկաներ: Հիշատակության արժանի է այն փաստը, որ ռուս-բուլղար-հունական նախագիծն ի հայտ եկավ Կասպիական Խողովակաշարային Կոնսորցիումի (ԿԽԿ) ստեղծումից երկու տարի անց: ԿԽԿ-ն ստեղծվել է 1992-ին Ռուսաստանի, Ղազախստանի և Օմանի Սուլթանության կողմից: Ստացվում է, որ դեռ այն ժամանակից Ռուսաստանը ծրագրեր ուներ կապված կասպիական նավթի փոխադրման ուղիները վերահսկելու հետ: Ներկայումս ԿԽԿ-ով հնարավոր է առաքել տարեկան մինչև 28 մլն տոննա նավթ: ԿԽԿ-ի հնարավորությունները կընդլայնվեն տարեկան մինչև 67 մլն տոննայի, եթե ԿԽԿ-ի ոչ ռուսական բաժնետերերը՝ առաջին հերթին ամերիկյան «Chevron» և ղազախական «ՂազՄունայԳազ» ընկերությունները, միանան «Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս» նախագծին: Ռուսաստանը, որի բաժինը ԿԽԿ-ում կազմում է 24-%, երկու ձեռքով կողմնակից է դրան: Դրա մասին է նաև վկայում այն հանգամանքը, որ Աթենքում համաձայնագրի ստորագրումից արդեն մեկ օր անց՝ մարտի 16-ին, Ռուսաստանի փոխվարչապետ Նարիշկինն Աստանայում բանակցություններ էր վարում ԿԽԿ-ի հզորացան շուրջ: Այժմ ղազախական նավթը Սև ծով է հասցվում ԿԽԿ-ի «Թենգիզ-Նովոռոսիյսկ» նավթամուղով:

Այսպիսով, մենք ականատես ենք սևծովյան մրցակցության աճին, ինչը պայմանավորված չէ միայն Կասպիական նավթի արդյունահանման աճով: Այստեղ իր կարևոր դերն ունի գլխավոր գեոքաղաքական խաղացողների (ԱՄՆ, Ռուսաստան, Եվոմիություն) պայքարը՝ վերահսկելու էներգակիրների փոխադրման երթուղիները: Սկզբում Ռուսաստանը պարտվողի դերում էր, քանի որ 1999-ին շահագործման հանձնվեց «Բաքու-Սուփսա» նավթամուղը, 2002-ից սկսվեց «ԲԹՋ» նավթամուղի կառուցումը: 2003-ին առաջ քաշվեց «Օդեսա-Բրոդի» նավթամուղը կառուցելու խնդիրը, ինչը Եվրամիության համար համարվում էր առաջնահերթ: Վերոնշյալ երեք նավթամուղերն էլ շրջանցում էին Ռուսաստանի տարածքը: Եվ ահա չուշացավ Ռուսաստանի պատասխանն ի դեմս «Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս» նավթամուղի: «Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս» նավթամուղի կառուցմամբ ստեղծվում է նոր, լրացուցիչ երթուղի, որը հնարավորություն կընձեռի Բուլղարիայի ու Հունաստանի տարածքի միջով Սևծովյան նավահանգիստներից նավթը փոխադրել դեպի Եվրոպայի, ԱՄՆ-ի ու Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի (ԱԽՏ) շուկաները: Նավթամուղը լուրջ մրցակցություն կցուցաբերի կասպիական նավթի փոխադրման ուղիներին. Բաքվից Ջեյհան՝ «ԲԹՋ» նավթամուղով, ուկրաինական նավահանգստից դեպի Լեհաստան՝ «Օդեսա-Բրոդի» նավթամուղով, ռումինական Կոնստանցայից խորվաթական Օմիշալ՝ անդրբալկանյան նավթամուղով: Բացի այդ, «Բուրգաս» նախագիծն անիմաստ է դարձնում «Սամսուն-Ջեյհան» նավթամուղի նախագիծը, ինչը նախատեսված էր մեղմացնելու սևծովյան նեղուցների ծանրաբեռնվածությունը: Ստացվում է, որ սևծովյան մրցակցության այս փուլում հաղթողի դերում հանդես կգա Ռուսաստանը, իսկ պարտվողի դերում՝ մի շարք երկրներ. Թուրքիան՝ «Սամսուն-Ջեյհան» նախագծով, Ուկրաինան ու Լեհաստանը՝ «Օդեսա-Բրոդի-Կենտրոնական Եվրոպա» նախագծով, Ռումինիան՝ «Կոնստանցիա-Տրիեստ» նախագծով: Սակայն, դա ամենևին էլ չի նշանակում, որ հետագայում այդ նախագծերը չեն կարող իրականություն դառնալ՝ հաշվի առնելով Կասպիական ավազանում նավթի արդյունահանման աճի տեմպերը:

Պարտվածների շարքին կարելի է դասել նաև ԱՄՆ-ին, որը չկարողացավ խոչընդոտել «Բուրգաս» նախագիծը: Այստեղ տեղին է հիշել համաձայնագրի ստորագրումից մեկ շաբաթ առաջ Եվրոպայի ու Եվրասիայի գործերով ամերիկյան հատուկ ներկայացուցիչ Մեթյու Բրայզայի այցը Հունաստան, ինչից հետո Հունաստանի վարչապետը հայտարարեց, որ «Բուրգաս-Ալեքսանդրուպոլիս» նավթամուղի շուրջ Հունաստանը ԱՄՆ-ի հետ խորհրդակցելու կարիք չի զգում:

Թուրքերը հավանաբար «գազային փոխհատուցում» կստանան «Երկնագույն հոսքի» երկրորդ գծի տեսքով: Ռուսաստանը դա իրականացնում է խոչընդոտելու համար եվրոպական «Nabucco» նախագիծը, քանի որ անդրկասպյան գազամուղը շրջանցելու է Ռուսաստանի տարածքը և Եվրոպան կապելու է Միջին Ասիայի հետ, ինչի շնորհիվ Եվոմիությունը հնարավորություն կստանա բնական գազ ներկրել Թուրքմենիայից, Ղազախստանից, Ադրբեջանից, հնարավոր է նաև Ուզբեկստանից ու Իրանից: Թուրքերը չկարողացան կյանքի կոչել նաև սևծովյան նեղուցները շրջանցող Անդրթրակյան՝ «Քյուքթյոյ-Իբրիքհաբա» նախագիծը: Վերջինս առաջ էր քաշվել 2004-ին և անցնելու էր Թուրքիայի եվրոպական հատվածով, սակայն Եվրոպական հանձնաժողովը չկամեցավ ուժեղացնել տրանզիտային կախվածությունը Թուրքիայից, ինչից էլ առաջին հերթին օգտվեց Ռուսաստանը: Երբ Բուլղարիան ու Հունաստանը հարթեցին միմյանց միջև գոյություն ունեցող տարածայնությունները Բուրգասից դեպի Ալեքսանդրուպոլիս նավթամուղ կառուցելու վերաբերյալ, Անդրթրակյան նախագիծը դարձավ ոչ այժմեական:

ՀԱՅԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀՈՒՆԻՍԻ 5-ԻՆ ՉԻԼԻԻ ՍԵՆԱՏԸ ՄԻԱՁԱՅՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՈՐՈՇՈՒՄ, ՈՐՈՎ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ԵՐԿՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ՝ ՋՈՐԱԿՑԵԼ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ ՆՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԳՈՐԾՎԱԾ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ:

ՑՈՒՅՑԵՐ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Քաղաքական զարգացումները Թուրքիայում կրկին փաստեցին երկրի արհեստածին լինելը: Մեծամասամբ իսլամական երկիր հանդիսացող Թուրքիան հիմնադրման պահից Աթաթյուրքի կողմից մտցվեց աշխարհիկության կապանքների մեջ, և մահմեդականության ոգին ամեն հարմար առիթի դեպքում գլուխ է բարձրացնում: Պատահական չէ, որ այդ երկրում փոքր ի շատե ժողովրդավարություն պատվաստելուց հետո՝ այն է, երբ երկիրը միակուսակցական համակարգից անցում կատարեց բազմակուսակցականի, գրեթե ամեն 10 տարին մեկ՝ զարմանալի կանոնավոր պարբերականությամբ, տեղի են ունենում զինվորական ուղղակի կամ անուղղակի հեղաշրջումներ:

2007-ի ապրիլվերջյան զինվորական հայտարարությունը ոչ ինչ էր, քան հերթական թավշյա հեղաշրջում՝ ուղղակի միջամտություն երկրի քաղաքական գործերին: Աթաթյուրքի սկզբունքների ու աշխարհիկության պահապան բանակը չի կարող հանդուրժել նախանշված ուղուց դուրս ոչ մի շեղում: Թեև սկզբնական շրջանում իսլամիստական Արդարություն ու զարգացում կուսակցության (ԱԶԿ) բռնած եվրոպական ուղին ձեռնտու էր իսլամական Արևելքից դեպի աշխարհիկ Արևմուտք փախչող զինվորականությանը, սակայն ժամանակի ընթացքում իսլամականները դարձան դժվար կառավարելի: ԱԶԿ-ն ուներ մեծամասնություն խորհրդարանում, իսկ ազգայնականների պարտությունը խորհրդարանական ընտրություններում լրջորեն նրանց թուլացրել էր: Բացի այդ, արագացող տեմպերով երկրի եվրոպականացումը կարող էր հանկարծ բերել Թուրքիայում իրական ժողովրդավարության, իսկ այդ դեպքում բանակը վերջնականապես կհեռացվի քաղաքականությունից, դա էլ կբերի նրան, որ առաջին իսկ հարմար պահին Թուրքիայից ժողովրդավարական հանրաքվեով կարող է անջատվել առավել քան 10 մլն-անոց քուրդ բնակչությունը՝ վերցնելով իր հետ երկրի հարավ-արևելյան տարածքները: Այս աղետալի սցենարը կանխելու ցանկությունն է հենց ընկած այսօրվա զարգացումների հիմքում:

Երկրում գերնպատակ դրվեց ազգայնականության աճն ու այն հակադրելը իսլամականներին: Ներքին գործընթացներն արդեն անցյալ տարի սկսեցին երևան գալ: «Իսլամիստի» կողմից աղմկահարույց կերպով սպանվեց Պետխորհրդի դատավորներից մեկը: Թեև հանցագործը սպանության պահին իսլամական կոչեր էր արել, պնդում էր իր մոլի մահմեդական լինելու մասին, սակայն նրա ազգայնական անցյալը, զինվորական ընկերներ ունենալն ու հատուկ զորքերի պատկանող ատրճանակով զինված լինելը փաստում էին ապաշնորհ ձևով կազմակերպված սադրանքի մասին: Ինչևէ, ազգայնականներին միայն կես առիթ էր պետք իսլամականներին «պատերազմ» հայտարարելու:

2006-ի ամռանը Թուրքիայի Գլխավոր սպայակույտի ղեկավար նշանակվեց իր ազգայնական մոտեցումներով հայտնի բանակային գեներալ Յ. Բյույուքանըթը, ինչը նշանակեց, որ ազգայնական կուսակցություններն այդուհետ ստանում են զինվորականների աջակցությունը բոլոր հարցերում:

Սակայն հասարակության տրամադրվածությունը փորձելու համար անհրաժեշտ էր մի աղմկահարույց իրադարձություն, օրինակ, հայտնի անձի սպանություն: Ընտրությունը կատարվեց. սպանվեց հայ անվանի լրագրող Հրանտ Դինքը: Ընդհանուր առմամբ սցենարը հաջողվեց, քանի որ սպանությունն ու դրան հաջորդած օրերը ապահովեցին ազգայնական ուժերի համախմբումը: Թեև առաջին օրերին կազմակերպվեցին ցույցեր ի պաշտպանություն Դինքի՝ «Բոլորս հայ ենք, բոլորս Հրանտ ենք» ցուցապաստառներով, սակայն դրան ի պատասխան մոլեգնած ազգայնականության ալիքը, պարզապես, անհամեմատելի է. Ստամբուլի հրապարակում 20 հազարանոց երթին ի պատասխան ոտքի կանգնեց ողջ Թուրքիան «Բոլորս թուրք ենք, բոլորս Մեհմեդ ենք» կոչերով:

Այսպիսով, փետրվար-մարտ ամիսներին խաղարկվեց համընդհանուր փորձ՝ ապրիլ-մայիս ամիսներին անցկացվելիք ազգայնական ցույցերին պատրաստվելու համար:

Իսլամիստ նախագահ ընտրվելու դեմ երկրի տարբեր քաղաքներում տեղի ունեցող ցույցերը (գրեթե միլիոնի հասնող ցուցարարներով) անշուշտ տպավորիչ էին: Աչք էր զարնում կազմակերպվածությունը, մարդաշատությունը, հստակորեն կանոնակարգվածը հերթականությունը: Անկասկած, ցույցերի կազմակերպման հարցում գործուն դեր են ունեցել ոչ միայն ազգայնապաշտ կուսակցությունները, այլև զինվորականությունը:

Բայց և այպես, չի կարելի կարծել, որ իսլամիստները Թուրքիայում այդքան թույլ էին, որ իշխող կուսակցությունը չկարողացավ կազմակերպել համարժեք գոնե մեկ ցույց: Խնդիրն այլ է. ԱԶԿ-ն ունի իմիջի խնդիր, մինչ աշխարհիկ-ազգայանական ուժերի կազմակերպած ցույցերը հիշեցնում էին եվրոպական ոճի ակցիաներ, ինչպես ասենք կլիներ Բեռլինում կամ Հռոմում, իսլամիստների կազմակերպած ցույցերը ու նրանց մասնակիցներն ավելի կհիշեցնեին Թեհրանը, ինչն անշուշտ ձեռնտու չէ Եվրոպայում ու ԱՄՆ-ում արևմտամետի դիմակ հագած վարչապետ Էրդողանին ու արտգործնախարար Գյուլին:

Այդուհանդերձ, իսլամիստները պետք է ընդունեն, որ ԱԶԿ-ի՝ միահեծան խորհրդարան ստեղծելու շանսերը շատ քիչ են այս անգամ, և հուլիսի 22-ի խորհրդարանական ընտրությունների արդյունքում, երկրում կձևավորվի կոալիցիոն կառավարություն, որտեղ իրենց խոսուն դերը կունենան ազգայնականները: Հայաստանի տեսակետից, անշուշտ, ավելի ձեռնտու է ունենալ կանխատեսելի հարևան, ինչը չես ասի կոալիցիոն կառավարությամբ Թուրքիայի մասին, հատկապես, եթե վերհիշենք ազգայնականների վերին աստիճանի ջերմ հարաբերությունները Բաքվի հետ:

ԱՐՏԱԿ ՇԱՔԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

1905-1906թթ. ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ. ԱՌԻԹԸ ԵՎ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1905-1906թթ. հայ-թաթարական ընդհարումների պատճառների մասին շատ է խոսվել և գրվել, իսկ ընդհարումների առիթը Բաքվում Բաբաև ազգանունով մի թաթարի սպանությունն էր, որը մեծ հեղինակություն էր վայելում տեղի թաթարների շրջանում: Քանի որ առաջին զոհը թաթար էր, մի շարք հակահայկական հրապարակումներում կարելի է հանդիպել այն միտքը, թե հայերն են սկսել ընդհարումները:

Տեսնենք, թե ի՞նչ են հուշում աղբյուրները:

Նախ՝ դեռևս 1905թ. փետրվարյան դեպքերից մի քանի ամիս առաջ, արդեն շուկներ էին պտտվում Բաքվում հայերի և թաթարների միջև սպասվող ընդհարումների մասին: Այդ շուկներն այնքան համոզիչ ու անհանգստացնող էին, որ 1905թ. հունվարին հայ եպիսկոպոսը հնարավոր արյունահեղությունը կանխելու համար դիմում է Բաքվում թաթարների հոգևոր առաջնորդին իր հավատակիցներին հանդարտեցնելու խնդրանքով: Այդ շուկները հայտնի էին նաև Բաքվի քաղաքային ոստիկանությանը, որոնց մասին քաղաքի 5-րդ ոստիկանական տեղամասի վերակացուն ժամանակին հայտնել էր ոստիկանապետ Դեմինսկուն, վերջինիս միջոցով էլ պետք է որ տեղյակ լիներ նաև նահանգապետը: Չնայած այդ ամենին արյունահեղությունը կանխելու համար ոչ մի միջոց չէր ձեռնարկվել[1]:

Փետրվարյան կոտորածների առիթ դարձավ հետևյալ դեպքը. հունվարի 12-ին Բահլովյան պողոտայում երկու հայազգի ոստիկանների ուղեկցությամբ բանտ էին տանում ձերբակալված Բալա-Աղա (որոշ աղբյուրներում նշվում է Աշուր բեկ) անունով մի թաթարի: Ճանապարհին բանտարկյալը փախուստի փորձ է անում, բայց սպանվում է հայ ոստիկանի կողմից: Քաղաքում անմիջապես լուրեր են տարածվում, թե իբր նրան սպանել են Հայ հեղափոխական դաշնակցության որոշմամբ, որոնց հաջողվել էր նախապես կաշառել ինչպես հայ ոստիկաններին, այնպես էլ բանտի մի քանի աշխատակիցների[2]: Այս լուրերը հմտորեն օգտագործվում էր հակահայկական տարրերի կողմից, որոնք նպատակ ունեին հրահրել թաթարներին՝ Բաքվի հայության դեմ լայնածավալ գործողություններ սկսել: Բայց դրանք իրականությանը չհամապատասխանող լուրեր էին, քանի որ հետաքննության արդյունքների մասին Բաքվի նահանգի ոստիկանական վարչության հետախուզական բաժանմունքի պետ Կարպովը հետևյալ զեկուցումն էր ներկայացրել. «Ոստիկանների կաշառման և ընդհանրապես հայկական ազդեցության մասին խոսք լինել չի կարող: Բանտարկյալին ուղեկցող ոստիկանների ցուցակը նախորդ օրն է ներկայացվում և հուսալ, որ հենց նշված ոստիկանները կարող են ուղեկցել բանտարկյալին՝ գործնականում անհնար է: Ոստիկանները իրոք հայազգի էին, և նրանցից մեկը տիրապետում էր թաթարերենին: Հայտնի վարձու մարդասպան Բալա-Աղային ուղեկցելու ժամանակ, ճանապարհին նրանց միանում է բանտարկյալի եղբայրը և, չնայած ոստիկանների զգուշացումներին, զրուցում է եղբոր հետ: Քանի որ ոստիկաններից մեկը հասկանում էր թաթարերեն, ապա զրույցից նրան հայտնի է դառնում, որ նրանք ուզում են փախուստ կազմակերպել. եղբայրը հորդորում է Բալա-Աղային հարձակվել առջևից քայլող ոստիկանի վրա, իսկ ինքը հաշվեհարդար կտեսներ ետևում կանգնածի հետ: Երբ ոստիկանները նկատեցին փախուստի առաջին ակնարկը, միանգամից նախահարձակ եղան և սպանեցին բանտարկյալին»[3]:

Այնուհետև փետրվարի 6-ին Բաբաև ազգանունով մի ազդեցիկ թաթար, լցված վրեժխնդիր լինելու ցանկությամբ Պարապետի վրա, սպանեց այն հայ ոստիկանին, որը հունվարի 12-ին սպանել էր բանտարկյալ Բալա-Աղային: Երբ Բաբաևը փորձեց փախուստի դիմել, ոստիկաններին հաջողվեց ատրճանակով սպանել մարդասպանին[4]: Այս դեպքը նորից օգտագործվեց հայերին մեղադրելու նպատակով: "Московские Ведомости" լրագիրը գրում էր. «Թաթարները միշտ էլ դիտել են հայերին որպես մշտական չարիք, որպես եկվորների ու վախկոտների, որոնց հետ կարիք չկա հաշվի նստել: Իհարկե, հայերը չեն կարող ժխտել, որ իրենք են այս տարվա փետրվարին սկսել սպանությունները Բաքվում. նրանք սպանեցին մեծ հեղինակություն վայելող թաթար Բաբաևին, ինչից և սկսվեցին կոտորածները»[5]: Այսպիսի հաղորդագրությունները նպատակ ունեին սարսափելի դաժանությունների ու սպանությունների մեղքը բարդել հայերի, մասնավորապես Դաշնակցության վրա:

Հիշյալ սպանությունները Բաքվի չորս օր տևած հայկական կոտորածների պատճառ ներկայացնելը, անշուշտ, հակահայկական տրամադրությունների տարածման փայլուն առիթ էր: Ակնհայտ է, որ սպանության այս դեպքը ոչ թե պատճառ, այլ ընդամենը առիթ էր, որը հմտորեն օգտագործվեց որոշակի ուժերի կողմից՝ թաթարներին հայերի դեմ ոտքի հանելու համար:

Բաքվի փետրվարյան դեպքերը Անդրկովկասում մեկուկես տարի ընթացող հայ-թաթարական ընդհարումների ազդանշան եղան: Ոստիկանությունը ոչինչ չձեռնարկեց դեպքերի ընթացքը կասեցնելու համար:

Փետրվարի 7-ին (դեպքերը սկսվել էին նախորդ օրը) Բաքվի նահանգապետ իշխան Նակաշիձեն հեռագրում է ներքին գործերի նախարար Ա. Գ. Բուլիգինին. «Առավոտից ես քաղաքով անձամբ շրջում եմ, եղել եմ բոլոր մարդաշատ վայրերում, որտեղ հրածգություն էր եղել, հանդարտեցրել եմ ամբոխին...: Իմ հրատապ պահանջով սպասվում է Թիֆլիսից օժանդակ զորքեր»[6]:

Իրականում նահանգապետը թաթարներին անձամբ էր հրահրում կոտորել հայերին և նրանց զինաթափելու ոչ մի միջոց չէր ձեռնարկում: Ահա Կասպիական առևտրա-արդյունաբերական ընկերության տնօրեն Ն. Մ. Սունդուկյանցի հայտարարությունը. «Նահանգապետի ֆայտոնին դեմ դիմաց ելավ 12-15 մահմեդականներից բաղկացած մի ամբոխ, որը զինված էր բերդանկաներով և հրացաններով...: Ես կարծում էի, որ նա կհրամայի կազակներին անմիջապես զինաթափել նրանց: Բայց որքան մեծ էր իմ զարմանքը, երբ նահանգապետը ինչ-որ բան ասաց նրանց, ամբոխի միջից մեկի ուսին խփեց և նստեց ֆայտոնը...: Ոգևորված ամբոխը, գլխարկները հանելով, ողջունեց նահանգապետին»[7]: Իշխանություններն օժանդակ զորքեր էին խնդրում Թիֆլիսից, պատճառաբանելով թե իբր եղած ուժերը բավարար չեն թաթարներին հանդարտեցնելու համար, բայց իրականում դա այդպես չէր: Քաղաքում զորքի ընդհանուր թիվը հասնում էր 5-6 հազարի[8], այստեղ տեղակայված էր 16 գունդ, որոնց պարզապես հրամայված էր չմիջամտել[9], իսկ ցարական իշխանավորները արդարացնում էին իրենց պահվածքը, պատճառաբանելով թե անզոր են դադարեցնել արյունահեղությունը: Երբ օգնական ուժերը ժամանեցին, տեղի քրիստոնյա և մահմեդական հոգևորականությանն արդեն հաջողվել էր որոշակիորեն վերականգնել խաղաղությունը:

Երևանի նահանգի Նախիջևան և Շարուր-Դարալագյազ գավառներում ընդհարումները մեծ չափերի հասան, քանի որ բնակչության մեծամասնությունը թաթարներ էին: Հատկանշական է, որ բոլոր այն վայրերում, ուր թաթարները թվով գերազանցում էին հայերին, ընդհարումները դաժան բնույթ ստացան: Բացառություն էր միայն Սուրմալուն, որտեղ, չնայած թաթարների քանակական գերակշռությանը, ընդհարումներ տեղի չունեցան, ինչը բացատրվում է թերևս նրանով, որ Սուրմալուն գտնվում էր Թուրքիային հարող շրջաններում և ընդհարումները կարող էին վտանգավոր կացություն ստեղծել ռուսական պետական սահմանների անվտանգության տեսանկյունից: Տեղեկություններ կան նաև այն մասին, որ **Բաքվում ընդհարումներից առաջ մահմե-**

դականների և ռուսների տների վրա նախօրոք կավիճով և ածուխով գրված է եղել «Յա ալլահ» («Աստծո հետ») և «Ուրուս» («ռուս») բառերը, որպեսզի կոտորածների ժամանակ շփոթություն տեղի չունենա[10]:

Իրականում հայ-թաթարական ընդհարումներն ունեին հեռու գնացող քաղաքական նպատակներ: Դրանք սնվում էին պանիսլամիզմի և պանթուրքիզմի ծրագրերից: Այդ ծրագրի իրականացմանը մեծապես խանգարեց հայ-թաթարական ընդհարումների ընթացքում 1906թ. փետրվարին Կովկասի փոխարքայի միջնորդությամբ կնքված հաշտությունը: Արխիվային փաստաթուղթը վկայակոչում է մայրաքաղաքի թերթերից մեկում ներկայացված պանիսլամական գործակալի Կ.Պոլսից հղած մի հաղորդագրություն, որտեղ ասվում է. «Այդ հաշտությունը մեզ բավականաչափ խանգարեց, …այլապես մենք կզավթեինք ամբողջ Անդրկովկասը»[11]: **Այսպիսով, պանիսլամականներն ունեին ավելի հեռու գնացող նպատակներ. նրանք ձգտում էին թուրքացնել ամբողջ Անդրկովկասը և անջատել այն Ռուսաստանից**:

ԹԱՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

1. Տե՛ս Всеподданейший отчет о произведенной в 1905 году, по Высочайшему повелению, сенатором Кузьминским ревизии города Баку и Бакинской губернии, СПб., 1906, стр. 10:
2. Տե՛ս Государственный Архив Российской Федерации (ГА РФ), Ф. 102 (Департамент полиции), 00, 1905, д. 90, лл. 3, 3 об.
3. ГА РФ, Ф. 102 (Департамент полиции), 00, 1905, д. 90, лл. 76-76 об.
4. Տե՛ս Ա-Դո, ո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում 1905-1906թթ. (փաստագրական, վիճակագրական, տեղագրական լուսաբանություններով), Երևան, 1907, էջ 14:
5. П. П., Армяно-татарская резня, - “Московские Ведомости”, М., 1905, No 243.
6. ГА РФ, Ф. 102 (Департамент полиции), 00, 1905, д. 90, л. 8.
7. Российский центр хранения и изучения документов новейшей истории (РЦХИДНИ), Ф. 279 (Архив П. Б. Струве), оп. 2, д. 238, л.35.
8. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, Ֆ. 56, ց. 16, գ. 396, թ.4:
9. Տե՛ս РЦХИДНИ, Ф. 279 (Архив П. Б. Струве), оп. 2, д. 238, л.35.
10. РЦХИДНИ, Ф. 279 (Архив П. Б. Струве), оп. 2, д. 238, л. 46.
11. Տե՛ս ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 43, Ք. Վերմիշևի ֆ., ց.1, գ.32, Памятная записка к событиям в Закавказье, No 3:

ԻՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԵՍՏԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Ճշմարտություն խոսել և լինել վարժ նետածիգ,
ահա՝ պարսկական առաքինությունը...
Ֆ. Նիցշե, «Ecce Homo»

Ներկայումս համշխարհային տեղեկատվական դաշտը հագեցած է Իրանին առնչվող վերլուծություններով ու լրատվությամբ: Տարբեր պետական և միջազգային կառույցներում լուրջ քննարկման առարկա է դարձել այս պետության վերագործարկած միջուկային ծրագիրը: Իրենց՝ իրանցիների, հավաստիացումներին, թե այն խաղաղ բնույթ է կրում, աշխարհում վերապահումներով են վերաբերվում: Այսօր, արդեն, դժվար է բացառել մի նոր և առավել դաժան պատերազմի հավանականությունը Մերձավոր Արևելքում: Հարցն այն է, թե ե՞րբ համաշխարհային դերակատարները, ավելի կոնկրետ՝ Իրանն ու իր ընդդիմադիրները «կհատեն Ռուբիկոնը» ու կանցնեն Տեղեկատվական անդարձելիության կետից անդին: Իսկ դրանից հետո աշխարհում առանց այն էլ բավական խաթարված կյանքի ռիթմը կընդունի որակապես նոր բնույթ: Հստակ է, որ հետագա զարգացումները հատկապես պրոեկտվելու են Հարավ-Կովկասյան իրողությունների վրա՝ նոր ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և ժողովրդագրական, խճճանքների պատճառ դառնալով: Ըստ այդմ, *մեր ուսերին ծանրանում է այդ գործընթացներին համարժեք արձագանքելու հարցը: Ունա՞կ է այսօր հայ հասարակությունը՝ ղեկավարությունը, քաղաքական ընտրանին, մտավորականությունը, սթափ լուծումներ առաջարկել: Պատրաստակա՞մ են արդյոք մեր ազգի ներկայացուցիչները Իրերը, նրանց դասավորությունն ու ընթացքը հստակ տեսնել, զանազանել, որոշ դեպքերում նույնիսկ վերծանել: Եվ այս ամենն առանց ինչ-ինչ սուբյեկտիվ նախասիրությունների ու զեղումների տուրք տալու, քանի որ այլընտրանքը լուրջ սխալվելն է... ազգովին... Տեղին է նշել, որ այս խնդրում իրենց անուրանալի դերը կարող են ունենալ մեր գիտական (կոնկրետ՝ իրանագիտական) հիմնարկները՝ փոխելով իրենց «տեսական» բնույթը «գործնական-կիրառականի»:*

Կիրառելով, այսպես ասած, էքնոհոգեբանական «մոդելավորման» մեթոդոլոգիան, փորձենք հասկանալ Իրանի ֆենոմենը: Ուսումնասիրության առարկա դարձնելով այդ երկրի պատմությունը՝ հարկ է նախևառաջ պատասխանել հետևյալ հարցերին.

- Արդյո՞ք պատմությունը «ճշգրիտ» գիտություն է, իր՝ փաստագրական, մաթեմատիկական շարադրանքով, թե՞ այն ենթադրում է ինտուիտիվ ճանաչողություն, մի տեսիլք, «մարգարեություն» առ անցյալ, որը նախորդում է էմպիրիկ շարադրանքին՝ իրենով պայմանավորելով վերջինս:

- Ճիշտ չէ՞ արդյոք պատմական գիտությունը զանազանել պատմական անցյալից (իմա՝ Պատմությունից):

- Իսկ Պատմությունը՝ ինքը, լոկ տարածաժամանակային մեխանիկական ծավալո՞ւմ է, թե՞ կան այլ գերժամանակային-գերտարածական իռացիոնալ գործոններ ևս:

Նման ձևակերպումը ընդունելու դեպքում կարող ենք պնդել, որ **Պատմությունը տվյալ ազգի, տվյալ քաղաքակրթության միասնական Ոգու արտահայտությունն է, աշխարհայացքային բազմապիսի դրսևորումներով և, նախևառաջ, Մշակութակերտ Հանճարի:**

Կարող ենք պնդել նաև, որ որևէ Ազգի (Տեսակի) համար հնարավոր է «մարգարեացում» (վեր տարածաժամանակային կոորդինատներից) նրա առաջին, էքնոծին ավանդույթի վերհանման և հետազոտման միջոցով: Ավանդույթ՝ գրառված, տակավին, նրա գրականության առաջին, արխայիկ հուշարձաններում: Վերջինիս՝ «Նախաառասպելի», «հիմնական առասպելի», «Մյութոսի» ծավալումն էլ ժամանակի մեջ, հենց կարող ենք սահմանել՝ որպես Պատմության բացատրական մոդել կամ ուղղակի՝ Պատմություն: Ի հետևումն, Մյութոսը իրենով է սահմանափակում Պատմությունը, իսկ «Ցեղի վերջին հնարավոր գիտելիքը պարունակվում է արդեն նրա առաջին կրոնական առասպելի մեջ»:

Ասել է թե՝ հնարավորություն է ընձեռնվում ընթեռնել Պատմության «գենետիկական կոդը», «մարգարեանալ»: Ըստ որում, «մարգարեացման» մեթոդաբանությունը կիրառելի կլինի և՛ անցյալի, որով և՛ ապագայի նկատմամբ:

Կիրառելով այս մեթոդաբանությունը Իրանական իրականության նկատմամբ՝ պարզ է դառնում՝ այդ Տերության ներքին և աշխարհաքաղաքական ներկա զարգացումների ընթացքը դժվար է հասկանալ առանց ընկալելու վերջիններիս պատմաքաղաքակրթական երկուսուկես հազարամյա համատեքստն ու ենթատեքստը: Դժվար է մոդելավորել Իրանում առկա և նրա շուրջն ընթացող ներկա գործընթացները, առանց տեսնելու, զգալու և ըմբռնելու դրանց փոխկապակցվածությունն ու ժառանգականությունը բազմա-

դարյան պատմական անցյալի հետ:

Որպես Իրանական ֆենոմենը քննելու կարևոր թեմա՝ առանձնակի ուշադրության է արժանի 1979-ի Իսլամական հեղափոխությունը և վերջինիս ծնած քաղաքական ներկա համակարգը: Դիտարկելով Իրանի պատմությունը՝ կարող ենք փաստել, որ այստեղ «կրոնական հեղափոխություններն» առհասարակ կրում են կրկնողական, ցիկլիկ, որով և տիպական, արխետիպային բնույթ: Ըստ այդմ, «կրոնական հեղափոխությունը» հանդիսանում է տվյալ քաղաքակրթության «գենետիկական կոդի» բաղադրիչ: «Կրոնական հեղափոխություն» ասելով պետք է հասկանալ ոչ որպես «հեղափոխություն կրոնական ուսմունքի շրջանակներում», այլ **կրոնական գաղափարախոսության հիման վրա կատարված հասարակական հարաբերությունների փոփոխություն, որի հետևանքով հաստատվում է լիակատար կամ մասնակի աստվածապետական կարգեր:**

Այժմ հիշատակելով կարևորագույն դիցա-պատմական դրվագները՝ փորձենք հիմնավորել Իրանի պատմության մեջ «կրոնական հեղափոխության» մոդելի արխետիպային բնույթը.

I. Արդեն պարսկական էքնոծին Մյութոսում (ձևավորված դեռևս Ավեստայի գրառման շրջանում և գրեթե ամբողջությամբ տրված «Շահնամեում») արտացոլված է քուրմ-դարբին Կավիի կերպարը և նրա կղմից առաջնորդված «կրոնական հեղափոխության» իրողությունը ընդդեմ բռնակալ-արքա Զոհակի (Աժի Դահակի) դեմ: Դրանով սկզբնավորվեց Կավիների (նոր պարսկերենի հիման վրա՝ Քեյանիդների) քրմական իշխող դասը: (Պատմականորեն Աժի Դահակը Մարաց արքա Աստիագ-Աժդահակն է: Չանդրադառնալով վերջինիս առնչվող պատմական իրողություններին՝ նշենք միայն, որ Մարական (Մեդական) կայսրությունը, որպես Իրանական քաղաքակրթության անքակտելի մաս, նույնպես դիտարկելի է կրոնական հոլովույթում, որպես «բարեպաշտ» քուրմ-արքաների կողմից ղեկավարվող թեոկրատիկ պետություն: Հետագա զարգացումները, կարծում ենք, ճիշտ է դիտարկել Իրանական քաղաքակրթության առաջատարի դերի համար մղվող մարա-պարսկական բնական մրցակցությամբ, և նույնքան բնական, պարսկական էքնոհոգեբանական հենքի վրա կառուցված ինֆորմացիոն դաշտի մատուցմամբ:

II. Զրադաշտի գործունեությամբ Ք. Ա. VI դարի սկզբում, որն ընդունված է կրոնական բարեփոխումներ անվանել, դիցարանից դուրս մղվեցին աշխարհիկ-զինվորական դասը ներկայացնող աստվածները՝ հայտարարվելով «դևեր», ապա հաստատվեց նոր քրմական դասի արժեքային համակարգը: Իր ճանապարհը անարյուն կերպով հարթելով՝ Զարատուշթրայի գործունեությունը կարելի է որակել որպես կրոնական ինտելեկտուալ հեղափոխություն: (Հետաքրքրական է, որ այաթոլլա Խոմեյնին իր գլխավորած շարժումը կոչեց «ինտելեկտուալների հեղափոխություն»): Հիշատակելի է այն հանգամանքը, որ զրադաշտին ընդունված է համարել մեդացի (Մովսես Խորենացու մոտ՝ մոգ և նահապետ Մարաց...), նաև այն, որ Աքեմենյանների օրոք զրադաշտականության ակտիվ միսսիոներներն էին արևելքից թափանցող մեդացի մոգերը: Ըստ այդմ, կարող ենք եզրակացնել, որ Զրադաշտի կերպարը և, առհասարակ, մազդեա-զրադաշտական կրոնական «սառը պատերազմը» կրկին դիտարկելի են մարա-պարսկական ինֆորմացիոն առճակատման տիրույթում:

III. Ք.Ա. 522-ին, իբր պետական դավադրության հետևանքով, տապալելով թագավորական իշխանությունը և այն վեց ամիս իր ձեռքում կենտրոնացնելով, մոգպետ Գաումատան արդյունքում պատճառ դարձավ Աքեմենյան-Հախամանիշ հարստության իշխող ներկայացուցիչների ցայսօր վիճարկելի դերային վերադասավորման: Չնայած Գաումատայի, որպես պատմական անձի իսկության վիճարկելիությանը, նրա՝ որպես կրոնական սպասավորի, հիշատակումը Դարեհ I-ի Բագիաստանայի արձանագրություններում կարող է ներկայանալ իբրև «կրոնական հեղափոխության» մոդելի խիստ մասնակի, անավարտ, սակայն յուրատիպ դրսևորում:

IV. «Կրոնական հեղափոխության» օրինակ է նաև Մանիքեական շարժումը Ք. Հ. III դարում: Մանիի ուսմունքի հիշատակումը, ինչ-խոսք, առանձին ծավալուն հիշատակման է արժանի, որը մեր թեմայից դուրս է: Նշենք, որ, չնայած պայքարի որդեգրած պասսիվ եղանակներին (լինելով գնոստիցիզմի տարատեսակ և ընկալելով չարի և բարու կոշտ, հեղափոխական հակադրությունը՝ որպես գոյաբանական խնդիր) մանիքեությունը դաժանորեն հալածվել է: Քանզի նրա պայքարի վեկտորն ուղղված էր ինչպես արդեն պաշտոնական դարձած զրադաշտականության, այնպես էլ Սասանյանների տիրապետության դեմ:

V. Նախաիսլամական Իրանը «կրոնական հեղափոխության» վերջին և հուժկու դրսևորումը քուրմ Մազդակի գլխավորած շարժումն էր V դարի վերջին VI դարի սկզբին: Իր գաղափարախոսության հիմքում ունենալով չարի և բարու անընդհատ պայքարի գնոստիկյան, հեղափոխական դրույթը, Մազդակը յուրովի մեկնաբանեց Զրադաշտի նյութական փոխօգնության պատվիրանը: Նա կոչ էր անում բռնի ուժով վերացնել «Ահրիմանի չար գործերի ծնունդ» սոցիալական անհավասարությունը: Համայնավար սկզբունքներով գույքային բաժանումը նշանակելու էր աստվածային արդարության հաստատում երկրի երեսին: Ելնելով մազդակիզմի ընդգծված հակաավատատիրական և հակաքրմական դիրքից՝ շահ Կավադ I-ը, ի դեմս նրա, տեսավ իր թուլացած դիրքերը վերականգնելու միջոցի ու դաշնակցեց շարժմանը:

Այսպիսով, «կրոնական հեղափոխության» դրսևորումների վերոնշյալ հիշատակումները ցույց են տալիս, որ

.Պատմական տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր պատճառներով առաջացած խնդիրներին Իրանական Ոգին, ի դեմս կրոնական հաղթական կամ կիսավարտ ըմբոստացումների, փորձել է արձագանքել: Ըստ որում, գոնե վաղնջական շրջանում նշմարելի են ներքաղաքակրթական, մարա-պարսկական, միջէթնիկ, հոգեբանական հակադրությունները:

.«Կրոնական հեղափոխություն» երևույթը այստեղ նախօրինակային (արխետիպային) և պարբերական, կրկնողական բնույթ է կրում:

Ընդ որում, կարող ենք նշել «կրոնական հեղափոխության» մոդելի չորս սկզբունքներ.

1. Աստվածապետական ձգտում,

2. Ունեցվածքային և հասարակական հավասարության հաստատմանն ուղղված սոցիալական հեղափոխականության գաղափարախոսություն,

3. Հակաբռնակալական կիրք,

4. Հեղափոխության ղեկավարումը հոգևոր դասի ներկայացուցիչների կողմից:

Սակայն հիշյալ մոդելի շարքը ոչ-ամբողջական կլիներ, վերլուծական հենքն էլ՝ թերի, առանց Իսլամական շրջանում դրա երևակումները նկատելու, որով նոր երանգներ են ստանում հիշյալ չորս սկզբունքները:

ԱՐՄԱՆ ՓՈԼԱԴՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

Ղարաբաղյան հակամարտության սկզբնական փուլում պաշտոնական Անկարան չեզոք դիրք էր գրավել, այն համարելով Սովետական Միության ներքին գործը: Սակայն 1990-ականների սկզբից Թուրքիան Ադրբեջանին սկսեց ցուցաբերել է բազմակողմանի դիվանագիտական, տնտեսական, ինչպես նաև ռազմական և ռազմատեխնիկական օգնություն:

Թուրքական կողմից Ադրբեջանին ռազմական աջակցության վերաբերյալ բազմաթիվ փաստեր կան ինչպես հայկական, այնպես էլ արտասահմանյան հրապարակումներում: Հատկանշական է, որ Բաքվին նման կարգի օգնություն Անկարան սկսել է տրամադրել դեռ ԽՍՀՄ-ի կազմալուծումից էլ առաջ: Անկարայի կողմից Ադրբեջանին ռազմական աջակցություն ցուցաբերելու առաջին վկայությունների հանդիպում ենք խորհրդային տեղեկատվական «ՏԱՍՍ» գործակալության դեռ 1990թ. հունվարի 24-ի հաղորդագրության մեջ, որտեղ զգուշացվում էր թուրքական կողմին՝ Նախիջևան զենք և զինամթերք ուղարկելու համար:

Դեռևս 1991թ. կեսերին Թուրքիայում ձևավորվել էր այն համոզմունքը, որ Թուրքիան պետք է միջամտի Ղարաբաղյան հակամարտության գոտում: Ֆրանսիական «Լը Մոնդ դիպլոմատիկ» ամսաթերթում թուրքական «Միլլիեթ» թերթի աշխատակից Դ. Քրջանի հոդվածում ասվում էր. «Եթե հայերը զանգվածային հարձակում իրականացնեն Ղարաբաղի վրա, ապա Թուրքիան պետք է խառնվի: Այս մասին թուրքական կառավարությունը տեղյակ է պահել Մոսկվային: Ցանկացած այլ կառավարություն կգործեր նման կերպ»:

Թուրքիայի զինվորական գերատեսչությունների հետաքրքրությունն Ադրբեջանի նկատմամբ համաժամանակյա էր: 1991թ. հոկտեմբերի 12-ին Բաքու ժամանեց Թուրքիայի Զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ Դ. Գյուրեշը և հանդիպեց նախագահ Ա. Մութալիբովի հետ: Սրան հաջորդեց Գյուրեշի այն հայտարարությունը, թե «Ադրբեջանը, հռչակելով իր անկախությունը, իրավունք ունի կնքել ցանկացած տեսակի պայմանագրեր, ցանկացած երկրի հետ»:

Հաջողություն չունենալով միջնորդական առաքելությամբ հանդես գալու գործում՝ Թուրքիան փորձեց Ադրբեջանին ռազմական օգնություն ցուցաբերելով նպաստել Ղարաբաղյան պատերազմում Ստեփանակերտի նկատմամբ Բաքվի հաղթանակին: Պետք է շեշտել, որ Ադրբեջանին Թուրքիայի ռազմական աջակցությունը նախորդեց ադրբեջանական բանակի կազմավորման գործընթացին: Արդեն 1991-92թթ. թուրքական կողմը երկու քողարկված գործողություններ իրականացրեց Ղարաբաղյան պատերազմում՝ Ադրբեջանին ռազմական աջակցություն ցուցաբերելու նպատակով: Այդ ընթացքում երկու օդային գաղտնի փոխանցումներ իրագործվեցին Նախիջևան, որոնց արդյունքում շուրջ 5000 ինքնաձիգ, զինվորական հանդերձանք և ականանետներ մատակարարվեցին ադրբեջանական կողմին: Թուրքական կողմը ձեռնամուխ եղավ նաև ադրբեջանցի սպաների ու զինվորների մարտական կարողությունների ու ռազմական գիտելիքների կատարելագործմանը՝ նրանց ուսուցումը կազմակերպելով Ադրբեջանի և Թուրքիայի տարածքներում գտնվող ռազմական ուսումնարաններում: Ադրբեջանցի սպաներին Թուրքիայում վերապատրաստելու մասին թուրք-ադրբեջանական առաջին համաձայնությունը կայացավ 1991թ. վերջերին:

1992թ. հունվարի վերջին պաշտոնական այցով Անկարայում գտնվող Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովը հայտնեց, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել Թուրքական ռազմական ուսումնական հաստատություններում ադրբեջանական սպաների վերապատրաստման մասին: Նախագահի խոսքերով, բանակաշինության ոլորտում Բաքուն հույսը դնում էր Թուրքիայի աջակցության վրա: Մեկ այլ անգամ Ա. Մութալիբովը նշեց, որ «Ղարաբաղի հարցում Թուրքիայի չեզոք մոտեցումը ԽՍՀՄ-ի գոյության օրոք ճիշտ էր, սակայն հիմա Ադրբեջանն անկախ պետություն է և ԱՊՀ շրջանակներում որևէ երկրի գերիշխանություն մյուսի նկատմամբ չի լինի: Ստեղծված իրավիճակում Թուրքիան պետք է ընդունի, որ հարցը միջազգային որակ ունի, և մեզ պետք է աջակցի»:

1992թ. մարտին Ադրբեջանի վարչապետ Հ. Հասանովը նամակով դիմեց Թուրքիայի նախագահ Թ. Օզալին և վարչապետ Ս. Դեմիրելին Ադրբեջանի «եղբայրներից և բարեկամներից շտապ օգնության ակնկալիքով»: Այդ ընթացքում թուրքական ռազմական տեսուչներն արդեն մասնակցում էին Ադրբեջանի տարածքում գտնվող Գաբալայի հեռակետում 450 ադրբեջանցի կամավորների զինավարժեցմանը:

Հարկ է կանգ առնել մի կարևոր հանգամանքի վրա. պարզ է, որ Անկարան չէր կարող զինամթերքի մատակարարումն իրականացնել ՆԱՏՕ-ի զինանոցներից (չնայած արևմտյան և թուրքական ծագման զենքի ու զինամթերքի առկայությունը ադրբեջանցիների մոտ գրանցվել է միջազգային դիտորդների կողմից), ուստի, թուրքական կողմն աղմկոտ բացահայտումներից խուսափելու համար Ադրբեջանին մատակարարում էր խորհրդային արտադրության զենք և զինամթերք, որոնք սկսած 1990-ից ներմուծում էր նախկին ԳԴՀ-ի զինանոցներից: Ամենայն հավանականությամբ, զենքի և զինամթերքի առաջին խմբաքանակների առաքումն Ադրբեջան տեղի է ունեցել «գերմանական» ծագում ունեցող այս ռազմամթերքի պաշարներից: Հիշյալ վարկածն ապացուցվում է նաև այն իրողությամբ, որ 1992թ. սկզբներին Գերմանիայի «Ճնշված ժողովուրդներ» միությունը Թուրքիային մեղադրեց Ադրբեջանին զենք մատակարարելու համար: Մեղադրանքում ասվում էր, որ Թուրքիան, Գերմանիայից զենք գնելով, դրանք փոխանցել է ադրբեջանցիներին:

Թուրքական առանձին զինյալ խմբեր ադրբեջանական ուժերի հետ ռազմական գործողություններին ակտիվորեն մասնակցելուց բացի, թուրքական բանակի 150 բարձրաստիճան սպաներ, այդ թվում՝ տասը գեներալներ (հիմնականում՝ պաշտոնաթող) օգնում էին Ադրբեջանի բանակաշինության գործընթացին՝ պատրաստելով մարտունակ զորամիավորումներ, գրոհայինների «կոմանդոս» և խափանարար խմբեր: Իսկ Ադրբեջանի նորընծա նախագահ Ա. Էլչիբեյի զինվորական գծով խորհրդական նշանակվեց թուրք գեներալ Յաշար Դեմիրբուլաքը, որը նաև Ադրբեջանի Անվտանգության Խորհրդի անդամ էր:

Թուրքական բանակի հետ ակտիվ գործունեություն սկսեց ծավալել նաև Թուրքիայի «Հետախուզության ազգային կազմակերպությունը» (MIT), որը սերտորեն համագործակցում էր պանթյուրքական կազմակերպությունների, մասնավորապես՝ Ադրբեջանի Ազգային ճակատի և ծայրահեղ ազգայնական «Գորշ գայլեր» կազմակերպության ադրբեջանական մասնաճյուղի հետ: Այս կազմակերպության գործունեությունը չէր սահմանափակվում Ղարաբաղյան ճակատներում հայկական ուժերի դեմ ռազմական գործողություններին մասնակցելով, այլև ուղղված էր Ադրբեջանում «Գորշ գայլերի» դիրքերի ամրապնդմանը: Պատահական չէր որ, ադրբեջանական «Գորշ գայլերի» առաջնորդ Իսքանդեր Համիդովը, ի դեմս ադրբեջանական Bozkurt-ի (Bozkurt - «Գորշ գայլերի» թուրքերեն անվանումն է), տեսնում էր ադր-

բեջանական ժողովրդի և երկրի տարածքային ամբողջականության երաշխավորի:

«Գորշ գայլերն» Ադրբեջանում հաշվվում էին մոտ 15 հազար մարդ՝ ծառայելով ինչպես բանակային ստորաբաժանումներում, այնպես էլ հանրապետության ներքին գործերի համակարգում: Թուրքական մալուլի տվյալներով Թուքական ազգային շարժում կուսակցության առաջնորդ Ա. Թյուրքեշի կողմից թուրքական ինքնաթիռներով Ադրբեջան են ուղարկվել մոտ 300 գրոհայիններ, որոնց վարձատրել է MIT-ը: «Գորշ գայլերի» կողմից Ադրբեջան գրոհայիններ ուղարկելու և նրանց MIT-ի կողմից վարձատրվելու փաստը հաստատվել է նաև թուրքական պաշտոնյաների կողմից: Բացի մարտական գործողություններին մասնակցելուց և հետախուզական աշխատանքից, Բաքվից ոչ հեռու գտնվող «Նասոնի» կայանում MIT-ի նախաձեռնությամբ ստեղծվեց ուսումնավարժական կենտրոն՝ դիվերսիոն հետախուզական խմբեր մարզելու համար: Թուրքիայի Հայաստանին սահմանակից Կարս և Իգդիր վիլայեթներում «Գորշ գայլերի» գրոհայինների գլխավորությամբ սկսվեց թուրքական Երրորդ բանակի հատուկ զորամասերում ազգայնամոլ տարրերի հավաքագրումն ու մարզումը՝ նախապատրաստելով մարտական գործողություններին: Բավական է ասել, որ միայն Սեյիդիշեհիր քաղաքի զինվորական հավաքակայան ներկայացել ու հայերի դեմ կամավոր կռվելու ցանկություն էին հայտնել 237 երիտասարդներ:

Ռազմաճակատում գերի ընկած թուրքական Սիվազ (Սվազ) քաղաքի բնակիչ Ա. Յումախի վկայությամբ՝ Ադրբեջանի պաշտպանության նախարարության մի խումբ սպաներ թուրք վարձկաններ էին հավաքագրում Տրապիզոնի, Անկարայի և թուրքական մյուս քաղաքների գործազուրկ ու չքավոր խավերի շրջանում Ղարաբաղում կռվելու համար:

1992թ. տվյալներով Նախիջևանում և Ադրբեջանի այլ վայրերում տեղակայված էին շուրջ 3 հազար թուրք կամավորներ: Ադրբեջանական բանակի կադրերի պատրաստումն իրականացվում էր Թուրքիայում գործող ռազմական հենակետերում, մասնավորապես՝ Սարիղամիշի Լեռնային գումարտակում: Թուրք զինվորների պնդմամբ, ադրբեջանցիներին մարզելու համար անհրաժեշտ գումարները տրամադրում էր Սաուդյան Արաբիան:

1992թ. հունիսի դրությամբ, ըստ թուրքական «Գերչեք» շաբաթաթերթի, դեղորայքի և պարենամթերքի անվան տակ Թուրքիայից Ադրբեջանին տրամադրվել էր 5 հազար «Ստինգեր» տիպի հրթիռ, հրթիռային կայանք, ականներ և ականանետներ, այդ թվում՝ հակատանկային: Ըստ նույն շաբաթաթերթի, կառավարությունը հետամուտ էր, որպեսզի թուրքական արտադրության զենք կամ զինամթերք չհայտնվի Ադրբեջանի տարածքում, ինչը կքողազրկեր թուրքական օգնության իրողությունը:

Նախիջևանա-հայկական սահմանագոտում սկսված բախումները, ըստ արևմտյան որոշ վերլուծաբանների, կապված էին մինչ այդ Ս. Դեմիրելի Բաքու կատարած այցի հետ, որի ընթացքում Ս. Դեմիրելի արած խիստ ադրբեջանամետ հայտարարությունները ադրբեջանական թուրքամետ որոշ ուժերի բերել էին այն համոզման, որ Հայաստանի վրա նոր հարձակումը կարող է Թուրքիայի ռազմական միջամտության առիթ հանդիսանալ: Հաշվի առնելով ստեղծված իրադրությունը, որն անշուշտ հղի էր անկանխատեսելի հետևանքներով, ԱՊՀ միացյալ ռազմավորումների Գլխավոր շտաբի պետ, մարշալ Եվգենի Շապոշնիկովը զգուշացրեց, որ «Երրորդ կողմի միջամտությունը հակամարտությանը հղի է Երրորդ համաշխարհային պատերազմի վտանգով»: Այս զգուշացումը սառը ցնցուղի դեր կատարեց Թուրքիայի համար, որից հետո նա ստիպված էր ընկրկել:

Ղարաբաղյան հակամարտության ոլորտում թուրքերի հնարավոր ներխուժման դեմ այդ զգուշացումը պայմանավորված էր Հարավային Կովկասում ուժերի հաշվեկշռի կտրուկ փոփոխության և Ռուսաստանի ազգային անվտանգության դեմ նոր մարտահրավերի առաջացման անցանկալիությամբ: Ռուսաստանի և Իրանի պարագայում նման միջամտությունը դիտվելու էր որպես մարտահրավեր՝ հաշվի առնելով այս երկրներում զգալի թվով թուրքախոս բնակչության առկայությունը: Թուրքիայի ռազմական միջամտությունը հայ-ադրբեջանական հակամարտության ոլորտում վտանգավոր հակամարտության նախադրյալ էր ստեղծելու Ռուսաստանի և Թուրքիայի միջև «Սառը պատերազմի» ավարտից հետո սկսված նոր աշխարհաքաղաքական միջավայրում:

Թուրք իշխանավորները գիտակցում էին, թե որքան վտանգավոր է անմիջական միջամտությունը Ղարաբաղյան հակամարտությանը, քանզի թե՛ Ռուսաստանը և թե՛ միջազգային հանրությունը դատապարտելու էին թուրքական նախաձեռնությունները, որոնք էլ ավելի էին սրելու իրավիճակը տարածաշրջանում: Սուլեյման Դեմիրելը հանդես եկավ հայտարարությամբ և նշեց, որ «Թեև թուրքերը չեն կարող անտարբեր մնալ ադրբեջանցիների նկատմամբ, սակայն Թուրքիայի ցանկացած անզգույշ քայլ կարող է հանգեցնել նրան, որ ամբողջ աշխարհը նեցուկ կանգնի Հայաստանին»:

Չնայած մարշալ Ե. Շապոշնիկովի ազդու զգուշացմանը, Թուրքիան չդադարեց ռազմական և ռազմատեխնիկական օգնության տրամադրել Ադրբեջանին: Արևմտյան զինվորական տեսաբանների կարծիքով, 1992թ. ամռանը Հյուսիսային Արցախում ադրբեջանական ուժերի ռազմական հաջողությունները պայմանավորված էին մարտական գործողություններին թուրք կամավորների մասնակցությամբ: Ադրբեջանական ուժերի ժամանակավոր հաջողությունները պայմանավորվում էին նաև թուրքական բանակի գեներալ մայոր Հալիլ Քալայչիի հրամանատարությամբ ծրագրված և իրականացված գործողություններով, ինչպես նաև թուրքական ռազմական խորհրդականների ակտիվորեն ներգրավվածությամբ նոր հարձակողական գործողություններ ծրագրելու ժամանակ:

1992թ. մայիսին Թուրքիայի վարչապետի տեղակալ Հյուսամեթթին Չինդորրաքի Բաքու կատարած այցի ժամանակ Հ. Քալայչին նշանակվել էր Ռազմական կցորդի «շատ կարևոր» պաշտոնում: Թուրք զինվորական մասնագետները, ռուսական հեռուստատեսության պնդմամբ, զգալի մասնակցություն էին բերել նաև 1992թ. օգոստոսի սկզբներին Լաչինի մարդասիրական միջանցքի վերացմանն ուղղված ռազմական գործողության ծրագրմանն ու իրականացմանը:

Այս ամենի պարագայում պատահական չէր նաև այն, որ 1993թ. մարտին Ռուսաստանի դաշնության պաշտպանության նախարար Պավել Գրաչովը ռուս-թուրքական ռազմական համագործակցության զարգացման նախապայման համարեց Անկարայի կողմից Բաքվին տրամադրվող ռազմական օգնության դադարեցումը:

Պետք է ընդգծել, որ Ղարաբաղում, պատերազմական գործողությունների ընթացքում, Ադրբեջանը բացահայտ չդիմեց թուրքական կողմին՝ ռազմական ներխուժման ակնկալիքով: Շուշիի ազատագրումից հետո Ադրբեջանի խորհրդարանի փոխխոսնակ Թամերլան Գարաևը շեշտեց, որ դեպքերի նման զարգացման դեպքում Ադրբեջանի ղեկավարությունը անհապաղ ռազմական միջամտության խնդրանքով կդիմի Թուրքիային՝ «Հայաստանի ագրեսիան կասեցնելու համար»: Սակայն, դրա կարիքն ամենևին էլ չկար, քանզի Անկարան Ադրբեջանին ցուցաբերում էր բավարար օգնություն, այդ թվում՝ նաև ռազմական: Կարևորելով Անկարայի դերը՝ Բաքուն մյուս կողմից հետամուտ էր օգտագործել Թուրքիային միջազգային հանրության կարծիքն իր կողմը թեքելու համար:

(Շարունակելի)

ՀԱՅԿ ԴԵՄՈՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԴԱՎԻԹ ԱՍԱԼՅԱՆԻ

ՆԱԽՆԻՆԵՐՆ ՈՒ ԻՐ ՓՆՏՐՈՒՔԸ

Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառակի Խաստուր գյուղից 1829-ին պապերս տեղափոխվել են Շիրակի դաշտավայրի Զվարճաճոր գյուղը (այժմ՝ Փանիկ): Հայրս փանիկցի է, մայրս՝ ղափանցի: Ես ինձ փանիկցի եմ համարում, չնայած, որ ծնվել եմ Երևանում: Հաճախել եմ թիվ 100 միջնակարգ դպրոցը և միաժամանակ՝ երաժշտական դպրոցի դաշնամուրի և շվիի բաժինը: Ուսումս շարունակել եմ Երաժշտական ուսումնարանի ջազային բաժնում՝ դաշնամուրի մասնագիտությամբ, որն էլ ավարտելուց հետո ընդունվել եմ Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ժողովրդական գործիքների բաժինը՝ շվի մասնագիտությամբ: Տարիների փնտրտուքս է եղել գտնել դասական և ժողովրդական երաժշտությունների, համաշխարհային և հայ ազգային մշակույթների համադրությունը: Ժողովրդական և դասական երաժշտությունները մինչ օրս ուղեկցում են ինձ:

ԲԵՄԱԿԱՆ ՉԱՆԱՊԱՐՀՆ ՈՒ ՎԱՐՊԵՏԸ

Հանձին իմ տեսած վարպետների՝ «բեմի մարդ» հասկացությունն ինձ համար պատանի հասակում մեծ ու լուրջ է եղել, քան այսօրվա իրականությունում: Վարպետներ, անշուշտ, ունեցել եմ և ունեմ: Պատանի հասակում անձնական շփում չեմ ունեցել Ռուբեն Հախվերդյանի հետ, բայց դաստիարակվել եմ նրա երգերով: Դա մի շրջան էր, երբ երգը կարող էր յուրաքանչյուրին գցել տարերքի մեջ: Մարդը կարող էր երաժիշտ չլինել, բայց այդ շրջանի երգերը օգնում էին նրան ապրել...:

Ես ինձ բեմի մարդ չեմ համարում. բեմական ճանապարհ չեմ ունեցել: Պարզապես, երգահան-երգիչ եմ և երաժշտական ասպարեզ եմ մտել երգ գրելով, որոնք երկար ժամանակ կատարում էին իմ ընկերները: 1990-ականներին շատ երգեր ունեի՝ նվիրված զոհված ու ողջ իմ մարտական ընկերներին, որոնց լուսաբանումը բեմական կյանքիս սկիզբը դարձավ: Երբ ընկերներով հավաքվում էինք, երգում էի նրանց համար: Հիմա էլ տարբերություն չկա՝ ընկերներիս համար եմ երգում, թե հանդիսատեսի:

Ճակատագրի բերումով «Հոգու հնչյունը» երգեցի, որը դարձավ իմ առաջին կատարումը: Տեքստերը ոչ միշտ են իմը. հիմա գտնում եմ, որ մեր դասական գրողներից օգտվելն ավելի ճիշտ է, քանի որ այն, ինչ այսօր մի կերպ ծռմռելով, փորձում ենք տեղը դնել, և այն միտքը, որ ուզում ենք նորովի ասել, մեր մեծերը վաղո՜ւց ասել են:

«ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ» ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ

2000-ից «Սայաթ-Նովա» ազգային երգի ամենամյա մրցանակաբաշխությունը սկսվեց, որին մասնակցել եմ և մի տարի էլ հաղթել: Չհաղթեցի ինչպես սպորտում. հաղթանակի զգացողության ընդհանուր մթնոլորտ էր ստեղծվել. մեկը մյուսից չէր նեղանում: «Սայաթ-Նովա» երաժշտական այս մրցույթ-ծրագիրը կարողացել էր ինչ-որ չափով լցնել վերջին շրջանում հայ երգի մշակութային դատարկությունը: Բավականին լավ էր կազմակերպվում, լի էր ջերմությամբ, և տարեց տարի երգերի որակը լավանում էր: Շատ ստեղծագործություններ են տպավորվել իմ մեջ: Վերջին մրցույթի ժամանակ առաջարկեցի, որ «Սայաթ-Նովան» մրցույթ չդարձնենք. ի՞նչ պիտի ստուգեն, խոսքե՞րը, երաժշտությո՞ւնը: Եթե անկեղծությունը, ապա ամենաանկեղծ ու լավ երգը երեխայի ձայնն է: Եթե մասնագիտական հմտությունները, ապա բոլորը կարող են այդ ուղղությամբ ջանք թափել և որոշակի արդյունքների հասնել:

Ցավոք, մի քանի տարի անց, անհասկանալի պատճառներով, այդ գեղեցիկ նախաձեռնությունը դադարեցվեց:

Մշակութի ասպարեզում գոնե մեր հոգևոր հացը՝ հայ երգը, պիտի մաքուր պահենք: Հայ մշակույթի այդ հացն է, որ պիտի պատվով պահենք:

ՇՈՒՇԻԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ ՈՒ «ՉՏԵՐ» ՋՈԿԱՏԸ

Շուշիի հաղթանակի օրը Գորիսում էինք, մեր մարտական փոքր գործողությունը հաղթական ավարտ ունեցավ, ինչից էլ ոգևորված նստեցինք փակ մեքենան... և, մեր հրամանատարը՝ Սմբատ Հակոբյանը, որ երկու օր մեզ հետ չէր, անակնկալի բերելով մեզ, մեքենայի դուռը բացեց ու ասաց. «Տղե՛րք, աչքերդ լույս»: Մտածեցինք, որ մեր հաղթանակի համար է, շնորհակալություն հայտնեցինք: Ասաց. «Չէ՛, տղերքը Շուշին են գրավել»: Այդ պահը նկարագրել չեմ կարող...: Մեր ջոկատը 16-18 տարեկան տղաների ջոկատ էր, «ճտերի» ջոկատ էին ասում: Գիտեինք, որ մեր մեծերը՝ Դուշման Վարդանի ջոկատը, այնտեղ էր՝ Շուշիում: Առաջին անհանգստությունն այն էր, թե տղաներից ում, ինչ էր պատահել: Պարզվեց, որ մեր ավագ ընկերներից զոհեր չունեինք, բայց Հայոց բանակը զոհեր ուներ.... Հավերժ փառք նրանց:

ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ, ԱՐՎԵՍՏԱԳԵՏ, ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր մեծ թվով արվեստի գործիչներ ստեղծագործում են այն ուղղությամբ, ինչ լսարանը՝ ունկնդիրն է պահանջում: Ինչո՞վ ենք հետո հատուցելու: Դրա պատասխանը չունեմ, չգիտեմ: Ժամանակին նույնպես այդ նույն շահադիտականությունն է գործել, սակայն մեր արվեստի կարկառուն դեմքերը այդ քայլին չեն դիմել, ստեղծել են այն, ինչ իրենք են ցանկացել և իրենց ակունքներն են հուշել: Չեմ ուզում, որ համեմատվենք ՆՐԱՆՑ հետ և մեզ դնենք այն մարդկանց տեղը, թե իբր մշակույթով ենք զբաղվում. մենք մեր ապրելակերպն ենք բարելավում: Ի վերջո, մենք մեր թերությունները հո՞ լավ գիտենք:

Վերջերս Գյումրիում համերգային շրջագայության էինք, հանդիսատեսը նախապես տեղյակ էր, որ Ռուբեն Հախվերդյանն էլ ելույթ ունենալու... դահլիճը լեփ-լեցուն էր: Դա ուրիշ մթնոլորտ էր, ուրիշ՝ հանդիսատես...:

Ոչ ոքի մեղադրել չեմ ուզում, մատչելին հեշտ է տարածվում: Հանդիսատեսը գալիս է այսօրվա կիսատ-պռատ փայլատակող աստղերին լսելու: Երեխաներն այդ երգերը, որ սիրում են, մեղավոր չեն: Երբ փորձում ես խոսել նրանց հետ, ամենևին չխամրեցնելով մերօրյա «աստղերի փայլը», ամեն դեպքում, նրանք քեզ հասկանում են:

Երբ դու քեզ չես խաբում, դա անպայման տեղ է հասնում, իսկական հանդիսատես ձևաճում...:

Զրույցը վարեց ՆԱՆԵ ՍԵՎԱՆԸ



ԱՐԹՈՒՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ. ԹԱԼԻՇՑԻ ՔԱՋՈՐԴԻՆ

Արցախի Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղում՝ Ժորա Դանիելյանի ընտանիքում, 1962-ի հունիսի 2-ին նորածնի ճիչ լսվեց՝ լույս աշխարհ եկավ նրանց որդին՝ Արթուրը, ով Դանիելյանների ընտանիքը լցրեց մեծ ջերմությամբ ու սիրով: Եվ ո՞վ կմտածեր, որ մի օր պայթելու էր պատերազմը և նա պիտի մեկներ պաշտպանելու հայրենի հողն ու ջուրը թշնամուց, որ նրան կյանք էին տվել և պարգևել երջանիկ ու անհոգ մանկություն:

Արթուրի հայրը գյուղում հարգված մեխանիզատոր էր, մայրը՝ բժշկուհի:

1979-ին ավարտելով տեղի միջնակարգ դպրոցը՝ նա գալիս է Երևան և ուսումը շարունակում տեղի թիվ 10 պրոֆտեխուսումնարանում: 1980-82թթ. ծառայել է Խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո նա տեղափոխվել է Հրազդան քաղաք և աշխատանքի անցել «Հրազդան մեքենա» արտադրական միավորումում: Ավանդապահ, հայրենասեր երիտասարդը 1983-ին ընտանիք կազմեց, որն ամրացավ երկու զավակների ծնունդով:

Երբ սկսվեց Արցախյան շարժումը, Արթուրը չվարանեց ու չերկնչեց. քաջարի շատ հայորդիների պես նա էլ համալրեց շարժման ակտիվ մասնակիցների շարքերը: Հայաստանաբնակ արցախցիների հետ միասին սկսեցին բարոյական ու նյութական աջակցություն ցուցաբերել հայրենակիցներին: Հայաստանի մի շարք բնակավայրերում ստեղծվեցին հայաստանաբնակ արցախցիների համայնքներ և ճշգրտվեցին նրանց խնդիրներն ու անելիքները: 1988-89թթ. Արթուրը մասնակցեց հրազդանաբնակ թալիշցիների համայնքի ստեղծմանը: Սակայն Արցախում այդ տարիներին հայ ազգաբնակչության թվակազմի պահպանման հիմնախնդիր կար, ինչը կարող էր լուծվել նոր ընտանիքների ստեղծման ու վերաբնակեցման միջոցով: Արթուրը, գիտակցելով այդ ամենի անհրաժեշտությունը, 1989-ին ընտանիքով մշտական բնակության է տեղափոխվում Թալիշ:

Հայրենի գյուղին ազերի ոսոխից վտանգ էր սպառնում. անհրաժեշտ էր ստեղծել Թալիշի ինքնապաշտպանության կամավորականների ջոկատ, Արթուրը ձեռնամուխ եղավ ջոկատի ստեղծմանը և դարձավ առաջին կամավորականներից մեկը: Վանիկ Օհանյանի հրամանատարությամբ գործող մարտական ջոկատում Արթուրը մասնակցեց մի շարք պաշտպանական մարտերի, աչքի ընկավ թալիշցուն բնորոշ խիզախությամբ: Նա նաև հմուտ հետախույզ էր: Արթուր Դանիելյանի անձնուրաց մասնակցությամբ թշնամու թիկունքում իրականացվեցին բազում հետախուզություններ և ականապատման աշխատանքներ:

1992-ի ապրիլի 18-ն էր, օրը՝ մռայլ ու մառախլապատ: Արթուրը մի փոքրիկ խմբով Ղահիլարի ուղղությամբ անցել էր հետախուզության, և դարանակալ թշնամին հանկարծակի հարձակվել է տղաների վրա: Մարտիկները քաջ գիտակցել էին, որ դիրքերը զիջել չէր կարելի: Ուստի, անհրաժեշտ էր կռվել մինչև ջոկատի մյուս տղաները տեղ կհասնեին: Եվ պահը նրան հասավ, որ Արթուրը, կրակն իր վրա վերցնելով, հնարավորություն ստեղծեց ընկերներին առաջանալ ու դիրքավորվել: Շուտով մարտական ընկերները տեղ հասան և միացյալ ուժերով հետ շպրտեցին թշնամուն. հաղթեցին: Բայց, ավա՜ղ, Արթուրն արդեն չկար և կյանքը նրան այդ հաղթանակի բերկրանք վայելելու հնարավորությունը չընծեռեց: …Սգում էին հարազատները, ընկերները, ողջ Թալիշ գյուղը, քանզի կորցրել էին մի զավակի, ում ոչ միայն մտահոգում էր իր ընտանիքի հոգսերն ու պաշտպանությունը, այլև համագյուղացիների ու ողջ Արցախի:

Մարտական ընկերները Արթուրի գերեզմանի մոտ երդվեցին վրեժ լուծել թշնամուց...

Հրազդան քաղաքում՝ հերոսի տան բակում, բնակիչների նախաձեռնությամբ հուշաղբյուր է կառուցվել՝ ի հիշատակ քաջարի Արթուրի:

ՄԿՐՏԻՉ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՇՈՒՐՃՆ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՐԿԱՎՈՐ Է ԵՐԵՎԱՆԸ ԳՐԱՎԵԼ

Վաշտի հրամանատարի տեղակալ Սլավիկ Վերդյանը հաճախ էր մասնակցում հակամարտող կողմերի բանակցություններին՝ որպես թարգմանիչ: Աղդամի գրավումից արդեն անցել էր մեկ ամիս: Օգոստոսյան այդ օրը մեր տղաները մի փոքր շուտ էին եկել ժամադրավայր և ստիպված էին սպասել: Պետք է կատարվեր գերիների փոխանակություն: Շուտով երևացին նաև ազերիները: Սլավիկը զարմացավ, երբ ազերիների մեջ նկատեց իր համակուրսեցի Ակիֆ Դադաշևին: Միասին էին ուսանել Բաքվի պետհամալսարանի Ֆիզմաթ ֆակուլտետում, մեկ տարի միասին ապրել հանրակացարանի նույն սենյակում: Թեթևակի ողջունեցին իրար գլխով: Երբ ավարտվեց պաշտոնական մասը, երկուսն էլ ակամա մոտեցան: Սկսվեց անկաշկանդ մի զրույց: Ոչ մի խոսք պատերազմի մասին: Կարծես չէր եղել Սումգայիթը, Խոջալուն: Հիշելու շատ բան կար:

- Սլա՛վ, քթի օղի ունե՞ս,- անուղղակի հարցրեց Դադաշևը:

Նրա մայրը ռուս էր, հայրը՝ ազերի, ինքը, ինչպես նաև իրենց ամբողջ ինտերնացիոնալ կուրսը, անտարբեր չէր օղու նկատմամբ: Ստանալով դրական պատասխան՝ Դադաշևը վրա բերեց.

- Ես էլ վոբլա ունեմ:

Զրույցը դարձավ անկաշկանդ: Վերհիշեցին աղջիկներին, միասին այցելությունները Բաքվի լավագույն կինոթատրոններից մեկը՝ Երկաթուղայինների մշակույթի ակումբ:

- Հիմա էլի կազմակերպվո՞ւմ են կինոլեկտորիումներ,- հարցրեց Սլավիկը:

- Երևակայի որ չէ, չնայած մենք լույս ունենք,- ծիծաղեց Դադաշևը:

Արդեն մոտենում էր բաժանման պահը, երբ Դադաշևը անսպասելիորեն փոխեց խոսակցության թեման.

- Սլա՛վ, ինչ էլ ուզում է գրավեք, այնուամենայնիվ Շուշին պետք է ետ տաք:

- Իսկ ի՞նչ է Երևանը արդեն գրավել եք,- հանգիստ հարցրեց Սլավիկը, որը կարծես սպասում էր նման կտրուկ շրջադարձի:

- Ի՞նչ կապ ունի այստեղ Երևանը,- զարմացած հարցրեց Դադաշևը:

- Գիտե՛ս Ակիֆ, կա մի այսպիսի պատմություն. «1805թ. դեկտեմբերին՝ Աուստեռլիցի ճակատամարտի նախօրյակին, Նապոլեոնին է հանդիպում ռուսական ցարի պատվիրակը՝ գեներալ Դոլգորուկովը և Ալեքսանդր 1-ի անունից պահանջում հեռանալ Բելգիայից:

- Ողորմած Տեր,- բացականչում է Նապոլեոնը,- Բելգիան պահանջելու համար դուք պետք է գրավեք Փարիզը, մինչդեռ մենք խոսում ենք Փարիզից 800 մղոն հեռու գտնվող Մորավիայում»:

- Այնպես որ, սիրելի՛ Ակիֆ, Շուշին պահանջելու համար դուք Երևա՛նը պետք է գրավեք...

- Է՛հ Սլավ, հարկավոր է մի ուրիշ բան մտածել,- մտախոհ ասաց Դադաշևը և երբեմնի մտերիմ ընկերները բաժանվեցին...

Հ. ՄԱՆՋՅԱՆ


Ստեփան Ծաղիկյան, Պետրոս Տեր-Պողոսյան

ՀԱՅ ՎՐԻԺԱՌՈՒՆԵՐ.
ՍՏԵՓԱՆ ԾԱՂԻԿՅԱՆ (1886-193?)

Խոտորջուրի Մոխրկուտ գյուղում է ծնվել Ջեմալ Փաշայի ահաբեկման կազմակերպիչ Ստեփան Ծաղիկյանը: Նախնական կրթությունը ստացել է Տրապիզոնում: 1908 թվականին նա մտել է Հայ Հեղափոխական Դաշնակցության շարքերը: 1914 թվականին, որպես կամավորական առաջին ջոկատի մարտիկ, Սեպուհի՝ Արշակ Ներսիսյանի վաշտում, մասնակցել է Թուրքիայի դեմ մղվող ռազմական գործողություններին՝ Սալմաստ - Դիլման - Բաշկալե - Վան ուղղությամբ:

Հայաստանի առաջին Հանրապետության օրոք՝ 1918-20թթ., ծառայել է հայկական բանակում: Հայաստանի խորհրդայնացումից հետո ձեռնամուխ է լինում հայ ժողորդի դահիճներից մեկի՝ Ջեմալ փաշայի ահաբեկմանը: Հետագա տարիներին Ստեփան Ծաղիկյանը մեծ օգնություն է ցուցաբերել հայ քաղաքական բանտարկյալներին: Այդ ճանապարհին էլ ձերբակալվել է ու աքսորվել Սիբիր: Առ այսօր անհայտ է նրա հետագա ճակատագիրը: Ենթադրվում է, որ զոհվել է աքսորավայրում:

ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ԱՀԱԲԵԿՈՒՄԸ

1922 թվականին մի խումբ խոտորջուրցիներ Սերոբ Ղուբլարյանի հացի փռում հավաքվում են խորհրդի և մահվան դատապարտում, Արևելքի ժողովուրդների հերթական համագումարին մասնակցելու համար Ստալինի հրավերով Թիֆլիսում գտնվող, Ջեմալ Փաշային՝ Հայոց մեծ եղեռնի դահիճներից մեկին: Ահաբեկման կազմակերպումը հանձն է առնում Ստեփան Ծաղիկյանը:

Հունական դիցաբանության վրեժի աստծո անվամբ՝ «Նեմեսիս» գործողությունը իրագործեցին Ստեփան Ծաղիկյանի հայրենակիցներ Արտաշես Գևորգյանը, Պետրոս Տեր-Պողոսյանը և արցախցի Մելիք-Շահնազարյանը՝ հուլիսի 25-ին՝ օրը ցերեկով, ՉԿ-ի շենքի մոտ գնդակահարելով Ջեմալ Փաշային և նրա երկու թիկնապահներին:

Ցավով ավելացնենք, որ ահաբեկումից 15 տարի անց՝ 1937թ., Պետրոս Տեր-Պողոսյանն ու Արտաշես Գևորգյանը գնդակահարվել են ՉԿ-ի կողմից: Վերջինս 1937թվականի հուլիսի 8-ին ՉԿ-ի բանտից տարվել է Զանգվի ձոր ու գնդակահարվել իր մտերիմ ընկերոջ՝ Ակսել Բակունցի հետ:

Արդար վրեժխնդրության մղումով են հայ վրիժառուները գնդակահարել արյունարբու Ջեմալին, այդ է վկայում նաև Արտաշեսի օրագրության հետևյալ հատվածը. «Այդ պահին, երբ այնքան էինք մոտեցել Ջեմալին, և հաստատ էր, որ նրա համար այլևս ոչ մի փրկություն չկա, այդ վեհ վայրկյանին՝ այն գիտակցությունը, որ մեզ՝ ինձ ու Տեր-Պողոսյանին գերագույն բախտ է վիճակվել ի կատար ածել մեր միլիոնավոր նահատակների վերջին կամքը, նրանց կտակը՝ պատժել, վրիժառու լինել ջեմալներից, էությունս համակեց մի անպատմելի, անհուսորեն հաճելի երանությամբ...: Աչքերս վառվեցին մի եզակի, երկնային ջերմությամբ...: Ու քույրս, Ուրֆայի մոտերքը գազանաբար հոշոտված, դեռ 16 տարին չլրացած մեր չքնաղ Անհիկը, աչքերիս առաջ է կանգնում այդ պահին, ձեռքը ծոցին, գլուխը խոնարհ... իմ նահատակված քույրը... Եվ ես գոչում եմ՝ փաշա՛, փաշա՛, հիշի՛ր Ուրֆան ու Դեր-Զորը...»:

ՀԱԿՈԲ ՄԱՆՋՅԱՆ

ՂԱՐԱԲԱՂԸ ԵՐԲԵՔ ՉԻ ՀԱՄԱՁԱՅՆՎԻ ԼԻՆԵԼ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱԶՄՈՒՄ

ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը Երևանում հանդիպեց ԵԱՀԿ գործող նախագահ Միգել Անխել Մորատինոսին: Հանդիպումից հետո նա հայ և իսպանացի լրագրողներին ներկայացրեց ԼՂՀ մոտեցումները հակամարտության կարգավորման վերաբերյալ. «Առաջին և հիմնական հարցը ԼՂՀ-ի կարգավիճակի հարցն է, եթե այս հարցի վերաբերյալ համաձայնություն չկա, մնացած բոլոր հարցերը քննարկելն անիմաստ է: Սա է մեր մոտեցումը: Լեռնային Ղարաբաղը երբևէ չի համաձայնի լինել Ադրբեջանի կազմում: Լեռնային Ղարաբաղը չի հրաժարվելու իր անկախությունից: Մնացած հարցերը կարող են լինել օրակարգային և մենք պատրաստ ենք քննարկել»:

Ինչպես նախկին բոլոր հանդիպումներում, այս անգամ էլ Ա. Ղուկասյանը բարձրացրել է բանակցություններին ԼՂՀ մասնակցության հարցը. «Սա դեստրուկտիվ ֆորմատ է՝ Հայաստան-Ադրբեջան, և տրամաբանական չէ: Խոսքը ԼՂ ժողովրդի ճակատագրի մասին է, և անհասկանալի է, որ ԼՂ-ն անմիջապես չի մասնակցում բանակցային պրոցեսին»:

Կարգավորման մոտալուտ հեռանկարների նկատմամբ միջազգային չափազանցված լավատեսությանը Ա. Ղուկասյանը հանգիստ է վերաբերվում. «Ոչ մի անձ, ոչ մի անհատ, ոչ մի քաղաքական ուժ ի վիճակի չէ լուծել Ղարաբաղի հարցը, առանց Ղարաբաղի ու Հայաստանի ժողովրդի համաձայնության: Դրա համար մենք հանգիստ ենք: Այս արհեստական աժիոտաժը ինչ-որ տեղ անհասկանալի է: Հիշենք, քանի անգամ են եղել դեպքեր, երբ շատերին թվում էր, որ եթե ոչ այսօր, ապա վաղը հարցը կլուծվի: Եվ վերջում պարզվում էր, որ դա չի համապատասխանում իրականությանը»:

«Ամեն դեպքում, ես չեմ պատկերացնում, որ որևէ մեկը ժողովրդի քիկուճքում ի վիճակի լինի ինչ-որ որոշում ընդունել կամ ստորագրել մի փաստաթուղթ, որը չի բխում ժողովրդի շահից: Համոզված եմ, որ այդպիսի բան չի լինելու: Բանակցությունը պետք է անցնի կոնֆիդենցիալ պայմաններում՝ դա ընդունելի է, բայց եթե կողմերը գան համաձայնության, ապա դա ներկայացվելու է թե՛ Ղարաբաղի, թե՛ Հայաստանի ժողովուրդներին, քաղաքական ուժերին, և որոշումը մենք բոլորս ընդունելու ենք միասին: Մենք ունենք Սահմանադրություն, խոսքը ԼՂՀ-ի մասին է, և ոչ ոք չի կարող մեզ պարտադրել մի որոշում, որը չի բխում մեր ժողովրդի շահերից,- ասաց ԼՂՀ նախագահը:

Արկադի Ղուկասյանը վստահ է, որ ով էլ ընտրվի ԼՂՀ նախագահ ավելի զիջողամիտ չի լինի և, ընդհանուր առմամբ, ոչինչ չի փոխվի ԼՂՀ դիրքորոշման մեջ, որովհետև այն կախված չէ անհատների դիրքորոշումից. «Դա Ղուկասյանի դիրքորոշումը չէ, այլ Ղարաբաղի ժողովրդի: Ես արտահայտում եմ Ղարաբաղի ժողովրդի դիրքորոշումը: Ես համոզված եմ, որ ցանկացած մեկը, ով նախագահ կլինի, ստիպված կլինի հաշվի առնել ժողովրդի կարծիքը»: Միաժամանակ նախագահը փաստեց, որ Ղարաբաղի դիրքորոշումը կոշտ համարել չի կարելի. «Ես համարում եմ, որ Ղարաբաղի դիրքորոշումը կառուցողական է»:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(08. 06. 2007թ., «Ազգ»)

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ՊԵՏՔ Է ՇԱՐՈՒՆԱԿՎԻ. ՀԱՅԵՐԸ ՊԱՅՔԱՐԻ ԱՅԼ ԵՂԱՆԱԿ, ԱՅԼ ՉԱՆԱՊԱՐՀ ՉՈՒՆԵՆ ԵՎ ՉԵՆ ԷԼ ՈՒՆԵՆԱ

Հայաստանի Հանապետություն. Հայության հույսը Խորհրդային Հայաստանն է. այսպիսի նշանաբան կար Խորհրդային տարիներին, և իսկապես աշխարհասփյուռ հայության համար կար մի Հայաստան: Իսկ նորանկախ Հայաստանի Հանրապետության օրոք նրանց հույսերը չէի ասի թե աճեցին, իհարկե տնտեսական, մշակութային կապերը ուժեղացել են, բայց Հայաստանը չունի անվտանգության այն երաշխիքները, որ ուներ խորհրդային տարիներին, երբ ոչ ոք Հայաստանի նկատմամբ ոտնձգություն անել չէր կարող:

Հայաստանի Հանրապետության ստեղծումը հայ ժողովրդի մեծագույն ձեռքբերումն է: Անկախություն հենց այնպես չի ձեռքբերվում, դա դժվար գործընթաց է: Բայց պետք է մշակենք մի ռազմավարություն, որ կարողանանք այդ կոմպլեմենտար քաղաքականություն ասվածը ոչ թե վերածենք ձևի, այլ՝ գործոնի, մեխանիզմի, ինչն օգուտ կբերի մեր երկրին ու մեր ժողովրդին: ՀՀ-ի հիմնախնդիրները շատ են, անհամեմատ՝ բարդ ու խճճված, քան կարծում ենք, որովհետև այսօր էլ Հայաստանի բախտը իրենից կախված չէ, ուրիշներն են որոշում մեր անելիքը: Կարծում եմ՝ ՀՀ-ի կառավարությունը պետք է ստեղծի միջազգայնագետների իրական (ոչ թե ձևական) մի խումբ՝ միջազգային գործունեության փորձ ունեցող մարդկանց խորհուրդ և լրջորեն մշակի Հայաստանի արտաքին քաղաքականության ռազմավարությունը: Թե չէ՝ կույր-կույր ընտրութունից ընտրություն գնալով՝ մի օր ոտներս քարին կդիպչի ու կ'ընկնենք: Բնավ կարևոր չէ՝ որ կուսակցությունը, կամ առաջնորդը, քանզի ոչինչ չի փոխվելու: Հարցն ավելի շատ պետական մոտեցում է պահանջում, քան՝ կուսակցական:

Արցախ. Արցախյան ազատագրական պայքարի ընթացքում 10.000 մարդ է սպանվել, և այսօր հարցականի տակ են դնում ԼՂՀ-ն մնալո՞ւ է Հայաստանին, թե՞ ոչ: Ադրբեջանը փորձում է հզորանալ, Թուրքիան նրան օգնում է: Մենք օգնող չունենք: Հիմա ի՞նչ է լինելու մեր տղաների թափած արյունը...: Աստված տա, սխալվեմ և կարողանանք Ղարաբաղի անկախությունը պահպանել ու ամրագրել: Այն սպառնալիքները, որ այսօր մեր գլխին են թափվում, որոնց փորձում ենք ընդդիմանալ, դրանք մի օր կարող են իրականություն դառնալ: Դեռ այն ժամանակ ասում էի, որ Ղարաբաղի հարցի դիվանագիտական-պայմանագրային համաձայնությունը հետաձգելը կոպիտ սխալ է: Այն ժամանակ պիտի ԼՂՀ-ի հարցը լուծվեր, Ադրբեջանը ճար չուներ, կամովին տալու էր Ղարաբաղը, որովհետև թույլ էր ու ողորմելի: Չգծգեցինք և հիմա էլ կանգնել ենք փաստի առաջ: Ասեմ, որ անկախ Հայաստանի պայմաններում հնարավոր էր ստեղծել դիվանագիտական և քաղաքական գործոններ, որոնք Ադրբեջանին կպարտադրեին Ղարաբաղի հարցում զիջումների գնալ:

Հողը տեր է սիրում, առանց տեր այն պահելն անհնար է...: Մինչև հիմա չենք կարողանում բնակեցնել ազատագրված տարածքները: Հողն անտեր երկար չի մնա, մի օր նոր տեր կգա: Ոչ մի պետություն, այնքան անկազմակերպ չի եղել իր ազատագրած տարածքը բնակեցնելու հարցում, որքան մեր պետությունը: Խորհրդային շրջանում այստեղ մոտ երկու անգամ ավելի հայ էր ապրում, քան այսօր: Այն կարծիքին չեմ, թե Ղարաբաղի հարցը պատերազմով լուծվել է: Այն դեռ քարոզչական և դիվանագիտական ջանքերի կարիք ունի...:

Սփյուռք. Սփյուռքը պետք է պահենք և ուժեղացնենք, այն թուլացնելու իրավունք չունենք: Չի կարելի ասել, որ Հայաստանը ինքնուրույն է, եկեք ամեն ինչ անենք, որ սփյուռքահայերը գան Հայաստանում ապրեն: Երկքաղաքացիությունը Սփյուռքին չի օգնի, հակառակը՝ կքայքայի: Գաղթօջախներ ունենք (Ամերկա, Ռուսաստան, Ֆրանսիա, Սիրիա, Լիբանան), որոնք պետք է ամուր պահենք: Ճիշտ չէ նաև Հայաստանի ազգաբնակչության հաշվին Սփյուռքը մեծացնել. առանց այդ էլ Հայաստանից շատ մարդ է հեռացել: Սփյուռքն ուժեղացնելու հարցում անպայման պետք է ստեղծել ՀՀ պետական ծրագիր և մեխանիզմներ, այնտեղ պետական քաղաքականություն իրականացնելու համար: Չնայած որ խնդիրը բարդ է, և օտար պետությունների շահերի հետ բախումն՝ անխուսափելի: Ամուր պահելով Սփյուռքը՝ Հայաստանը պետք է ձգտի գաղթավայրերից առավելագույն շահ ապահովել, թե՛ քաղաքական, թե՛ բարոյական և թե՛ նյութական:

Ջավախք. ՀՀ-ն է Ջավախքի ճանապարհները կառուցել, որոշ դպրոցներ է նորոգել և նորոգում, այսօր էլ էլեկտրաէներգիայով է ապահովում: Կարծում եմ, ճիշտ կլինի, եթե այստեղ Սփյուռքն իր շինարարական ակտիվ գործունեությամբ միջամտի, ինչը հիվանդագին չի ընդունվի վրաց իշխանավորների կողմից: Ջավախքի համար պետական ծրագիր է պետք մշակել:

Հայկական հարցը, որպես միջազգային դիվանագիտության հարց, բարդ կառուցվածք ունի: Արևմտահայերին հնարավորություն տալ անվտանգ ինքնորոշվել և անվտանգ ապրել սեփական հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, ահա սա է Հայկական հարցը: Ամբողջական իմաստով Հայաստանը մասնատված է, և իր տարածքի 9/10-րդ մասն ուրիշների ձեռքին է, այստեղ Հայկական հարցը վերադառնում է իր նախնական վիճակին՝ տարածքային հարցին, որովհետև առանց տարածքային հարցի լուծման, Արևմտյան Հայաստանում ոչ մի հարց չենք կարող լուծել: Կա մի գործոն, որի ուղղությամբ վատ ենք աշխատում. դա քրդերի հարցն է, այսօր Արևմտյան Հայաստանը հիմնականում բնակեցված է քրդերով: Բուշ կրտսերը փորձում է քրդական ինքնավարություն ստեղծել, բայց չի ստացվում: Թուրքիայի 22-23 մլն քրդերը (4 մլն՝ Պոլսում) պայքարում են պետականություն ձեռք բերելու ուղղությամբ:

ԱՍՍԱՀՄ-ի տղաների իմաստությունը այն էր, որ նրանք փորձեցին Հայկական հարցը լուծել քրդերի հետ դաշնակցած. Արևմտյան Հայաստանում նրանց հետ ազատագրել տարածքներ: Այդ գործը, որ տապալվեց, պետք է նորից առաջին պլան մղվի: Բայց հիմա ստացվում է այնպես, որ բոլոր ճակատներով ուզում ենք հարցեր լուծել: Պետք է հարաբերության մեջ մտնել քրդերի հետ: Ճիշտ է, դա վտանգավոր է. թուրքերը դրա մեջ այլ բան են տեսնելու, իսկ մեզ համար այլ ելք չկա: Իհարկե, պետք է լավ կշռադատել, հարաբերությունների լավացումը ո՞ւմ հետ է ձեռնտու, քրդերի, թե թուրքերի: Քրդերը առայժմ մեզ էական վնաս տալ չեն կարող, իսկ թուրքերը օգուտ չէ, բայց վնաս հաճույքով կտան: Դրա համար պետք է հայ մասնագետ-քաղաքագետների լուրջ ուսումնասիրու-

թյուններ լինեն այս հարցում, թե ո՞ր ուղղությամբ գնալ Հայկական հարցը լուծելու խնդրում: Մի բան ակնհայտ է, շատ բան պետք է ենթարկել ՀՀ-ի շահերին, ինչը դրան չի օգնում, պետք է մի կողմ դնել, մինչև ժամանակը գա:

Հայոց ցեղասպանության հարցը բարձրաձայնում ենք, որովհետև աշխարհում կան բարոյական սկզբունքներ, որոնք պարտադիր են բոլորի համար, այդ թվում՝ թուրքերի: Հայոց ցեղասպանությունը, ի վերջո, աշխարհը և իրենք՝ թուրքերն էլ ճանաչելու են:

Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական դաշտում լուծել ասվածը բարոյա-քաղաքական, դիվանագիտական հարց է: Մինչ օրս միջազգային և ոչ մի դատարան ցեղասպանության հարց չի քննել: Հրեաների բախտը բերեց այս առումով, նախ Հոլոքոստը նոր էր եղել և Եվրոպայում էր: Ամերիկյան Մարշալի պլանը կար պատերազմից հետո, որով մեծ գումարներ տրվեցին Եվրոպային՝ ոտքի կանգնելու համար: Մարշալի պլանը հետևում կանգնած էր Հոլոքոստը ճանաչելու հարցը, դրա համար Գերմանիան ճանաչեց այն: Գերմանացիների ճշտապահությունը իրենց դեմ գործեց. նրանք գրանցում էին գույքը, բանկերում եղած գումարները և ամեն ինչ պահում արխիվներում: Իսկ մենք՝ հայերս, ունե՞նք նման փաստաթղթեր: Պետք է աշխատել, որ մարդկանց հիշողությունը չխամրի:

Ցեղասպանության հարցում (որով զբաղվում եմ և սա ինձ էլ է վերաբերվում) հայ պատմագրությունը իր սկզբնական քայլերն է անում: Հրեաները Հոլոքոստին նվիրված հսկայական գրականություն են ստեղծել, թուրքերը՝ Հայոց ցեղասպանության կեղծարարության, իսկ Հայաստանը... Այս առումով հետ ենք: Մկրտիչ Ներսիսյան, Ջոն Կիրակոսյան, Ռուբեն Սահակյան. հայ պատմաբանների այս եռյակն էր հայոց պատմագրության ողջ պաշարը: Պատմագրության, փիլիսոփայության, տնտեսագիտության, ազգագրության հսկայական պաշար են ստեղծել հրեաները: Հայերս դա չունենք: Հայ պատմագրության թևն է պետք ուժեղացնել և ոչ թե ՀՀ ԳԱԱ-ում պատմության երեք ինստիտուտ պահել, այդ երեքը պետք է միացնել ու ստեղծել գիտական հզոր կենտրոն: Հայ պատմաբաններին պետք է հնարավորություն տրվի գնալ արտասահման՝ օտար լեզուներ սովորելու, օտար արխիվներում աշխատելու: Մեր արխիվները քիչ են, ռուսականը՝ քիչ հնարավորությամբ, գերմանականը՝ որոշ քանակությամբ, ամերիկյանը՝ թերթերի, կցկտուր փաստեր: **Մենք իսկապե՛ս աշխարհին գիտականորեն պետք է ապացուցենք, որ Հայոց ցեղասպանություն եղե՛լ է և դա հայության մտքի հղացումը կամ երևակայության արդյունքը չէ՛:** Եթե գիտական որևէ բան արել ենք, ապա միայն՝ հայերեն, օտար լեզուներով քիչ բան ունենք:

Պատմագրությամբ ուշ եմ զբաղվել. համալսարանն ավարտելուց հետո մասնագիտությամբ չեմ աշխատել, անցել եմ կուսակցական աշխատանքի, հետո եկել հեռուստատեսություն, որտեղից էլ գնացել թոշակի: Ռադիոյում՝ արտասահմանի համար տրվող հաղորդումների ընթացքում պատրաստված նյութերի չնչին մասն էր օգտագործվում. ծավալային սահմանափակում կար: Ափսոսում էի դրանց...: Առաջին անգամ ինձ «Գարուն» ամսագիրը մի հոդված պատվիրեց՝ «Պատմության կեղծարարները», հետո Վահագն Դավթյանի պատվերը կատարեցի «Հայաստան» հանդեսի համար:

Իմ ունեցած նյութերի հիման վրա գրեցի «Գոյատևման պայքարի քառուղիներում», հետո «Քրդերը և Հայկական հարցը» գրքերը, տղայիս հետ գրեցինք «Ինձ բաի տվեք» գիրքը: Արևմտյան Հայաստան այցելելուց հետո գրեցի «Սև ծովից Վանա ծով» ազգագրական գործը: Երբ թողեցի աշխատանքս, գրեցի «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն»-ը, որը չորս հատորով էր նախատեսված, բայց արդյունքում տասնմեկ գիրք ստացվեց:



«Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն. Նախատակներ հավերժության» գիրքը գրեցի, որովհետև նշանակալի մի բան կա, որ ամեն մի ահաբեկչություն, ահաբեկչություն չէ: Ահաբեկչությունը կարող է լինել ազգային ազատագրական պայքար: Ահաբեկչությունը կարող է լինել պայքար ինչ-որ սուրբ նպատակների համար: Ահաբեկչությունը մեծ պետությունների կամքն է, նրանք դրա կիրառման կարիքը չունեն, նրանք բանակ ունեն, որով էլ լուծում են իրենց հարցերը, իսկ փոքր երկրները, որ բանակ չունեն, դիմում են այդ քայլին: Հանճին ԱՍԱԼԱ-ի տղաների, մանավանդ՝ Հարություն Թագուշյանի (Հակոբ Հակոբյան) հայ ժողովուրդը 20-րդ դարի կեսին ավելի մեծ երևույթներ չի ծնել: Հակոբ Հակոբյանը տաղանդավոր մարդ էր: Զարմանալի է. հայերը հերոսության հետ գործ չունեն, նրանք առևտրի մարդ են: ԱՍԱԼԱ-ի տղաները իսկապես հերոսներ են՝ մեծ նվիրյալներ, հանճին Ալեք Ենիգոմշույանի ու մյուսների, նահատակների ու ապրողների: Տղաները մարտական գործողություններից դուրս են եկել, ասպարեզում չեն երևում իրենց համեստ կեցվածքով, և դա չի նշանակում որ անելիք չունեն. պետք է զբաղվեն իրենց հոգեբանության, նվիրումի, գաղափարական քարոզչության տարածումով, մատաղ սերնդի դաստիարակությամբ: Միաժամանակ, թվում է, նրանց այստեղ մնալը սխալ է: Պայքարը պետք է շարունակվի: **ԱՍԱԼԱ-ի «ահաբեկչական» ազգային ազատագրական պայքարը պետք է շարունակվի, որովհետև հայերը պայքարի այլ եղանակ, այլ ճանապարհ չունեն և չեն էլ ունենա:** Կամ գնանք, մտնենք մի պետության փեշի տակ, կորցնենք մեր անկախությունը, կամ մեր գործողություններով հաստատենք, որ մարդ ենք, ազգ ենք, հայ ենք, և որ հային վայել չէ առևտրականի հոգեբանությունը:

Զրույցը վարեց ՋԵՄՄԱ ԲԱՂԴԱՂԱՆԸ

ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՄՆԵՐԸ ԻՆՉՊԵՍ ԷԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԱՐՎԵՍՏԻ ՄԱՐԴԿԱՆՑ

1914թ. նոյեմբեր, Ջուլֆա.

Կամավորական առաջին ջոկატի հրամանատար Զորավար Անդրանիկը, կամավորների մեջ տեսնելով հանրահայտ դերասան Վահրամ Փափազյանին, իսկույն նրան վերադարձրեց.

–Քո տեղը թատրոնն է, Վահրա՛մ...

...Սակայն օրեր անց անկսպելի Վահրամը միացավ կամավորական չորրորդ ջոկატին՝ դառնալով հրամանատար Քեռու (Արշակ Գավաֆյան) թիկնապահը:

Ռ. Մ.

ՀԱՅԸ

Արարիչը մեզ այստե՛ղ արարեց,
Սուրբ լեռնաշխարհի պահապան կարգեց,
Ու Հայ անվանեց ազգին նախաստեղծ՝
Որպես իր դրոշմ և անուն անեղծ:

Տեր ենք եղել միշտ մենք մեր աշխարհին,
Հազարամյակներ ծառայել Երկրին,
Լույս ու հավատ ենք սփռել մեր չորս դին՝
Ապավինելով Աստծո հետ ուխտին:

Այսօր էլ Հայը տեր է իր երկրին՝
Թե՛ պետությանը, թե՛ գերված մասին,
Տարիներ անցնեն, թե անգամ դարեր,
Միանալու է Հայրենիքը մեր:

Համայն հայության իղձերի համար
Սուրբ Արարատն է փարոս հավիտյան,
Մենք չենք դրժելու մեր ուխտն Աստծո հետ՝
Ի մի ենք գալու, որ հաղթանակենք:

ԱՐՇՈՒՆ ԽԱՆՋՅԱՆ
10-րդ դասարան

ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ



ՀՐԱՉ ԼՈՒՍԻՆՅԱՆ
1945-1982: ՆԱՀԱՏԱԿՎԵԼ Է ՍԻՐԻԱՅՈՒՄ:



ՍԱՐԳԻՍ ԳՅՈՒԼԽԱՆՋՅԱՆ
1955-1982: ՆԱՀԱՏԱԿՎԵԼ Է ԼԻԲԱՆԱՆՈՒՄ:
Մասնակցելով բազում գործողությունների՝ ցանկանում էր հայի անունն ու պատիվը բարձր պահել, որպեսզի հայը դադարի գաղթական լինելուց: Նահատակվեց Իսրայելի կողմից ՀԱՀԳԲ-ի ռազմակայանի ռմբահարման ժամանակ:

ՎԻԳԵՆ ԱՅՎԱՋՅԱՆ
1957-1983: ՆԱՀԱՏԱԿՎԵԼ Է ԼԻԲԱՆԱՆՈՒՄ:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
1961-1986: ՆԱՀԱՏԱԿՎԵԼ Է ԻՐԱՆՈՒՄ:
Աշխատելով զուսպ և լուռ՝ դարձավ իրանահայ երիտասարդության ջահակիրներից մեկը, որոնք, հանուն արդար և ոտնահարված իրավունքի վերականգնման, պատրաստ էին կատարել անկարելին: Նա նահատակվեց Իրանի քաղաքական բանտից ազատվելուց քիչ ժամանակ անց:



ԽԱՉԻԿ ՀԱՎԱՐՅԱՆ
1956-1983: ՆԱՀԱՏԱԿՎԵԼ Է ԼԻԲԱՆԱՆՈՒՄ:

A.S.A.L.A.

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՇԽԱՐՀԻ ՄԻԱԿԵՆՏՐՈՆ, ԱՆՄԻՋԱԿԱՆ ԵՎ ԱՆԵՐԵՎՈՒՅԹ ՂԵԿԱՎԱՐԱՍԱՆ ՆՈՐ ՈՒԺԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ

(Նյութին կից քարտեզը նայել էջ 22-ում)

Ինչպես Առաջին աշխարհամարտին և նրան հաջորդած տարիներին, այնպես էլ 1985-ից՝ ԽՍՀՄ-ի ինքնափլուզմամբ առաջացած աշխարհաքաղաքական նոր առճակատումների պայմաններում, այդ թվում, Արցախյան հիմնախնդրի վերարծարծման թեժ ժամկներում, Հայաստանը կրկին հայտնվել է գերտերությունների գլոբալ հակամարտությունների կիզակետում: 1988-90-ական թթ. ամիսների հարց էր ԼՂՀ-ն հայաթափելը: Ապրելու և հարատևելու վճռական ինքնակազմակերպումով ոտքի ելած ու ինքնապաշտպանության դիմած հայությունը շտկեց դրությունը: Այնուհետև ստեղծվեց Մինսկի խումբը, և Ֆրանսիան, որպես հայության կողմից վստահելի երկիր, նշանակվեց Հայաստանին քաղաքական հոգաբարձու:

Ժամանակին՝ 1918-22թթ., պատրաստ չէինք և ճիշտ չհասկացանք Եվրոպային ու եվրոծնունդ բոլշևիզմին: 1994-ից առ այսօր, կարծես, կրկնվում է անցյալը. ՀՀ պետական քաղաքական մակարդակով կրկին ճիշտ չենք հասկանում իրերի բնույթն ու դրությունը և հայտնվել ենք գլոբալ հակամարտությունների կիզակետում: Խաբվելու, առավել ևս պարտվելու իրավունք չունենք: Իրատեսորեն գնահատելու համար հայությանն ու իր երկու անկախ պետություններին, նաև Ջավախքին սպառնացող բոլոր առկա վտանգները, ինչպես և ինքնապաշտպանության և ինքնակազմակերպման ազգային և պետական որոշումներ կայացնելուց առաջ, կարևոր ենք համարում հայացք գցել ներկայիս աշխարհի վերափոխվող քարտեզին, նրա տրամաբանությանը, առաջիկա և հեռահար ծրագրերին:

Կայսերապաշտական երկհազարամյա խաբկանքներով տարված Եվրոպան, կամայականորեն չընդունելով աշխարհի ինքնակարգավորման ու ինքնակառավարման բնական էությունը՝ անմերժելի իսկությունը, այդուհանդերձ, չի ուզում հրաժարվել աշխարհին տիրելու իր հին մարմաջից: Փոխվել են ժամանակները, փոխվել են հնարավորությունները, դրանց համեմատ փոխվել են աշխարհին տիրելու մեխանիզմները:

Տարաբնույթ շաղերով կառուցված աշխարհաքաղաքական այս խճանկարը հեշտ ընկալելի է դառնում, երբ ուշադրության առաջին պլան ենք բերում եվրասիական քարտեզը, ուր հստակ երևում է աշխարհի վերաբաժանման ուղղությամբ տարվող վերջին 20-ամյա քաղաքական ընթացքը: Աշխարհի միակենտրոն, անմիջական, աներևույթ ղեկավարման նոր ուժային մեխանիզմի հիմքում դրված է Եվրասիական ամբողջ ցամաքը՝ աներևույթ ղեկավարման կենտրոնից ծովային տոտալ շրջափակման միջոցով ծուղակը գցելու սկզբունքը: Որպես շրջափակման մեխանիզմներ, ըստ ներկայացված քարտեզի, ծրագրվել է և փորձ է արվում ստեղծել պայմանականորեն այսպես կոչված՝ I. Սևծովյան, II. Միջերկրածովյան, III. Կասպիական, IV. Պարսից ծոցի, V. Կարմիրծովյան, VI. Հեռավոր Արևելյան միացյալ պետություններ, իբրև թե՝ լրիվ անկախ, սակայն, իրականում՝ վերազգային, վերպետական, միակենտրոն ընդհանուր ղեկավարման պետական նորատիպ կառույցներ: Որոնք, փաստորեն, շրջափակման մեջ կպահեն ներկայիս Եվրոմիությունը, ըստ Ռալֆի քարտեզի՝ ձևավորվող Նոր Միջին Արևելքը, Աֆրիկան, Ռուսաստանն ամբողջությամբ (բաց թողնելով առայժմ երկրի հյուսիսային սառուցյալ ափը), Չինաստանը, Հնդկաստանը: Պարզ է, դեպքերի հաջող ընթացքի դեպքում այն կծավալվի՝ իր մեջ ներառելով Ինդոնեզիան, Ավստրալիան, Ամերիկյան երկու մայրցամաքները:

Վերջին ամիսների քաղաքական գործընթացները. Հայաստանի խորհրդարանական ընտրություններն ավարտվեցին մայիսի 12-ին: Բուռն, անթաքույց ոգևորություն ապրեց ՀՀ-ում գտնվող եվրո-դեսանտը, այն դեպքում, երբ արդյունքները անսպասելի էին անգամ հաղթող կուսակցությունների համար: Արդյունքում ունեցանք մեկ կուսակցության կողմից լիովին ղեկավարվող Ազգային Ժողով՝ առաջիկա նախագահական ընտրությունների նախօրյակին առանց որևէ ընդդիմադիր կառույցի: Ֆրանսիայում նախագահական ընտրություններն անցան սպասելի արդյունքով, մինչ այդ երկրի ինքնիշխանության կոչերով ընթացող Սարկոզին շտապով բացեց երկու խաղաքարտ. առաջին՝ Ֆրանսիան, որպես նախածեռնող երկիր, կձեռնարկի Միջերկրածովյան համագործակցության ստեղծումը, ուր Ֆրանսիայի դերը կլինի Եվրոմիություն - Միջերկրածովյան համագործակցությունը համադրելը, իսկ այդ համագործակցություն ասվածը հովանավոր գերիշխող դեր կունենա գրեթե ամբողջ աֆրիկյան մայրացամաքում: Սարկոզիին շտապով ասես լրացրեց Եվրոմիությունը՝ հայտարարելով Սևծովյան և Կասպիական նույնատիպ համագործակցությունների ստեղծման նախաձեռնությունը: Երկրորդ՝ Ֆրանսիան ամեն ինչ կանի, որ ընդունվի Եվրոմիության նորացված սահմանադրությունը:

Հետաքրքիր զարգացումներ ունեցան Թուրքիայի նախագահական ընտրությունները, ռազմական իշխանության կեցվածքը, ինչպես և այն, որ չգիտես ինչո՞ւ, ինչ որ մեկին պետք է, որ Թուրքիայում այսուհետ նախագահ ընտրի ժողովուրդը: Ասել է թե՝ այլևս կարիք չկա այս աշխարհաքաղաքական տարաբնույթ խնդիրներում Թուրքիայում նոր ռազմական հեղաշրջում կատարել:

Աբսուրդի հասցվեց վերջին երկու ամիսներին Ուկրաինայում ընթացող նախագահ - Ռադա - վարչապետ համապետական ճգնաժամը: Չնայած նրան, որ դպրոցականին անգամ ակնհայտ էր, որ նախագահ Յուշչենկոն ոտնահարում է իր երկրի սահմանադրությունն ու օրենքները:

Այս ամենին լրացնող եղավ Աֆրիկայի և գլոբալ տաքացման օրակարգով հրավիրված Մեծ ութնյակի գագաթաժողովը, որի նախապատրաստման ընթացքում ԱՄՆ-ի թեթև ձեռքով առաջին պլան մղվեց Արևմուտք - Ռուսաստան նոր հակամարտության, լարվածության ստեղծման տրամադրությունները՝ հանձինս Չեխիայում և Լեհաստանում տեղադրվելիք հոթիռային և հակահոթիռային պաշտպանության համակարգերի:

Ներպետական ընթացի՞կ, թե՞ գլոբալ քաղաքական զարգացումներ. Եթե մինչև ապրիլ ամիսը, աշխարհաքաղաքական գործընթացներում առաջին պլանում էին եվրոամերիկյան ալյանսի կողմից Նոր Միջին Արևելքը ռազմաքաղաքական բռնամիջոցներով, ըստ Ռալֆի քարտեզի, կառուցելու տարակենտրոն գործընթացների խճանկարը, ապա Եվրասիական ընդհանուր տրամաբանության քաղաքական դաշտում, մայիսից սկսած, առաջին պլան մղվեցին մի շարք երկրների ընտրությունները և դրանց նկատմամբ չափից դուրս մեծ «հետաքրքրությունը»:

Առաջին անփորձ հայացքից տարօրինակ է Հայաստանում, Ֆրանսիայում, Թուրքիայում կատարվելիք ընտրությունների, ինչպես նաև Ուկրաինայում, Ռումինիայում առաջացած նախագահական ճգնաժամերի նկատմամբ աշխարահաքաղաքական ուշադրության գերբևեռացումը: Բոլոր դեպքերում դրանք թվում են տեղական նշանակության՝ ներպետական, ընթացիկ խնդիրներ, մինչդեռ ամբողջովին գտնվում են միջազգային մամուլի և գերտերությունների ուշադրության, անգամ քաղաքական՝ ֆինանսավորվող, թելադրանքի միջամտության դաշտում: Անհասկանալիի բուն պատճառը վերջին 50 տարիների քաղաքականություն և քաղաքագիտություն ասվածի դեֆորմացված ներ-

կայացումն ու ընկալումն է, երբ ոչ միայն բուն շահագրգիռ պետության, այլև մյուս երկրների քաղաքական գործիչների կողմից, ասես հատուկ պայմանավորվածությամբ, յուրաքանչյուր լարվածություն, հակամարտություն կամ այլ միջազգային նշանակության խնդիր ներկայացվում է լրիվ այլ հարթության մեջ: Սա հնարավորություն է տալիս խնամքով թաքցնել տասնամյակներ շարունակ ընթացքի մեջ գտնվող, երկարաժամկետ ծրագրավորում ունեցող արևմտյան քաղաքականության նվաճողական իսկությունն ու մարդատյաց ագրեսիվությունը:

Ո՞ւմ են ծառայում մի շարք երկրների իշխանությունները. Տեղին չէ հիմա քաղաքական դասեր տալ, սակայն, հաշվի առնելով վերջին մի քանի տարվա գլոբալ լարվածության արդեն իսկ բացահայտվող սպառնալիքները, խորհուրդ կտայինք յուրաքանչյուր քաղաքական գործչի, վերլուծաբանի կամ մեկնաբանի մինչև որևէ երկրի շահից խոսելը, այն որպես հիմք ընդունելն ու, ըստ այդմ, ուղղորդվող քաղաքական գործընթացը ներկայացնելը, նախ և առաջ հստակեցնել, թե ո՞ւմ են ծառայում մի շարք երկրների իշխանությունները: Ասել է թե, նախ և առաջ, պետք է հստակեցնել, թե իրականում ո՞վ է տվյալ երկրի քաղաքական ղեկավարը. պետ-ապարա՞տը, երկրի նախագա՞հը, թե՞ ժողովուրդը: Նաև, թե ո՞ւմ շահն է ներկայացնում տվյալ քաղաքականությունը. երկրի՞ և նրա ժողովրդի՞, երկրի ղեկավարի՞, որևէ օտար երկրի՞, թե՞ միջազգային ինչ-որ կառույցի: Պետք է ուշադիր լինել, թե, ի վերջո, ո՞ւմ և ինչի՞ն է ծառայեցվում տրամաբանական վերլուծությունից զուրկ, բնականն ու բանականը մերժող քաղաքական մտածողության ներկայիս իրողությունը, նրանում առկա ներարկումները:

Առ այսօր համառորեն չի հստակեցվում աշխարհի միջազգային համագործակցության ու քաղաքական զարգացման ընդհանուր ուղղվածությունը, դրանց մոտիվներն ու բուն շարժառիթները: Փոխարենը, համաշխարհային քաղաքական ընդհանուր պատկերը ներկայացվում է իբրև առանձին, լոկալ շահերի, հաճախ իրար հակասող նպատակների մի խառնաշփոթ, փոխադարձ ատելության ու մարդատյացության խճանկար՝ իր ինքնանպատակ (իմաստակիր կողմնորոշումներից զուրկ), ասես ինքնահոսի թողնված դինամիկայով:

Աշխարհի միակենտրոն ղեկավարման ծովային համակարգի ներկայիս ծրագրերը. Ըստ աշխարհին տիրելու ժամանակակից քաղաքական նկրտումների՝ Եվրասիա մայրցամաքը բաժանվելու է տարածքային ղեկավարման երկու առանձին՝ ցամաքային և ծովային, միջազգային կառույցների միջև: Ուր ցամաքային ռեգիոնալ նշանակության միություններ ասվածը ներառելու է ցամաքային երկրները՝ որպես նահանգներ: Իսկ ծովային միությունները ներառելու են տվյալ ծովի առափնյա տարածքները գրեթե ամբողջական շրջագծով՝ բաց ծով - օվկիանոս մուտքերն ու ելքերը վերահսկելու համար:

Համագործակցության ծովային կառույցներն են (իբրև միություններ)՝ Սևծովյան, Միջերկրածովյան, Կասպիական, Կարմիր ծովի և Պարսից ծոցի նոր տիպի ընդհանուր պետությունները: Այս հենքի վրա ամենևին տարօրինակ չէ անցյալ դարասկզբին որպես համաշխարհային կառավարման իշխանության մոդել հանդիսացող Մեծ Բրիտանիայի Միացյալ Թագավորության՝ ծովային կայսրության, ներկայիս տխուր վիճակը, երբ շուրջ երկու տասնամյակ է կասկածի տակ է առնվում թագավորական ընտանիքի բարոյական դիմագիծը և այլևս այն պահելու կարևորությունը: Ակնհայտ է՝ առաջիկայում աշխարհի քարտեզի վրա չի լինելու բրիտանական մեծ թագավորությունը, նա անկախություն ձեռք բերած Իռլանդիայի ու Շոտլանդիայի հետ կդասվի Եվրոմիության երկրների շարքում: Սա էր Թոնի Բլեների վերջին նվերը անգլիացիներին: Արդյունքում՝ մեջտեղից դուրս կգա այն երկիրը, որն առաջնահերթորեն պատասխանատու է Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի հրահրման և աշխարհում վերջին երեք հարյուր տարիներին տեղի ունեցած աղետների համար, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության:

Ծովային տարածքներում (բաց ծով - օվկիանոս) բոլոր մուտքերն ու ելքերը վերահսկելու՝ աշխարհին տիրելու, ժամանակակից տրամաբանությունը, եթե ուշադիր նայենք, կառուցվում է Մեծ Բրիտանիայի կայսրության աշխարհատիրակալական մոդելի ձեռագրի հենքով: Եկեք հիշենք՝ ո՞վ էր Անգլիան և ինչպե՞ս էր իշխում: Մեծ Բրիտանիան, որպես ծովային կայսրություն, իշխում էր աշխարհի կեսից ավելիին, հենց միայն ծովածոցերում, ծովերում և օվկիանոսներում, գրեթե միանձնյա, իր դոմինյոնների կողմից հսկողություն սահմանելու միջոցով: Անցել են ժամանակները: Նախկինն այլևս կիրառելի չէ: Ծովային տարածքների վերահսկողության միջոցով ցամաքային տարածքների, երկրների միակենտրոն կառավարման համար նոր մոտեցում և նոր մեխանիզմներ են անհրաժեշտ: Որդեգրվել է նահանգային ղեկավարման՝ ամերիկանացման մոդելը: Նախատեսվում է ծովային միություն - կառույցների միջոցով ծուղակի մեջ առնել ցամաքային տարածքները: Արդյունքում՝ առանձին ինքնիշխան երկրներ, ստիպված են լինելու, որպես նահանգներ, ենթակա լինել վերազգային ընդհանուր կառավարմանը՝ կամովին զիջելով իրենց ազատությունը, անկախությունն ու ինքնիշխանությունը:

ԿՈՍՈՎՈ. մայցամաքների «Ծովային շրջափակումով ցամաքային ծուղակի» եվրո-ամերիկյան քաղաքականության իրագործման բանալի. Այն, որ բռնազավթված ժողովուրդների ու երկրների ազգային ազատագրական պայքարը, ինչպես և ազգերի ինքնորոշումն, ինքնին, որպես ժողովրդի ազատ, անկախ և ինքնիշխան ապրելու իրավունք, երբևէ չէր հակասել տարածքային ամբողջականությունը հարգելու միջազգային նորմին, հայտնի է անգամ քաղաքականությամբ չզբաղվողներին: Իսկ որ միջազգային հանրությունը ՄԱԿ-ի Հոգաբարձուների Խորհրդի անմիջական աջակցությամբ 1945-75թթ. հովանավորվում էր գաղութացված երկրների ու ժողովուրդների ազատագրական պայքարի ձեռքբերումները, ճանաչելով նրանց որպես ՄԱԿ-ի անդամ երկիր, հայտնի է յուրաքանչյուր քաղաքական գործչի: Այլ խնդիր է, թե այդ ինչպես եղավ, և ինչու սկսած 1985-ից միջազգային հանրությունը, հանձինս Արևմուտքի, սկսեց «մոռանալ» այդ ամենը և առ այսօր տարածքային ամբողջականությունն ու ինքնորոշումը, ինչպես և ազգային ազատագրականը, իբրև պատմական՝ վիճահարույց, ուստի և քաղաքականորեն անլուծելի, իրար հակասող է համարում: Արդյունքում՝ տասնամյակներ շարունակ, Կոսովոյից սկսած, մեծանում է, այսպես կոչված, «սառեցված հակամարտությունների» ցանկը:

Սակայն, վերջերս, կրկին օրինական և իրական են համարվում նույն Արևմուտքի կողմից նախկինում ծրագրված հետևողականությամբ տասնամյակներ շարունակ որևէ երկրում էքսիկ էքսպանսիայի իրագործումից հետո այդ երկիրը մասնատելու և տվյալ տարածքներին անկախություն շնորհելու խնդիրը:

Չենք կարծում, ավելի քան համոզված ենք, որ Արևմուտքին ամենևին էլ չի անհանգստացնում Կոսովոն և այնտեղ ինչ-ինչ պատճառներով ի հայտ եկած «ալբանացի» բնակչությունը: Խնդիրը բոլորովին այլ է: Ինչպես 1921-ին Բոլշևիկյան Ռուսաստանը, ըստ Լենին-Տրոցկու «ինքնազոհաբերման» տարբերակի, պետք է համոզել բոլոր այն երկրներին, որոնց նկատմամբ արդեն իսկ նախապատրաստված է ներմուծվող տարածքային անկախացումների կոնվեերային գործընթացը, ինչպես Կոսովոն, հետևել իր՝ Եվրոմիության օրինակին: Այդ երկրների ցանկը, ի դեպ, պարզ երևում է ինչպես վերջին մի քան տասնամյակների քաղաքական գործընթացների, այնպես էլ հոդվածում ներկայացվող քարտեզում նշված «Ծովային առափնյա միացյալ պետությունների» նոր անկախություն ստացող

տարածքների պատկերից:

Տարածքային ամբողջության, Ինքնորոշման և Անկախության արևմտյան ճանաչողությունը. Կոսովոյին ամեն գնով անկախություն տալու վերջին ամիսների արևմտյան համառությունը պարզեց, որ նախկին՝ տարիներ և տասնամյակներ սառեցված, նաև առաջիկայում ակնկալվող նոր՝ տաք, հակամարտությունները խաղաղ կարգավորման տանելու այդ տրամաբանությունը կառուցված է բազմաստանդարտ հենքով: Այն էլ ամեն դեպքի համար ստանդարտներից մեկը ընտրելու խիստ յուրօրինակ, մարդկության բոլոր բնական օրենքները գլխիվայր շրջող մենաշնորհային իրավունքով:

Հյուսիսային և Հարավային Կովկասի, Թուրքիայի և Միջինասիական երկրների հակամարտությունների խառնաշփոթ իրողությունում, Արցախյան պատերազմի Հայոց հաղթական բեկումից՝ Շուշիի ազատագրումից 2 ամիս անց, ստեղծվեց Սևծովյան տնտեսական համագործակցությունը: Արևմուտքի համար պատերազմի ելքը կարևոր էր նրանով, որ մեր պարտության դեպքում նրանց կողմից ոչ միայն մոռացության էր մատնվելու Արցախն ամբողջությամբ, այլև Հայաստանը ստիպված չէին լինելու ընդգրկել Սևծովյան Տնտեսական Համագործակցության մեջ:

Ինչևէ, այն ստեղծվեց, հետապնդելով Սև ծովը օղակող նախկին խորհրդային երկրներին և Թուրքիային վարժեցնելու նոր տիպի (ծովային առափնյա տարածքների խմբավորման միջոցով) ընդհանուր պետություն ստեղծելու մտքին: Տարօրինակ է, որ «համագործակցող» երկրների կազմում, չգիտես՝ ինչո՞ւ ի հայտ էին եկել մի շարք երկրներ, որոնք ոչ մի կապ չունեն Սև ծովի հետ: Վերջին ամիսների արևմտյան քաղաքական բացահայտումների լույսի ներքո, սակայն, այլևս ավելի քան հասկանալի դարձավ ոչ միայն կովկասյան հակամարտությունները սառեցված պահելու տրամաբանությունը, այլև ամեն գնով Կոսովոյին անկախություն տալու վճռականությունը: Ներկայիս Կոսովոն հենց այն բանալին է, որով ստեղծվելու են ոչ միայն Սևծովյան, այլև Միջերկրածովյան և Կասպիի համագործակցություններ կոչվող, ծովեզրյա վերազգային կառավարման, պետությունները: Բանալի է, քանզի առաջիկայում Սևծովյան համագործակցություն կոչվող տարածքների մեջ ներառվելու են Ուկրաինայից, Կոսովոյի օրինակով, անջատվող անկախություն ստացող Ղրիմն ու Օդեսայի մարզը: Նույն խնդրի համար նախատեսել են տարածքային հատվածներ անկախացնել նաև Ռուսաստանից, Ռումինիայից, Բուլղարիայից: Թուրքիայի առաջիկա մասնատումը նշվեց 2006-ին՝ Ռալֆի քարտեզում:

Հիմա հասկանալի է դառնում Ուկրաինայում նախագահի կողմից հրահրված իշխանական ճգնաժամը: Ուկրաինան պետք է բաժանվի չորս մասի. հարավայինը՝ Ղրիմը, որպես Ղրիմի թաթարների միջոցով անկախացող, Օդեսայի մարզը, արևմտյանը՝ «ուկրաինական», արևելյանը՝ «ռուսական» երկրների:

Ինչ վերաբերում է սևծովյան ռուսական խարիսներին, ըստ տարածքի ազգամիջյան անհանգստությունների պատկերի, այն նույնպես պետք է անջատվի Ռուսաստանից, ամբողջ Հյուսիսային Կովկասի հետ միասին, որով ցամաքային և ծովային (ջրանցքով) կապ կստեղծվի և կասպիական ավազանի հետ:

Հիմա, հասկանալի կլինի շատերին, թե ինչո՞ւ Սևծովյան համագործակցության երկրները, բացի Ռուսաստանից, չեն դատապարտել Հայոց ցեղասպանության իրողությունը: Այն չեն դատապարտել նաև Մեծ ութնյակի երկրներից ԱՄՆ-ը, Անգլիան, Ճապոնիան: Ինչո՞ւ…

Իսկ Եվրոմիությունը շտապում է օր առաջ լուծել Հայաստան - Ադրբեջան հակամարտությունը (իրականում պետք է լուծում տրվեր ԼՂՀ-ի ինքնորոշման իրավունքի խնդրին), որպեսզի խուսափի հետագայում ԼՂՀ-ին բոլոր առափնյա այլ երկրների հետ միասին անկախություն տալուց:

Շտապում են: Նախատեսված ժամակաանցույցը մի շարք հանգամանքներով հետ է ընկել: Ուստի, ստիպված գրոհում են ընդհանուր ճակատով: Միջին Արևելքի ընդհանուր պետության քարտեզի ձևավորմանը զուգընթաց ձևավորվել է սկսում (ըստ Ֆրանսիայի նորընտիր նախագահի հայտարարության) Միջերկրածովյան միացյալ պետությանը: Եվրոմիությունը մեկ օր հետո շտապով հայտարարում է Սևծովյան և Կասպիի միացյալ պետությունների ստեղծման մասին: Պարզվում է, որ աշխարհի քարտեզի վերաձևավորման վերջնաժամկետին՝ 2015-ին մնացել է 8 տարի, իսկ ժամանակագրական առումով կորած է համարվում շուրջ 10 տարի: Հասկանալի է և շտապողականությունը, և խուճապը, որոնք կարտահայտվեն տարակենտրոն և ընդհանուր հակամարտությունների ու ցնցումների միասնական մի խճանկարով:

Սևծովյան տնտեսական համագործակցություն. Եվրասիա մայրցամաքի ծովային ծուղակը դարբնող կառույց. Այն ստեղծվեց որպես Եվրասիական մայրցամաքը ծովային ընդհանուր ծուղակի մեջ ներառելու ծրագրի առաջին փուլն իրագործող, երեք՝ Միջերկրական, Սև, Կասպիի առափնյա տարածքներով միացյալ պետությունների ստեղծումը նախապատրաստող միջազգային քաղաքական անցումային կառույց: Ինչպես երևում է համագործակցության մշտական անդամների և դիտորդների ցանկից, ներկայացված 23 երկրներից միայն վեցն են, որ սահմանակից են Սև ծովին: Այդ իսկ պատճառով սկզբում տարօրինակ էր թվում, թե ինչո՞ւ է այն կոչվում Սևծովյան համագործակցություն, բայց Սարկոզիի և Եվրոմիության համապատասխան հայտարարություններից հետո պարզ դարձավ, որ այդ բոլոր երկրները, իրենցից անջատվող տարածքներով հանդերձ, առնչվում են Միջերկրածովյան, Սևծովյան և Կասպիի առափնյա միացյալ երեք առանձին պետությունների ստեղծմանը:

Սևծովյան Տնտեսական Համագործակցության երկրների կազմը. (երկրների անուններն ու թվարկման հաջորդականությունը տրվում է ՍԾՏՀ (BSEC) կազմակերպության կողմից ներկայացվող տեսքով):

Մշտական **ԱՆԴԱՄ երկրներ** (1992թ. հուլիսի 25-ից)՝ **Ալբանիայի** Հանրապետություն, **Հայաստանի** Հանրապետություն, **Ադրբեջանի** Հանրապետություն, **Բուլղարիայի** Հանրապետություն, **Վրաստան**, **Հելենական** Հանրապետություն (Հունաստան), **Մոլդովայի** Հանրապետություն, **Ռումինիա**, **Ռուսաստանի** Դաշնություն, **Ուկրաինա**, **Թուրքիայի** Հանրապետություն, **Սերբիա և Չեռնոգորիա** (2004թ-ի ապրիլից):

ԴԻՏՈՐԴ երկրներ՝ Բելոռուսի Հանրապետություն, **Խորվաթիայի** Հանրապետություն, **Չեխիայի** Հանրապետություն, **Ֆրանսիայի** Հանրապետություն, **Գերմանիայի** Ֆեդերատիվ Հանրապետություն, **Իսրայել** Պետություն (State of Israel), **Իտալիայի** Հանրապետություն, **Լեհաստանի** Հանրապետություն, **Սլովակիայի** Հանրապետություն, **Թունիսի** Հանրապետություն, **Ամերիկայի Միացյալ Նահանգներ**:

Հետևելով աղյուսակում նշված երկրներին՝ ակնհայտ է, որ.

Միջերկրածովյանում ներառվելու են՝ Խորվաթիան, Չեռնոգորիան, Ալբանիան, Հունաստանը, Իտալիան, Ֆրանսիան, Իսպանիան, Մարոկկոն, Ալժիրը, Թունիսը, Լիբիան, Եգիպտոսը, Իսրայելը (առանց Պաղեստինի ծովափնյա մասի), ընդարձակվող Լիբանանը (սիրիական ծովափի հետ միասին), Թուրքիան:

Սևծովյանում՝ Ուկրաինան, Մոլդովան, Ռումինիան, Բուլղարիան, Թուրքիան (մասնատումներով), Քուրդիստանը (ըստ Ռալֆի քարտեզի), Վրաստանը (մասնատումներով), Ռուսաստանը:

Կասպիում՝ Ադրբեջանը (ըստ Ռալֆի ընդլայնված),

Ռուսաստանը՝ Դաղստանի մասով և հյուսիս ընկած տարածքով, Ղազախստանը, Թուրքմենստանը, Իրանը (ըստ Ռալֆի փոքրացած ծովային սահմաններով):

Ինչ վերաբերում է ՍՏՕՀ-ի դիտորդ երկրների ցանկում տեղ գտած Չեխիային ու Լեհաստանին, ապա կարծում ենք՝ շատերին հասկանալի դարձավ, որ այն պայմանավորված է այդ երկրներում հոթիռային և հակահոթիռային համակարգերի տեղադրումով, որով վերահսկվելու են այս երեք ծովային միացյալ պետությունները: Գերմանիան (I և II աշխարհամարտերի փորձից ելնելով), բացի Բալթիկ ծովի նկատմամբ ունեցած իր դերի, որպես ԵՄ-ի առաջատար, ինչպես նաև բարձր կազմակերպվածության երկիր, գուցե թե պատասխանատու կկարգվի սույն քաղաքականության ռազմական սպասարկմանը:

Բելոռուսի պարագայում պետք է հիշել, որ այնտեղ է գտնվում ԽՍՀՄ-ի՝ 1991-ից հետո Ռուսաստանի Դաշնության, հակահոթիռային պաշտպանության ամենահզոր կայանը, որը ոչ միայն հսկում է ամբողջ եվրոպական տարածքը, այլև (ի տարբերություն Ադրբեջանում տեղակայված Գաբալայի կայանի) կարող է ուղղորդել պատասխան հարված տանող ռուսական հրթիռներ:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա, ինչպես նշել ենք, այն ժամանակավոր է ներառվել. դա պայմանավորված էր Արցախի զինյալ ազատագրական ուժերի անշրջելի հաղթանակներով: Այդ չեն թաքցնում նաև իրենք. և Ռալֆի քարտեզից, և արևմտյան գլոբալ քաղաքական բացահայտումներից հստակ երևում է, որ Սևծովյան միացյալ պետության մեջ Հայաստանին փոխարինելու են բերում նոր ստեղծվող Քուրդիստան պետությունը:

Այսպիսով, առաջիկայում ի՞նչ է պատրաստվում կառուցել եվրո-ամերիկյան ալյանսը:

I. Սևծովյան համագործակցություն (Սևծովյան միացյալ պետություն):

Ըստ 1996-97թթ. մեր ունեցած տեղեկությունների, որպես նոր որակ և բովանդակություն, ասել է թե՝ գլոբալ քաղաքական որոշակի խնդիրներ իրականացնող Սևծովյան ընդհանուր պետություն, այն ստեղծվելու է առափնյա երկրներից տարածքներ անջատելու (անկախացնելու) միջոցով: Ըստ երկրների ընթանալու են հետևյալ գործընթացները.

Ուկրաինա. եվրո-ամերիկյան միջամտության և թուրքական աջակցության ու Ղրիմի թաթարների անմիջական՝ անջատողական գործուն ջանքերի շնորհիվ Ուկրաինայից անջատվելու են Օդեսայի մարզի հարավային կեսի, Նիկոլաևսկի մարզի հարավային լեզվակի, Խերսոնի և Ղրիմի մարզերի տարածքները՝ ստեղծելով երկու առանձին՝ Օդեսայի անկախ պետություն և Ղրիմի թաթարների հանրապետություն: Տարանջատումից հետո միայն, իբրև թե նորանկախ տարածքների զարգացմանն ու կառավարմանը նպաստող նոր ուժեր, Ղրիմի և Օդեսայի մարզեր են տեղափոխվելու Ռուսաստանի հրեական ինքնավար մարզի հրեաները, ինչպես և տարիներ առաջ «ճանապարհային քարտեզով» Գազայի հատվածից դուրս բերված, այսպես կոչված Իսրայելից «խռոված» հրեաների մի մասը:

Հիշեցնենք, որ Ղրիմը հրեաներով բնակեցնելու առաջին լուրջ փորձը արվեց 1949-ին, երբ նորաստեղծ (դեռ մեկ տարին չբոլորած) Իսրայել պետության վարչապետը մեծ վստահությամբ ժամանեց ԽՍՀՄ, Ղրիմը՝ որպես հրեական ինքնավարություն, հրեաներին տալու առաջարկով: Այն ժամանակներում միջազգային քաղաքականության համար Ստալինի մերժումը, նաև մերժման հիմնավորումը ավելի քան անսպասելի էր: Պատահական չէ, անշուշտ, որ Ստալինի մահից անմիջապես հետո՝ 1954-ին (ի դեպ, 1955-ի Կորեական ճգնաժամով ԱՄՆ-ԽՍՀՄ ատոմային պատերազմի հրահրման հերթական փորձից մեկ տարի առաջ), Ղրիմը անջատվում է Ռուսաստանից և միացվում է Ուկրաինային: Հուսալով, որ, ի տարբերություն Ռուսաստանի, հետագայում Ուկրաինայից այն վերցնելը (անկախացնելը) ոչ մի բարդություն չի առաջացնի: Օդեսան Ուկրաինայից անջատելու ամենադյուրին ճանապարհը (դեռ 1918-21թթ. փորձարկված) երկփուլ տարբերակն է. երբ Ուկրաինան նախ սկսվում է կիսվել Արևմտյան ու Արևելյան մասերի, որի ընթացքում էլ, հաջորդող քայլով Օդեսան բարձրացնում է Ուկրաինայից իր անկախանալու հարցը: Ի դեպ, ակնկալվում է, որ Օդեսայի ներկայիս «խաղաղ» անկախացմանը մեծապես պետք է նպաստի (ամբողջ ուշադրությունը իր վրա սևեռելով) Ղրիմի թաթարների կողմից զինված հակամարտության ձեռագրով Ղրիմի «անկախացման» գործընթացը: Խնդիր, որը դրվել էր դեռ անցյալ դարասկզբին, որի առաջին փուլն իրագործվեց 1921-ի մարտի 18-ին, մի կողմից՝ ՌՍՖՍՌ-ի ու Ուկրաինայի և մյուս կողմից՝ Լեհաստանի միջև կնքված «Ռիգայի Խաղաղության Պայմանագրի» միջոցով: Ըստ որի, ինչպես նշում է Տրոցկին իր «Հայաստանը և Թուրքիան առաջիկա կոնֆերանսում»[1] հոդվածում, Ռուսաստանը հանուն նոր բոցավառվող կոմունիզմի գնաց ինքնազոհաբերման՝ Լեհաստանին զիջելով Բելոռուսի և Ուկրաինայի արևմտյան տարածքները (ԽՍՀՄ-ին վերադարձած 1939թ.): Երկրորդ փուլը տապալվեց, Օդեսայի անկախացումը չիրականացավ հենց միայն այն պատճառով, որ սովետական դարձած երկրներին 1922-ից տարան ոչ թե հետագա մասնատման, այլ ընդհանուր պետություն ստեղծելու ճանապարհով:

Ըստ այս ծրագրի է, որ լիովին հասկանալի է դառնում ոչ միայն 1986թ. Չեռնոբիլի վթարն ու Դոմբասի ածխահորերի «վերակառուցումային» պայթյունները, ոչ միայն Ուկրաինայի գունավոր հեղափոխության ինքնակործան ամբողջ աբսուրդը, այլև վերջին ամիսներին Յուշչենկոյի և Տիմոշենկոյի սարքած Ուկրաինայի կառավարման «ճգնաժամը»: Երբ երկրի նախագահը, ոտնահարելով Սահմանադրությունը, ոչ համոզիչ պատճառներից ելնելով, լուծարելով Ռադան, շտապ կարգով պահանջում է նոր (վստահաբար գունավոր-հեղափոխական) ընտրություն: Չի բացառվում, որ Յուշչենկոն անգամ չհմանա պատվիրված քայլերի բուն հեռանկարը, սակայն փաստ է Արևմուտքի թելադրանքը կատարելու նրա պատրաստակամությունն ու համառությունը: Հարկ է ուշադրություն դարձնել, որ Յուշչենկոյի շտապողականության վրա նորընտիր Ռադան պետք է կազմվեր հուլիս ամսին արդեն: Հիշենք, որ հուլիսին ավարտված պետք է լիներին Ֆրանսիայի, Հայաստանի ընտրությունները, Ռումինիայի նախագահական ճգնաժամի հանրաքվեային լուծումը, ինչպես և Թուրքիայի նախագահական ընտրությունները, Կոսովոյին անկախություն շնորհելու շտապողականությունը: Ասել է թե՝ արդեն օգոստոսից պետք է սկսվեին ընդհանուր տարածաշրջանային մեծ գործընթացներ, որոնց համար խիստ կարևոր էր, որ Ուկրաինայի Ռադան լինի գունավոր, որպեսզի հնարավոր լինի իրականացնել Ուկրաինայի մասնատման խնդիրը՝ հենց Ռադայի ընտրությունների տարաբաժան բախումների ընթացքում:

Հիմա հասկանալի է այն տարօրինակ երևույթը, որ անգամ Ուկրաինայի վարչապետի և Ռադայի կողմից դեկտեմբերին վերընտրության գնալու համաձայնությունը կրկին անընդունելի եղավ Յուշչենկոյի համար, քանի որ նա պահանջում էր ընտրություն գոնե հուլիս ամսին: Օգոստոսի ֆենոմենի բացատրությունը հասկանալի դարձավ նրանից հետո, երբ Յուշչենկոն համաձայնվեց սեպտեմբերին ընտրությունների գնալու հարցում, որն անմիջապես ճշտորոշեց Կոսովոյին անկախություն տալու նոր ժամանակացույցը, հանձին ՄԱԿ-ում կայացած այն որոշման, որը 120 օր է տրամադրում Սերբիային ու Կոսովոյին և համաձայնության չգալու պարագայում, անգամ հոկտեմբեր ամսին, ասել է թե՝ Ռադայի վերընտրությունից հետո, ՄԱԿ-ը ավտոմատ կերպով ճանաչելու է Կոսովոյի անկախությունը՝ անկախ Ռուսաստանի ու Սերբիայի վետոների: Բուշն էլ իր հերթին ամրագրեց, որ ԱՄՆ-ը կը ճանաչի Կոսովոյի անկախությունը: Փաստորեն, Կոսովոյի անկախությունով սկսվելու է

Սևծովյան համագործակցության երկրներում անջատողական անկախացումների գործընթացները: Այն տեսանելի կլինի Սևծովյան միացյալ պետության ձևավորումն իրականացնող հակամարտությունների քայլերից. Ռումինիայում, Մոլդովայում, Բուլղարիայում, Թուրքիայում, Վրաստանում, չի բացառվում և Ռուսաստանում, հանձինս՝ Հյուսիսային Կովկասի, Ռուսաստանի Սևծովյան և Կասպիի առափնյա տարածքների:

Տարօրինակ, բայց ոչ պատահական է հունիսի 29-ին՝ Յալթայում, Ուկրաինայի նախագահ Յուշչենկոյի գլխավորությամբ ԵՄ-ն մի շարք երկրների և ԱՄՆ-ի նախկին նախագահների աննախադեպ հանդիպումը: Ըստ լրատվության՝ ելույթ ունեցողները ասելիք առանձնապես չունեին, մնում է գուշակել, թե ինչո՞ւ էին հավաքվել: Ո՞րն էր հավաքի բուն նպատակը: Կարծում ենք, ակնհայտ է պատասխանը: Այս հավաքը կազմակերպված է հենց միայն Ուկրաինան մասնատելու և դրա հետ կապված միջազգային քաղաքական պայմանավորվածությունների, երաշխիքների ձեռքբերման համար: Պետք է ենթադրել, որ արդեն մեկնարկել է Ուկրաինայի մասնատման ծրագիրը, որտեղ, ըստ էության, փորձում են անել այն, ինչ չհաջողվեց 1918-21թթ.:

Մոլդովա. Կոտովս-Տիրասպոլ գծից հարավ ընկած տարածքը անջատվելու է Մոլդովայից, նրան է միացվում Տիրասպոլ-Թաթարբունարի գծով մոլդովական սահմանից դուրս մինչև Սև ծով ընկած ներկայիս ուկրաինական տարածքը՝ որպես անկախացող տարածք: Սրանով է պայմանավորված մինչ օրս գոյություն ունեցող չկարգավորված մոլդովական հակամարտությունը:

Ռումինիա. Սևծովյան միացյալ պետության ստեղծման համար Ռումինիայից անջատվելու է Խուշի-Վասլույ գծից՝ Սիրատ գետով հարավ, մինչև Գալաց, այնտեղից Դունայ գետի ամբողջ արևելյան մասի տարածքը՝ մինչև Բուլղարիայի հետ հատման կետը, Կոնստանցիա կենտրոնով: Կարծում ենք Ռումինիայում առաջացած նախագահական ճգնաժամը պայմանավորված էր նրանով, որ Ռումինիայի իշխանությունները չխոչընդոտեն մասնատման գործընթացին: Ամեն դեպքում, ըստ Ռումինիայում անցկացված հանրաքվեի, Ռումինիայի նախագահը ստացավ կրկնակի հավաստիացում, որ կրողն է ժողովրդի հավաքական կամքի: Կարելի է ենթադրել, թե Ռումինիայի մասնատումը վստահված է նախագահին:

Հարավսլավիա. Մասնատվեց, իրականում, Սևծովյան ներուցներով Եվրոպա-Ասիա ճանապարհը մեկ պետության հսկողությունից հանելու և, ըստ էության, մի քանի փոքր խամաճիկ երկրների ստեղծման միջոցով՝ ԵՄ-ի կողմից անմիջականորեն վերահսկելու համար: Ներկա դրությամբ Հարավսլավիան, արդեն իսկ, մասնատված և նախապատրաստական առումով լիովին ավարտուն վիճակում է:

Բուլղարիա. Առաջիկայում սպասվում է ներքին՝ թուրք-մահմեդական սեպարատ ցնցումներ, որի արդյունքում՝ Բուլղարիայից կանջատվեն Ռումինիա-Բուլղարիա սահմանի Սելիստրա քաղաքից դեպի հարավ մինչև Թուրքիա-Բուլղարիա-Հունաստան երեք սահմանների հատման կետը ներառող Սևծովյան առափնյա տարածքը: Նշենք, որ սույն խնդիրը լուծելու համար էր, որ դեռ 1985-90-ական թթ. Բուլղարիայում նկատվեց թուրքական տարրի զանգվածային ներհոսք՝ որպես նախապատրաստական քայլ առաջիկա ծրագրերի:

Թուրքիա. Թուրքիայի մասնատման նախնական տարբերակը՝ առաջին քայլը, ներկայացված է Ռալֆ Պիտերսի քարտեզում, սակայն դա վերջնականը չէ: Քանզի դրան շարունակող երկրորդ և երրորդ փուլերը պայմանավորված են Թուրքիայի Սևծովյան և Միջերկրածովյան մասնակցության տարածքային մասերով: Ուշագրավ է, որ Եվրոմիությունը, գուցե թե անհանգստանալով ժամանակից շուտ արված բացահայտումներով և Թուրքիայի հետ բարիդրացիական հարաբերություններ դեռևս պահելու միտումով, իր ճշգրտումներն է մտցրել Ռալֆի քարտեզում, ըստ որի, Արևմտյան Հայաստանի տարածքի մեծ մասի վրա ստեղծվող և Սև ծովի հետ սահման ունեցող ապագա Քուրդիստան պետության հյուսիսային սահմանը իջեցրել է մինչև Նախիջևանի հատվածը, արևմուտքից և հարավից նույնպես փոքրացրել է այն, բավարարվելով ընդամենը ՔԲԿ-ի անկախություն պահանջող զինյալների տեղաբաշխման տարածքով, որպեսզի անհարկի ԵՄ-ի դեմ չլարի Իրաքին և Սիրիային նույնպես:

Հավանաբար Թուրքիայից անջատվելու են նեղուցներից դեպի արևմուտք եվրոպական մայրցամաքում եղած տարածքը՝ լեզվակը, որը կիսվելու է երկու հյուսիսային և հարավային մասերի՝ կամ որպես Բուլղարիային և Հունաստանին ենթակա ինքնավարություններ և կամ որպես ինքնուրույն տարածքներ: Դրանց հիմնական դերը լինելու է Բոսֆոր և Դարդանել նեղուցների անմիջական հսկողությունը:

Սևծովյան միացյալ պետության հաջորդ երկիրը նորաստեղծ **Քուրդիստանն է**՝ ըստ Ռալֆի քարտեզի: Մյուսը լինելու էր Կովկասյան միացյալ (Վրաստանը, **Հայաստանը**, Ադրբեջանը ներառող) պետությունը, որն, ըստ էության, 1995-ից առ այսօր հնարավոր չեղավ իրականացնել: Ուստի, 2003-ից սկսած ԵՄ-ը հրաժարվեց այն ստեղծելու քայլերից, քանզի այն ընդամենը միջանկյալ փուլ էր լինելու և ավարտվելու էր Սևծովյան և Կասպիի ընդհանուր պետությունների ստեղծման ժամանակ: Այդ պարագայում **Վրաստանը** և նրանից անջատված Աջարիայի և Աբխազիայի անկախ տարածքները ներառվելու էին Սևծովյան միացյալ պետության կազմի մեջ հավասարի իրավունքով, իսկ **Ադրբեջանը** (Կովկասյան միացյալ պետության տրոհումից հետո) տեղափոխվելու էր Կասպիի միացյալ պետություն:

Ռուսաստանը Սևծովյան միացյալ պետության հետ կապվելու է ընդամենը Ազովի ծովի միջոցով: Եվրո-ամերիկյան ալյանսը դեռ հույս ունի Աբխազիայից վերև ընկած հատվածը հյուսիս-կովկասյան ինքնավարությունների անջատողական անկախացման գործընթացով կտրել Ռուսաստանից: Որքանով դա կհաջողվի՝ ցույց կտա ժամանակը:

II. Միջերկրածովյան համագործակցություն (Միջերկրածովյան Միացյալ Նահանգներ)

Թե ինչպիսի՞ն կլինի Միջերկրածովյան համագործակցության ստեղծման, ասել է թե՝ որոշ երկրներից անկախացող որոշ տարածքների անջատման ընթացքը, ցույց կտա ապագան: Այդ դերում անկարևոր չէ Կիպրոսը իր քսանհինգամյա սառեցված հակամարտությամբ:

Համագործակցության կազմում, ի տարբերություն Սևծովյանի, առկա են երկու տեսակի՝ աշխարհաքաղաքական գործընթացները առաջնորդող և աշխարհաքաղաքական գործընթացներին ենթակա նորանկախ տարածքներ կամ երկրներ: **Առաջնորդողներից են** լինելու՝ Ֆրանսիան, Իտալիան, Իսրայելը: **Ենթականերից**՝ Իսպանիան և Մարոկկոն իրականացնում են Ջիբլարթարի նեղուցի եվրոմիութենական հսկողությունը: Ալժիրը: Թունիսը՝ երևի թե ենթակաների կառավարման կենտրոն: Լիբիան: Խորվաթիան, Չեռնոգորիան և Ալբանիան: Հունաստանը և նրան շարունակող, դեռևս Թուրքիային պատկանող եվրոպական լեզվակի մասը, որպես ԵՄ պատկանելիության տարածք, հսկելու է Դարդանելի նեղուցը, իսկ հյուսիսայինը, ինչպես նշեցինք, իր տեղում հսկելու է Բոսֆորի նեղուցը: Թուրքիան՝ իր հարավային մասով, հսկելու ծովը և երևի թե նաև նեղուցների արևելյան հատվածը: Եգիպտոսը վճռորոշ դեր ունի, քանի որ Սուեզի ջրանցքով է իրականացվում Սև ծովից Կարմիր ծով անցումը (պատահական չէ այդ երկրի նկատմամբ ԱՄՆ-ի և Իսրայելի մեծ ազդեցությունը): Եգիպտոսից հետո, ըստ Ռալֆի քարտեզի տրամաբանության, Միջերկրական ծովի արևելյան ամբողջ ափեզրը դրվելու է Իսրայելի և Լիբանանի հսկողության տակ:

Կասպիական համագործակցություն (Կասպիի Միացյալ Նահանգներ)

Հարավային մասով, ըստ Ռալֆի նորացված քարտեզի, Իրանն է՝ փոքրացված մասով: Հարավ-արևմուտքից ընդարձակված նոր Ադրբեջանը, որը ներառել է հին Ադրբեջանը, հայկական Նախիջևանն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ որպես այլևս գոյություն չունեցող իրողություններ: Այժմ բացատրելի է Արցախյան հիմնախնդրի արևմտյան «սառեցված հակամարտություն» հասկացողության 12-ամյա այս քաղաքական խաղերը: Բացատրելի է նաև առ այսօր Դաղստանում չդադարող գործընթացները, քանզի այն պետք է անջատվի Ռուսաստանից և, որպես անկախություն ձեռք բերած տարածք, ներառվի Կասպիի միացյալ պետության մեջ: Այս գործընթացին լրջորեն խանգարեց այն, որ Չեչնիան չհաջողվեց կտրել Ռուսաստանից: Հյուսիսային մասով մասնակից պետություն կլինի Ռուսաստանը, հյուսիսարևելյան մասով՝ Ղազախստանը, իսկ հարավարևելյան մասով՝ Թուրքմենստանը: Ենթադրվում է, որ Կասպիին հարող տարածք կտրամադրվի նաև Ուզբեկստանին:

Պարսից ծոցի երկրների համագործակցություն (Պարսից Ծոցի Միացյալ Նահանգներ)

Ըստ Ռալֆի քարտեզի, Կարմիր ծովի և Պարսից ծոցի հսկողությունը իրականացնելու են Կարմիրծովյան (V) և Պարսից ծոցի (IV) Միջինարևելյան ընդհանուր պետության հսկողության տակ դրվող կառույցների երկրների միջոցով: Պարսից ծոցի հսկողությունը մի մասով իրականացվում է Միջինարևելյան երկրների (Արաբ շիա նահանգի), մյուս կողմից՝ Միջերկրածովյանի մաս կազմող եվրո-ամերիկյան հսկողության Քուվեյթի, Քատարի, ՄԱԷ-ի և Օմանի կառույցի կողմից:

Պարսից ծոցի արտաքին հսկողությունը դրվում է Քուվեյթի, Քատարի, ԱՄԷ-ի և Օմանի վրա: Իսկ Կարմիր ծովի արևմտյան և հյուսիսային մասերի հսկողությունը կկատարի այսպես կոչված Կարմիրծովյան համագործակցությունը՝ Եգիպտոսի, Սուդանի, Էրիտրայի և Եթովպիայի միջոցով:

Կարմիր ծովի երկրների համագործակցություն (Կարմիր Ծովյան Միացյալ Նահանգներ)

Կարմիրծովյանը հսկողություն է սահմանելու արևելյան ափով Միջին արևելյան նահանգներին պատկանող ընդարձակված Հորդանանի, Իսլամական Սուրբ Նահանգի, Սուդյան Հայրենիքի և Եմենի կողմից: Արևմտյան ափեզրով՝ Եգիպտոսի, Էրիտրայի կողմից, ինչպես և Սուդանից անջատվող ափամերձ և Սոմալիից անջատվող տարածքով: Կարծում ենք հարկ չկա բացատրել Սուդանում և Սոմալիում տեղի ունեցող արյունալի դեպքերի բուն պատճառները, սովը, համաճարակը, Դարֆուրի ցեղասպանության գործընթացն ու միջազգային խաղարարների միջնորդական ու բարեգործական առաքելություններն ու գործողությունները:

Աշխարհի ցամաքային միաբևեռ ղեկավարման համակարգի ներկայիս ծրագրերը.

Ցամաքային ռեգիոնալ նահանգներից են 1. Եվրոմիությունը (Եվրոպայի միացյալ նահանգներ, վարչական կենտրոնը՝ Բրյուսել), 2. Նոր Միջին Արևելքը (վարչական կենտրոնը՝ Բաղդադ՝ որպես քաղաք պետություն), 3. Միջին Ասիայի միացյալ նահանգները (վարչական կենտրոնի հարցը դեռ ճշտված չէ), 4. Աֆրիկյան Երկրամասը՝ որպես Մեծ ութնյակի շահերին համապատասխան բաժանվածության ամբողջական տարածք (վարչական տարածքներն ու կառավարման կենտրոնները կճշտվեն Մեծ ութնյակի կողմից՝ հետագա գագաթաժողովների ընթացքում), 5. Ճապոնական, Կորեական և Կամչատկայի կղզիների միությունը, 6+7. Հեռավոր Արևելյան միացյալ պետությունը իր մեջ ներառնում է՝ 6. Կամչատկայի երկրամասն ու Չուկոտկայի տարածքը, 7. Ալյասկան:

Եվրոպական Միություն (Եվրոպայի Միացյալ Նահանգներ)

Առաջին շրջանակում Եվրոմիությունն է. սկիզբ է առնում է 1957-ից, ընդամենը որպես միջպետական եվրոպական հարաբերություններ: Բուն ծրագրային խնդիրը երևաց 2005-ին, վերազգային կառավարման նոր պետության, գերտերության ստեղծման ջանքերով: Ասել է թե՝ 1985-ով ինքնալուծարման գնացած ԽՍՀՄ-ին փոխարինելու է գալիս Եվրոմիությունը: Մոսկվային՝ Բրյուսելը: Սոցիալիզմին՝ կապիտալիզմը, իսկ կոմունիզմին՝ գլոբալիզմը, առանց փոխելու իրենց բուն նշանակությունները:

Մասամբ արդեն իրագործվել է Եվրոպական Միություն (ԵՄ): Որպես նահանգներ՝ հետագայում պետք է ներառի չորս մասի բաժանվող Ռուսաստանի արևմտյան՝ (եվրոպական կոչվող) մասը, և Ռուսաստանի ու Եվրոպայի միջև գտնվող բոլոր երկրները: Ընդ որում, Ուկրաինան ԵՄ-ին կմիանա մասնատվելուց՝ հարավը՝ Ղրիմի, Խերսոնի, Նիկոլաևսկի և Օդեսայի մարզը Ուկրաինայից անջատելուց և ԵՄ-ին միացնելուց հետո միայն, նույնաբար Մոլդովան և Ռումինիան:

Միջին Արևելքի երկրների Միություն (Միջին Արևելքի Միացյալ Նահանգներ)

Որպես Արևմուտքի կողմից Միջին Արևելքի նկատմամբ ծրագրված և հետևողականորեն իրականացվող, այսպես կոչված աշխարհի գլոբալացման ընդհանուր ծրագրի բաղկացուցիչ մաս կից տրվող քարտեզների հետ միասին համառոտ ներկայացրել ենք «Ուխտ Արարատի» թիվ 4 (10), 2006 թ. համարում «Մերձավոր Արևելքի «դեմոկրատացման» նախագիծը միջազգային մեծ դավադրության ծրագիր» հոդվածում:

Միջին Ասիական երկրների Միություն (Միջին Ասիական Միացյալ Նահանգներ)

Կարծում ենք ավելացնելու հարկ չկա, եթե ընդամենը հիշենք՝ 1986-ից առ այսօր այդ երկրներում դրսից և ներսից թելադրվող և իրականացվող հասարակական, քաղաքական և ռազմա-քաղաքական բոլոր գործընթացները՝ ըստ իրենց ժամանակային հաջորդականության և վերը ներկայացված տրամաբանության:

Աֆրիկյան Երկրամաս (Աֆրիկայի Միացյալ Նահանգներ)

Վերջերս Գերմանիայում Մեծ ութնյակի գագաթաժողովի օրակարգի աննախադեպ իրողությունը ութնյակի տերությունների հոգածությունն էր Աֆրիկայի նկատմամբ: Ակնհայտ էր, որ քննարկվել և համաձայնության է բերվել Աֆրիկա մայրցամաքը՝ իր բնական և մարդկային ռեսուրսներով, Մեծ ութնյակի երկրների միջև բաշխելու խնդիրը: Սա կմնար ընդամենը վերլուծություն - ենթադրություն, եթե շաբաթը ուրբաթից շուտ չգար. հուլիսի 1-ին Աֆրիկյան երկրների 9-րդ գագաթաժողովը առաջարկեց, Եվրոմիության օրինակով, Աֆրիկայի Միացյալ Նահանգներ՝ համաաֆրիկյան պետություն կառուցել: Առաջարկվեց նաև ստեղծել Աֆրիկայի Միացյալ Նահանգների զինուժ՝ 2 միլիոն թվակազմով: Սրանով ամեն ինչ ասված է:

Ճապոնական, Կորեական և Կամչատկայի կղզիների միություն

1950-ականների երկբևեռության շրջանից ԱՄՆ-ի մշտառկա դիրքորոշմամբ Կորեան, որպես «չարության առանցքի երկիր», թիրախ է Արևմուտքի համար, որ նպատակ ունի Ճապոնիայի հսկողության տակ դնել երկու՝ Հյուսիսային և Հարավային Կորեաները, ինչպես և դեռևս հույսով՝ Ռուսաստանից անջատելիք Կուրիլյան կղզիները, որով, ըստ էության, փորձում են ստեղծել Ճապոնական և Ախոտի ծովերը հսկող ցամաքային ընդհանուր պետություն:

6+7. Հեռավոր Արևելյան միացյալ պետությունը իր մեջ ներառնում է՝ 6. Կամչատկայի երկրամասն ու Չուկոտկայի տարածքը, 7. Ալյասկան:

Թարմացնելով անցյալ դարասկզբի մեր հիշողությունը, երբ 1919-22թթ. Սովետական Ռուսաստանի հեռավոր արևելյան մի մեծ հատված անկախացել էր Ռուսաստանից,

որպես Հեռավոր Արևելյան Հանրապետություն, նաև հիշելով գորչաբով-ելցինյան շրջանում Հեռավոր Արևելքում տեղի ունեցած սոցիալական, հասարակական հայտնի իրողությունների տրամաբանությունն ու ընթացքը, հայտնագործություն արած չենք լինի, եթե ասենք, որ Աշխարհի Միացյալ Նահանգների ծրագրային մոտեցման մեջ առանձնակի դեր պետք է ունենա Հեռավոր Արևելյան Միացյալ Նահանգներ անվանումով պետության ստեղծումը Չուկոտկան և Կամչատկայի երկրամասը Ռուսաստանից անկախացնելու և ԱՄՆ-ից անկախացած Ալյասկային միանալու միջոցով: Այն բացարձակ հսկողություն կսահմանի Բերինգի նեղուցի և Չուկոտյան ու Բերինգյան ծովերի վրա, դառնալով կապող և անջատող օղակ եվրասիական և ամերիկյան մայրցամաքների միջև: Այս կերպ Ռուսաստանին դեռևս, եթե դա իրոք այդպես է նախատեսված, թողնվելու է միայն հյուսիսային սառուցյալ ափերը:

Եզրակացություն

Աշխարհին տիրելու 2000-ամյա պատմության մեջ նախադեպը չունեցող այս ծրագիրը, որն ինչպես հայտնի է շուրջ վաթսուն տարի է ինչ դրվել է գործողության մեջ, ակնհայտ է, որ բերելու է համաշխարհային նոր աղետների: Հարց է ծագում, Երկրորդ աշխարհամարտի աղետի փորձից ելնելով ծնունդ առած Միավորված Ազգերի Կազմակերպությունը, որը ստեղծվել էր ոչ միայն աշխարհի հետպատերազմյան խնդիրները կարգավորելու, այլև համաշխարհային նոր տարատեսակ և տարաբնույթ ցնցումները կանխարգելելու, ինչո՞ւ չկարողացավ, համաձայն իր կանոնադրության և պատերազմներն ու ցեղասպանություններ կանխարգելող կոնվենցիաների, իր նշանակության բարձրակետում լինել: Ի՞նչ է, թերություննե՞ր կային կանոնադրության մեջ, թե՞ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, կամ միգուցե բավարար միջազգային իրավական հի՞մք չկար պատերազմի, ազգամիջյան հրահրումների, հակամարտությունների ու ցեղասպանությունների (էթնիկ զտումների) գործընթացները դեռևս իրենց ծրագրման և քարոզչության շրջանում միջազգայնորեն արգելափակելու, իսկ մարդատյաց հանցագործներին, քարոզիչներին ու նրանց հովանավորներին մինչ աղետը պատասխանատվության կանչելու համար:

Սարսափելին ու աններելին միջազգային քաղաքական կյանքում այն է, որ նախկին ու ներկայիս որոշ տոտալիտար, հանցագործ երկրների դատարանների նման ՄԱԿ-ի Հաագայի միջազգային դատարանը վերածվել է աշխարհին տիրելու գործընթացներին ընդդիմացող մարդկանց պատժող գործիքի: Ի՞նչ է, սա էլ ՄԱԿ-ի կանոնադրությանն ու միջազգային դատարանի ստատուսին համապատասխա՞ն մի բան է: Ակնհայտ է, աշխարհին տիրելու վերջին այս փորձն արվում է գերտերությունների թելադրանքային միջնորդությամբ մարդկության և ազգերի առջև բարոյազրկելու ՄԱԿ-ը՝ այդ կերպ իմաստազրկելով նրա գործունեությունն ու գոյությունը: Չէ՞ որ Միացյալ Ազգերի Կազմակերպության սթափվելու պարագայում, երբ այն վերագտնի իր բուն առաքելությունը, ոչ միայն վերջ կդրվի Աշխարհի Միացյալ Նահանգներ ստեղծողների սին երազներին, այլև պատասխանատվության կկանչվեն 1940-ականների վերջերից Երկիր մոլորակի վրա առ այսօր բոլոր լոկալ և ոչ լոկալ պատերազմների, հակամարտությունների հրահրողները, կազմակերպողները, հովանավորներն ու իրագործողները:

Ո՞ւմ են պետք միջազգային, բազմազան, իբրև թե տնտեսական, ռազմա-քաղաքական նպատակներով կազմվող տարածքային պատկանելիության նորահայտ պետությունները, որոնք ներկայացվում են, որպես աշխարհի խաղաղ համակեցությունը մեկ կենտրոնից ղեկավարելու անհրաժեշտությունից մղված քայլեր, երբ հազարամյակների փորձից հայտնի է, որ մարդկությունը, որպես գլոբալ քաղաքակրթական մեկ ընդհանրություն, բնականից իսկ ինքնակարգավորվող և ինքնակառավարվող կառույց է:

Մարդկության խաղաղ համակեցության, քաղաքակրթական ընդհանուր անվտանգության միակ կառույցը, ըստ իր կանոնադրության, Միջազգային Ազգերի Կազմակերպությունն է:

Հայաստան

Ինչպես երևում է ներկայացված քարտեզում նորաստեղծ և ստեղծվելիք ծովային և ցամաքային այս պետությունների բախումների կիզակետում գտնվող Հայաստանի տեղից ու դիրքից, նաև Ռալֆի քարտեզում և տեքստում էթնիկ զտումներով ներկայացվող մեր ներկա ու ապագա հեռանկարից, այսօրվա Արևմուտքը բավարարված չէ անցյալ դարասկզբի իր կողմից հրահրված և իր հանցագործ գործիք հանդիսացող Թուրքիայի միջոցով իրականացված Հայերի ցեղասպանության արդյունքից: Եթե մեկ - երկու տասնամյակ առաջ դեռ քաղաքագիտական առումով վիճահարույց էր անցյալի 1918-23թթ. Արևելյան Հայաստանում հայերի ցեղասպանությունը ավարտին բերելու հարցադրումը, ինչպես և ԽՍՀՄ ինքնափլուզման ծրագրում այն մաս դարձնելու խնդիրը, ապա առնվազն 2003-ից (չհիշատակելով անգամ 1988-2000թթ. ընկած բոլոր արևմտյան և այլոց Հայաստանին և Արցախին ծնկի բերելու ջանքերը), ապա դրանից հետո Եվրոմիության, նրա տարբեր կառույցների ընդհանուր դեսանտի կողմից սահմանադրական - օրենսդրական ներխուժումների փաստացի իրողությունից կարելի է անվարան պնդել, որ այսօր ևս ծրագրում են ծնկի բերել Հայաստանն ու հայությունը: Հետո ինչ, որ սա թուրքի յաթաղան չէ, այլ իբրև թե ադրբեջանա-թուրքական ազգատյացության ու հայերի կողմից, իբրև թե՝ համաձայն երկրի սահմանադրության և օրենքների, իրենց երկրից հրաժարվելու միջազգայնորեն իրավական, հենց հայի ձեռքով հայի տունը ոչնչացնելու իրողություն: Ճչացող փաստ է, որ եվրո-դեսանտի՝ Վենետիկի, Ագոյի և մնացած խմբերը ամեն ինչ անում են, որ իրենք և իրենց կառույցները պատասխանատու չլինեն հայության հանդեպ սանձազերծված նոր հանցագործությունների համար:

Սակայն, սույն վերլուծականով տրվեց համաշխարհային մեծ վայրիվերումների ուրվագծվող պատկերը: Անհրաժեշտ նվազագույն վերլուծությունը կատարված է: Առանցքային ասելիքն՝ ասված: Բոլոր կասկածամիտներին, միջազգային առկա իրողությունը կեղծ արժեքներով ու ծուռ հայելիների միջոցով տեսնողներին մի խորհուրդ ունենք տալու. ժամանակագրական մեկ առանցքի վրա տեղադրել բոլոր նշված երկրների ու տարածաշրջանների առնվազն 1900-ից առ այսօր տեսած ու ապրած քաղաքական մեծ ու փոքր դեպքերն ու գործընթացները, իսկ դրանց տրամաբանությունը, կատարման հետևողականությունը նայել՝ ըստ նշված ծրագրային ուղղվածության: Ինչպես մարդկության, այնպես էլ յուրաքանչյուր երկրի, ժողովրդի անցած և ապրած կյանքը, որպես կատարված փաստացի իրողություն, մեկն է: Ուստի, և մեկն է իսկությունը նկարագրող, պատմականորեն ամրագրված ճշմարտությունը, մնացյալը իմաստազուրկ է:

Մնում է ճշտել, թե որո՞նք են լինելու ավելի քան վտանգավոր այս իրողությունից՝ Արևելքի և Արևմուտքի, Հյուսիսի և Հարավի լոկալ հակամարտություններն ու մարտահրավերները դիմագրավելու, լինելուն ու հարատևելուն գնալու, աշխարհի բոլոր մեծ ու փոքր ժողովուրդների հետ խաղաղ ստեղծագործ ապրելու, Աստծո կողմից համայն մարդկությանն ու յուրաքանչյուր ազգին տրված քաղաքակրթական զարգացման ճանապարհն անցնելու, աշխարհի գլոբալ քաղաքակրթական զարգացման մեջ ուրույն հայեցի ներդրում կատարելու հարցադրումների պատասխաննե՞րը:

Ծանոթագրություն

1. Տրոցկու հոդվածը տե՛ս «Ժիզն նացիոնալնոստեյ», 4 մարտի 1921թ., Մոսկվա, կամ «Ուխտ Արարատի», թիվ 2 (8), 2006թ.:

ԱՇԽԱՐՀԻ ՄԻԱԿԵՆՏՐՈՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒԺԱՅԻՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՆՈՐ ԿԱՌՈՒՅՑԻ ԾՈՎԱՅԻՆ ԵՎ ՑԱՄԱՔԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Քարտեզում ներկայացված է աշխարհի միակենտրոն ղեկավարման ռազմա-քաղաքական գլոբալ կառավարման համակարգի ստեղծման սկզբունքային պատկերը (միակենտրոնությունը պետք չէ շփոթել միաբևեռության հետ, քանզի միաբևեռ ասվածը ենթադրում է որոշակի գերտերություն՝ իր պետական համակարգով և պատասխանատու ղեկավար անձերով): Ըստ քարտեզի տրամաբանության, Եվրոպա, Ասիա և Աֆրիկա մայրցամաքների երկրներին ծնկի բերելու, դրսից միակենտրոն ղեկավարման թելադրանքին ենթակա պահելու համար, արդեն իսկ, անթաքույց փորձ է արվում ստեղծել միջազգային ղեկավարման (միևնույն նպատակն իրագործող) ցամաքային և ծովային լիովին նոր տիպի կառույցներ: Ծովային յուրաքանչյուր առանձին կառույց, որպես առափնյա նոր ընդհանուր պետություն, ֆունկցիոնալ առումով, իսկում է բոլոր (ծովային և ցամաքային) երկրների ծովային մուտքերի և ելքերի վրա. ընդհուպ՝ թույլ տալու կամ արգելելու, միջնորդված իրավասության սկզբունքով: Ակնհայտ է, որ ծովային բոլոր կառույցները միասին, որպես միևնույն տրամաբանության և մեկ ընդհանուր խնդիր իրագործող միակենտրոն ղեկավարման կառույց, փաստորեն, ծուղակ է գցելու այդ երեք երկրամասերի յուրաքանչյուր երկրի, հարկադրելով նրան, մասամբ կամ ամբողջապես, հրաժարվել ժողովրդավարության կառուցման և իրականացման չորս բնական հիմնասյուներից՝ ազատությունից, անկախությունից, ինքնիշխանությունից և մարդու իրավունքներից:

Ծովային մեխանիզմներ. I. Սևծովյան առափնյա միացյալ պետություն (միաժամանակյա հսկողություն է իրականացնում եվրոպական ու Նոր Միջին Արևելքի տարածքների երկրների և Ռուսաստանի նկատմամբ), II. Միջերկրածովյան առափնյա միացյալ պետություն (հսկողություն է իրականացնում Եվրոպա - Նոր Միջին Արևելք - Աֆրիկա տարածքների երկրների նկատմամբ), III. Կասպիական առափնյա միացյալ պետություն (Կովկասի ու Միջինասիական երկրների և Ռուսաստանի նկատմամբ), IV. Պարսից ծոցի առափնյա միացյալ պետություն (ներառված լինելով Նոր Միջին Արևելքի տարածքում, կրկնակի հսկողություն է իրականացնում Պարսից ծոցում), V. Կարմիրծովյան առափնյա միացյալ պետություն (նույն կերպ՝ կրկնակի հսկողություն է իրականացնում Կարմիր ծովում), VI. Հեռավոր Արևելյան միացյալ պետություն (ներառելու է՝ Ռուսաստանից անկախացող Կամչատկայի երկրամասն ու Չուկոտկայի տարածքը, Արևելքից՝ Ալյասկան: Հսկելու է Բերինգի նեղուցը, Բերինգի ու Չուկատկայի ծովերը):

Ցամաքային մեխանիզմներ. 1. Եվրոպական տարածաշրջանում Եվրոմիությունը (միությունը վերազգային կառավարման ընդհանուր պետության վերածելու առաջին անհաջող փորձը կատարվեց 2005-ին, 2007-ից սկսվել է «անհաջողությունը» հաղթահարելու, սահմանադրությունը՝ իբրև պայմանագիր պարտադրելու գործընթացը), 2. Ասիականում՝ Նոր Միջին Արևելքը՝ ըստ Ռալֆի քարտեզի (եվրո-ամերիկյան ծրագիր), 3. նախկին ԽՍՀՄ-ի Միջին Ասիական երկրների տարածքը (ամերիկյան ծրագիր), 4. Աֆրիկյան տարածքն ամբողջությամբ (Մեծ ութնյակի ենթակայության և փոխադարձ համաձայնության ղեկավարման ծրագիր), 5. Ճապոնիան, Կորեան և Կամչատկայի կղզիները ներառող տարածքը (եվրո-ամերիկյան ծրագիր), 6+7. Հեռավոր Արևելյան միացյալ պետություն. իր մեջ ներառում է՝ 6. Կամչատկայի երկրամասն ու Չուկոտկայի տարածքը, 7. Ալյասկան:

...ԵՐԲ ՓԱՅՏԸ ՇՆՉՈՒՄ Է

Մեր օրերի ինքնատիպ ու տաղանդավոր քանդակագործներից մեկն է Նաիրի Սաֆարյանը: Արմատները Արցախից են, ինքն էլ ծնվել է Շուշիում՝ ուսուցիչների ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի դպրոցում, այնուհետև ընտանիքի հետ տեղափոխվել է Երևան: Բարձրագույն կրթությունը ստացել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում, մասնագիտությամբ ինժեներ - էներգետիկ է: Քանդակագործությամբ սկսել է զբաղվել ուսանողական տարիներից. համակուրսեցիների հետ կազակերպում էին խմբակային ցուցահանդեսներ՝ ներկայացնելով իրենց աշխատանքները, մեկը՝ նկարներ, Նաիրի Սաֆարյանը՝ քանդակներ, աղջիկները՝ ձեռագործ աշխատանքներ:

«Իմ առաջին աշխատանքը եղել է «Արցախցի պապիկը» քանդակը: Այս քանդակը իմ պապիկի նախատիպն է՝ հիշողությունների արդյունք: Արցախում բոլոր պապիկները նման են միմյանց, և կարելի է ասել, որ այս կերպարը հավաքական է»,- ասում Նաիրի Սաֆարյանը:

Ն. Սաֆարյանի ստեղծագործական աշխատանքները առանձնահատուկ են. դրանք բոլորը միածույլ են, այսինքն՝ պատրաստված են փայտի մեկ ամբողջական կտորից: 1991-ից, թողնելով ինժեների մասնագիտությունը, նա միայն զբաղվել է քանդակագործությամբ: Նաիրի Սաֆարյանի քանդակներում առկա է բարի լույսն ու սերը, որոնց մեծ մասում գերիշխում է խաղողի ողկույզը:

«Հայաստանի Հանրապետության անկախությունը արվեստագետին ազատ և անկաշկանդ ստեղծագործելու հնարավորություն տվեց, և յուրաքանչյուրն իր ստեղծագործությունում յուրովի է ներկայացնում անկախության՝ ազատության իր ընկալումը: Հայաստանի Հանրապետության անկախության ծնունդով ես սկսեցի զբաղվել քանդակագործությամբ: Իմ աշխատանքները ինձ համար շատ թանկ են ու սիրելի: Անսահման սիրո ու նվիրումի արդյունք են դրանք: Մի քանդակի վրա աշխատելիս արդեն մտածում եմ հաջորդի մասին»,- ավելացնում է Նաիրի Սաֆարյանը:

Ստեղծագործական վաղ շրջանից, երբ Ն. Սաֆարյանը դեռ ուսանող էր, նրա ստեղծագործական աշխատանքները շատերի կողմից էին հավանության արժանանում, հատկապես՝ ընկերների: Սակայն Նաիրի Սաֆարյանի ընտանիքը քանդակագործությունն այդքան էլ լուրջ մասնագիտություն չի համարել...:

«Մի օր եղբայրս Արցախից հեռաձայնեց և հարցրեց թե ինչո՞վ եմ զբաղվում: Ասացի աշխատում եմ: Շատ ուրախացավ, մտածեց «լուրջ աշխատանք» ունեմ արդեն: Հարցրեց, թե որտե՞ղ և որպես ի՞նչ եմ աշխատում: Պատասխանեցի՝ տանը զբաղվում են քանդակագործությամբ: Իմ նոր աշխատանքը, կարծես՝ նրան չգոհացրեց...»,- հիշում է նա:

Նաիրի Սաֆարյանը արտասահմանում բազմիցս մասնակցել է միջազգային ցուցահանդեսների և արժանացել մրցանակների: 2002-ին, Կալիֆորնիայում մասնակցելով միջազգային ցուցահանդեսի, Նաիրի Սաֆարյանը ստացել է Առաջին մրցանակ: Նույն թվականին դարձել է Կալիֆորնիայի քանդակագործների միության անդամ: Օտարազգի քանդակագործների խնդրանքով դասավանդել է Յուտա նահանգում: Ն. Սաֆարյանը օտարազգի արվեստասեր հասարկության շրջանում ավելի մեծ ճանաչում ու գնահատանք ունի, քան Հայաստանում: Ցավալի է, մեր օրերում, այսօրինակ անտարբերության են արժանանում ոչ միայն մեր գիտնականները, մտավորականները, այլև տաղանդավոր արվեստագետները:

Նաիրի Սաֆարյանը պատրաստվում է մասնակցել ԱՄՆ-ում կայանալիք առաջիկա ցուցահանդեսին:

Հետաքրքիր է, արվեստագետի ստեղծագործական տաղանդը փոխանցվել է իր դստերը՝ Լարիսա Սաֆարյանին: Լարիսան նկարում և փորագրում է ձվի կեղևի վրա:

ԴԻԱՆԱ ՄԱԿԻՆՅԱՆ

Արվեստագետի աշխատանքները տես գունավոր էջում:

ՎԱՇԻՆԳՏՈՆԸ ՊԵՏՔ Է ԱԼԲԱՆԱՑԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐ ՀԱՄԱԿՐԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑ ԳՏՆԻ

Սերբիայի վարչապետ Վոյիսլավ Կոշտունիցան հայտարարել է, որ ԱՄՆ-ը Կոսովոյի անկախության միակողմանի ճանաչման դեպքում սխալ կգործի, որը նոր բռնության պատճառ կդառնա:

ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշը, ելույթ ունենալով Ալբանիայի մայրաքաղաք Տիրանայում, հայտարարել է, որ Վաշինգտոնը պնդելու է Սերբիայից Կոսովոյի անջատումը և չի բացառել միակողմանի կարգով սերբական հարավային երկրամասի անկախության ճանաչումը:

«Ամերիկան, իհարկե, կարող է իր շահերին համապատասխան պաշտպանել այս կամ այն պետություններին կամ ժողովուրդներին, բայց դա նրան իրավունք չի տալիս որևիցե մեկին «նվիրել» այն, ինչը նրան չի պատկանում: Վաշինգտոնը կարող է և պետք է ալբանացիների նկատմամբ իր համակրանքի արտահայտման այլ միջոց գտնի,- ասված է Վ. Կոշտունիցայի հայտարարության մեջ:

(12. 06. 2007թ., «Հայաստնի Հանրապետություն»)

ԻՄ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՀԵՏ

1969 թվականի հոկտեմբերի 22-ը անմոռաց օր է իմ կյանքում. մինչ բուհում սովորելս ասմունքի դասեր էի սերտում հանրապետության հայտնի դերասանուհի-ասմունքող Սիրվարդ Մեսրոպյանի մոտ: Հարգելով խնդրանքս՝ նա ինձ տարավ Հովհաննես Շիրազի տուն: Հրճվանքի մեջ էի, չէի պատկերացնում, որ Հ. Շիրազին այդքան մոտիկից պիտի տեսնեի: Տիկին Սիրվարդը խրատել էր՝ սկզբում արտասանել Վ. Տերյանի «Էստոնական» բանաստեղծությունը, հետո՝ Շիրազի «Գարնանամուտ»-ը: Երբ մոտեցանք դռանը, սրտիս զարկերն էլ ավելի արագացան, դուռը կիսաբաց էր, միջանցքում երեխաների հետ մեզ դիմավորեց տիկին Շուշանը: Բանաստեղծը զբաղված էր. հյուրեր ուներ՝ մանկավարժներ էին Սփյուռքից: Պիտի սպասեինք: Այդ ընթացքում ակնապիշ դիտում էի շուրջբոլորս. հասարակ «մի տուն՝ լիքը մանուկների» աղմուկով, ծիծաղով ու չարաճճիություններով: Հյուրերին ճանապարհելուց հետո, նեղ միջանցքից դեպի մեր կողմը թեքվեց բանաստեղծը՝ սպիտակահեր, համակրելի, անհանգիստ շարժուձևով, տխուր ժպիտը դեմքին… Հարազատորեն բարևեց տիկին Մեսրոպյանին՝ իր անտիպ ստեղծագործությունների լավագույն կատարողին, վերջինս էլ ներկայացրեց ինձ. «Իմ սաներից մեկն է, ստեղծագործում է ու տպագրվում, սիրում է պոեզիա, չնայած լիրիկապաշտ են իմ սաները, բայց նա անգիր գիտե ձեր բոլոր ստեղծագործությունները...»:

Վարպետը մեզ հրավիրեց սենյակ: Մինչ նրանք մտերմիկ զրույցի էին բռնվել, ես դիտում էի նրա սենյակը, ուր գրասեղանն էր, վրան՝ սև հեռախոս, գրքերով, թղթերով լեցուն: Գրասեղանի դիմաց մահճակալն էր, մյուս կողմում՝ մեծ գրապահարանն էր, մեջը՝ նվերներ, զանազան մասունքներ, հատակին՝ գրքերի դարսեր, թղթերի կույտեր, թերթերի, ամսագրերի կապոցներ…: Պատից կախված էր պոետի մոր՝ Աստղիկի նկարը, Զորավար Անդրանիկի, Վարդան Մամիկոնյանի պատկերները: Նկատելով հետաքրքրությունս՝ Հ. Շիրազը ցույց տվեց սեղանին դրված փոքրիկ տոպրակը. «Տեսե՛ք, սրա մեջ Կարսից բերված հող է, բանտված էրգրիս հողը, պապերիս հողը, որ հիմի հազար զնդանի տակ է փակված: Հողը, մի փոքրիկ, մի բուռ, որի մեջ մեր արյունն է շաղախված…»: Բեյրութցի մանկավարժ հյուրերն էին «պատիվ արել» այդ ամենաթանկ մասունքը: Հետո վարպետը իմ կողմը թեքվելով՝ մտերմիկ հարցրեց. «Որտեղի՞ց են արմատներդ անուշիկս և ինչի՞ մասին ես գրում…»: Փոքր-ինչ շփոթված ասացի, որ 1838-ին նախնիներս էրզրումից Ջավախք են գաղթել, ես էլ ծնվել եմ այնտեղ, դեռ մանկուց բանաստեղծություններ եմ գրում Հայրենիքի մասին: Նա ծիծաղեց. «Եվ միայն հայրենի՞քի և որի կողքին չկա սե՞ր ու զինվո՞ր, էլ ի՞նչղ ադ կրնա դառնալ բանաստեղծություն, արտասանիր, լսենք»: Հուզված էի, չգիտեի, թե որն ընտրեի: Այդ պահին տիկին Սիրվարդն իմ փոխարեն սկսեց արտասանել իմ հետևյալ տողերը՝ «Քամին աչքիս երգ է թվում…», հետո լռեց, մնացածը ես շարունակեցի: Երբ վերջացրեցի Շիրազն ասաց. «Այդտեղ միայն մի քամի կար ու մի աղջիկ, որին այդ զորեղ մրրիկը քշում-տանում է, էլ ո՞ւր կորավ այն գաղափարը, որը քեզ պիտի տանի Սիփան ու Վան, Գրգուռ և Մուշ: Դու ծանոթ չե՞ս Չարենցի «Քամի» բանաստեղծությանը, մեծերին կարդա, որ մեծ դառնաս, կարդա պատմական վեպեր, ուսումնասիրիր հայոց պատմությունը, մեր հարուստ պոեզիան»: Ընդմիջելով ասացի, որ նախընտրում եմ պոեզիան, հիշեցրեցի, որ Հայոց պատմությունը Ջավախքի ուսումնական ծրագրերում ընդգրկված չէ...: Տեսնել էր պետք Վարպետի զայրույթը. «Վրացիներին մենք միշտ էլ եղբայր ենք համարել, բայց...: Ի՞նչ մեղք ունեն անմեղ ու միամիտ մարդիկ, նրանք ի՞նչ անեն, երբ վերևներում ոհմակներով գայլեր կան…: Եվ Ջավախքը, Ղարաբաղը այդ գայլերի կոկորդում մնացած շատ խոշոր ոսկորներ են…»:

Այդ օրը Շիրազն ինձ «գրանցեց» իր ընտանիքի մատյանում, ասելով. «Դու և հայրենախոս ես և քնարապաշտ, ուրեմն կլինես իմ «պարտիզանների» շարքում. կգաս մեր տուն, ուսանողները քեզ ինչ-որ հանճնարարեն, կատարիր պարտաճանաչությամբ, վստահությամբ, նրանց չդավաճանես, չստես, միշտ եղի՛ր բերանփակ»: Նրա տիկնոջ խոսքը պակաս կարևոր չէր. «Մեր տուն մտնող-դուրս եկողները հայի կերպար ու նկարագիր պիտի ունենան: Վարպետի թիկունքը հաճախ է խոցվում, դուք՝ երիտասարդներդ պիտի նրա «մեծ ուխտի» կողքին լինեք՝ որպես հավատավորներ»:

Շիրազի տանը տարաբնույթ հանդիպումներ ու քննարկումներ էին լինում, որոնց մասնակցում էին գրականության, մշակույթի, արվեստի, երկրի ու ժողովրդի բախտով մտահոգ մտավորականներ (այդ թվում նաև սփյուռքահայեր)՝ Խաչիկ Դաշտենց, Լևոն Ներսիսյան, Ազատ Շերենց, Երվանդ Քոչար, Սուրեն Աղաբաբյան, Էդվարդ Ջրբաշյան, Սամվել Մուրադյան…:

Հիշում եմ, երբ պոետի երեխաները դուռը բացում էին հյուրերի առաջ, նախ՝ տնտղում էին, հետո՝ ցածրաձայն ասում. «Հայրիկը տանը չէ»: ...Նրանց մտածողությունն ուրիշ էր. մեծի նման էին աշխարհին «նայում», խելացի էին ու տաղանդավոր, աչքակուշտ ու չարաճճի: Հայրը նրանց խաղերն անտեսելով, երբեմն պահանջում էր նոր կտավ, քանդակ, բանաստեղծություն: Մի անգամ Շիրազն մեզ ցույց տվեց ափերի մեջ առած երկու փոքրիկ քանդակների նմուշները, մեկը Հայկ Նահապետն էր ծիու վրա, մյուսը՝ Մասիսն էր իր հազարամյա ձյունաթագով. «Սրանք ոսկե մասունք են, մեկը՝ Արամազդիս, մյուսը՝ Մասիսիս ձեռքերի շնորհքն է, նրանց երախայրիքները: Արաս հայտնի գործեր ունի, Սիփանս ու Մասիսս էլ կդառնան Արա Շիրազ, մյուս որդիներս էլ, և մեր թշնամուն կապացուցենք, որ մենք մտքի ու գործի մարդ ենք, դեռ պիտի Անիս ոտքի հանենք, ավեր չթողնենք Կարսն ու Սասունը..»:

Վարպետը խորունկ ու խորագիտակ, իմաստուն փիլիսոփա էր, մեծ մտածող և ազգասեր: Գերազանց գիտեր համաշխարհային գրականությունը, մշակույթը. սիրում էր խոսել Շեքսպիրի, Գյոթեի, Բայրոնի, Եսենինի, Տերյանի, Թումանյանի, Չիվանու, Իսահակյանի, Չարենցի մասին, հարգանքով էր անդրադառնում Ֆիրդուսու քառյակներին: Նաև սիրում էր լսել երիտասարդներին, որոնց կարծիքը իր համար նշանակություն ուներ: Նրա մեջ «նստած» էր և՛ գրականագետը, և՛ փիլիսոփան, և՛ արվեստագետը, նա կարող էր ցանկացած մասնագետի հետ խոսքի բռնվել և զրույցը տանել տվյալ ոլորտի խորքեր. նա Վան Գոգի, Միքելանջելոյի, Բեթհովենի, Պագանինիի, Մոցարտի հանդեպ պաշտամունք ուներ, որոնց գնահատում էր այսպես. «Նրանց հոգու աշխարհը համամարդկային լույսերով են օծված, նրանց հանճարեղ ստեղծագործությունները հեռավոր դարերի մեջ էլ կապրեն ու կշողշողան. նրանց Աստվածային արարումներով տարբեր ժողովրդներ են հմայված, բայց գիտե՞ք, նրանցից հետ չեն մնում մեր Նարեկացին, Կոմիտասն ու Խաչատրյանը, Սարյանն ու…: Ափսո՜ս, ափսո՜ս, որ մենք փոքրաքանակ ենք լոկ թվաբանության մեջ, բայց… հո՞, մենք վայրի ցեղերից սերված ազգ չե՞նք, մենք որակ ու խորք ունեցող ժողովուրդ ենք, մենք Նոյից ու Հայկ Նահապետից սերված ազգ ենք և մեր մտածողության մեջ ունենք Մասիսներից իջած հրեշտակների ճախրանքների պես աներևույթ, բայց երազային թևեր, որոնք մեզ մի օր պիտի հասցնեն Աստծո Դուռը, որտեղից էլ կգտնենք մեր փնտրած ուժը, որ-

տեղ չի լինի ոչ մի հին ոսոխ... Մենք Սասունցի Դավթի սրից դուրս եկած երկնաքարի ադամանդե կտոր ենք, որոնք՝ մեր ապագա Վարդանները, պիտի կրեն իրենց կրծքի տակ՝ որպես ոչ թե թալիսման, այլ՝ հող, Հայրենիք պաշտպանող սուր...»:

...Առհասարակ ապրիլ ամսին պոետն ավելի շատ էր տխրում, դառնում՝ մտամփոփ, այդ ընթացքում փակվում էր իր աշխատասենյակում: Ապրիլի 24-ին ընդհանրապես հեռախոսին չէր մոտենում: Այդ օրը արդյո՞ք նա տանն էր...: Հիշատակելի է նրա որդու՝ Սիփանի խոսքը. «Հատկապես ապրիլյան եղեռնահուշի նախօրեին հայրիկը վշտից գինովանում էր, այլայլվում, ջղային էր, լարված: Պառկում էր մեջքի վրա, երգում ու լալիս էր, հետո անհասցե ասում էր՝ «Երեք միլիոն չէ՛, յո՛թ միլիոն են կոտորել: Էդ նահատակները ինչքա՜ն սերունդ պիտի տային, Հայաստանս ո՜նց պիտի ծաղկեր, Արամազդ Աստվածս նորից երկնակամա՛ր պիտի կապեր...»: Այդ օրերին նա ոչ մեկին չէր ընդունում: Ապրիլի 24-ին իր անունով պատվիրած սգո ծաղկեպսակը բոլորից առաջ, բոլորի աչքից աննկատ հասցնում էր Ծիծեռնակաբերդ՝ եղեռնի զոհերի հուշահամալիր»: Այդ օրը նրան ոչ մեկը չէր տեսնում (ավելի ճիշտ՝ չէր հասցնում տեսնել) Ծիծեռնակաբերդի բարձունքում: «Շիրազին տնային կալանքի են ենթարկել»,- այսպես էին խոսում մարդիկ...

Ամեն անգամ մեզ հետ զրուցելիս՝ չէր մոռանում հարցնել. «Ձեր պատուհանից երևո՞ւմ է Մասիսս, կամ Ձեր տանից չի՞ երևում Արարատյան դաշտավայրը, ափսո՜ս, հազա՜ր ափսոս, որ այսօր հայոց ազգիս ծունկը ծալված է, կարմիր հրեշների ճանկերի մեջ թպրտում ու թպրտում է»: Նրա սեղանին միշտ դաշտային տարբեր գույնի ու բույրի ծաղիկներ էին լինում, ձմռանն անգամ նրա սեղանին դրված դաշտից քաղված խնկավարդն ու նարգիզն էին բուրում: Իր ծաղիններով հիացած մի օր ասաց. «Ծաղիկն էլ իր վիշտն ունի՝ ինչպես մարդը, բայց լեզու չունի, որ դողա մի բողոք..., նրա համր ու քնքուշ լեզուն կհասկանա միայն Աստվածարար մայր բնությունը և մենք՝ բանաստեղծներս»: Մի անգամ մի ուսանող «Հ. Շիրազին հումորով հարցրեց. «Վարպետ, ձեր իսկական և մեծ սերը արդյո՞ք միայն Իդան էր...»: Նա լայն ժպտաց, մազափունջը ձեռքերով ետ ուղղեց և ծիծաղելով ասաց. «Մենք արևին միշտ նայում ենք, նույն կերպ էլ նայում ենք կանանց. մինչև «մայր մտնելը» հետևում ենք արևին, ուզում եմ հիշեցնել ձեզ իմ մի տողը. «...ո՞վ, ո՞վ չի սիրում կանանց, նրանց, որ ես՝ հանճարս վագրուհիներ եմ անվանում...»: Մեզ՝ հայուհիներիս խրատում էր հայրաբար. «Հոգով Հայրենիքի ազատատենչ մարտիկն ու մշակը եղեք, եղեք Փառանձեմ թագուհու նման՝ խոհեմ ու հայրենասեր, Սոսե մայրիկի նման՝ քաջակորով, համբերատար, հանուն հող հայրենիի՝ եղեք ձեր արի ամուսինների կողքին, պաշտպանեք նրանց Անդրանիկ Զորավարի զինվորների պես...»:

Բանաստեղծի հասցեով նամակների հեղեղ էր գալիս, և նա մեծ հարգանքով էր պատասխանում դրանց, երբեմն նամակի փոխարեն ծրարի մեջ դնում էր իր բանաստեղծությունը, կամ մի քառատող, կամ թարմ, կամ էլ չորացած ծաղիկներ և ուղարկում հասցեատիրոջը»:

1988 թվականին սկսված Ղարաբաղի ազատագրական պայքարը նա չտեսավ: Գուցե նա զգում էր: «Երբ 1950-ականներին հայրս գրեց «Ղարաբաղի ողբը», այդ ժամանակ ո՞վ կհամարձակվեր տալ Ղարաբաղի անունը, իսկ Շիրազը տանջվում էր Ղարաբաղի համար, ինքը, որ Մենակ էր»,- այսպես ասաց Սիփան Շիրազը, երբ նրան հանդիպեցի Շուշիի գրավման տարեդարձի օրը:

Ուսանողների հետ հերթական հանդիպման օրերից մեկը շատերի օրագրերում նոր էջ ավելացրեց. դահլիճի նախասրահից սկսած՝ հատակին փռված էին ծաղիկներ, յուրաքանչյուր ուսանող կրծքին մի փունջ դաշտի ծաղիկ ուներ, շուրթին՝ բանաստեղծի հոգու խոհերը, տողեր, որոնք արգելված էին բարձրաձայնել: Այդ օրվա գրական հանդիպումը հայրենասիրության մի անկրկնելի դաս էր. «Հայոց Դանթեական»-ը ամբողջությամբ ընթերցվեց, դահլիճը ցնծության մեջ էր: Միջոցառումից հետո բարձր կուրսեցիները բանաստեղծին գրկած իջեցրին բեմից...

...Երևանի մետրոյի բացման առաջին օրերին, մի խումբ արվեստագետներով պատահական հանդիպեցինք բանաստեղծին. Սվետլանա Խանումյանը հարցրեց, թե նա մետրոյի գործարկման առիթով ի՞նչ խոհեր ունի: Շիրազը տրտմորեն ասաց. «Եթե այդ գետնուղին գնար, հասներ Կարս ու Սարիղամիշ, Վան ու Բիթլիս, հետո Արցախ, հետո Գյումրի ու Երևան... դա արդեն մետրո կլիներ, կլիներ ճամփա ու ճար...»:

Հ. Շիրազը սիրում էր ամեն ինչի ազգայինը՝ հայկականը, տարազ, երգ-պար, նիստուկաց, խոհանոց... Բանաստեղծը սակավակեր մարդ էր, միջոցառումներից հետո բացվող սուփրա-սեղաններից գրեթե չէր օգտվում. «Ինչպես ուտես աշխատավոր բանվորի քրտինքով վաստակած մի կտոր հացը, երբ նրա տանն էլ կան փոքրիկներ...»: Նրա համար կենցաղը իր ողջ շրջանակով գոյություն չուներ. «Ինձ պետք չեն դղյակ ու վիլլա, արծաթ, դրանք ցեցի բույներ են, ինձ և իմ ժողովրդին մեր հողերն ու պապերիս շինած վանքերն են պետք և՝ Սասունցի Դավթի սուրը, ոսկով լի կճուճները, որ պապերս թողին էնտեղ, թող անեծք լինի նրանց, բայց ծոռներս, մեկ է, պիտի այդ սուրը հոգու մի անկյունում պահեն ու գնան... գնան Մուշ, Արտամետ..., հասնեն Սասուն, մտնեն Բայազետ, հետո գան խունկ ու մոմ վառեն ավեր Անիիս պատերի տակ:

1984թ. մարտի 14: Չկար այլևս մեծ բանաստեղծը՝ հայոց Մասիսերգակը, մեծ հայը, հայոց մեծ ցավի տխուր ողբերգակը...

ԼՈՒՍԻՆԵ ԹՈՓՈՒԶՅԱՆ

ԴԱՐԱԿԱՉՄԻԿ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ՈՐԸ ԿԱՐՈՂ Է ՄԵՌՆԵԼ ԱՆՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայաստանում ծնվել է մի տեսություն, որը և՛ դժբախտ է, և՛ բախտավոր միաժամանակ: Դժբախտ՝ քանի որ ծնվել-մեծանում և հասակ է առնում մի երկրում, որտեղ մեծ գիտությունը «խորթ զավակի» տեղ է ընդունվում: Բախտավորությունն էլ այն է (ճիշտ կլիներ ասել՝ մխիթարանքը), որ նրա հեղինակը «հավատացյալ ու ուխտավոր» է, անխախտ համոզմունքի հայ ու անկոտրում մարտիկ:

Նրան խեղճացնում է մեկ այլ բան - հնարավորությունների այն պակասը և արհեստական դժվարությունների այն առատությունը, որ նա զգում է ամեն քայլափոխի: (Նույնիսկ նա աշխատանքի տեղում համակարգիչ չունի, էլ չեմ խոսում ռեակտիվների պակասի և այլ սարքավորումների մասին): Այդքանից հետո մարդու հավատն էլ չի գալիս, որ այդպիսի մեծ հնարավորությունների և նշանակության գիտելիքներ հենց այդ պայմաններում և Հայաստանի նրա այդ լաբորատորիայում է ծնվել:

Եվ այսպես՝ ի՞նչ է տեղի ունեցել. քիմիան, որը որպես ճշգրիտ գիտություն, ունի ավելի քան 200 տարվա պատմություն, լինելով գիտություն թթուների և հիմքերի փոխազդեցությունների մասին, մինչև անցյալ տարի չուներ ընդհանրական թթվա-հիմնային տեսություն: Կային որոշ աղճատված պատկերացումներ, սակայն դրանցից և ոչ մեկը ոչ ընդհանրական կարող է համարվել, ոչ էլ կարող է երբևէ վերաճել ընդհանրականի: Քիմիական գիտության այդ «լույսը» առաջին անգամ սփռվեց Հայաստանում, 2006թ., ՀՀ ԳԱԱ Օրգանական քիմիայի ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, պրոֆեսոր Ալեքսանդր Գևորգյանի կողմից: Նա ռուսերեն լեզվով (և 15 էջանոց անգլերեն ամփոփագրով) հրապարակեց մի մենագրություն, որը վերնագրված է «Թթուների և հիմքերի ընդհանրական տեսություն: Նոր տեսակետ ատոմների և մոլեկուլների ռեակցիոնունակության մասին» (Unified Acid and Base Theory. A New View on the Reactivity of Atoms and Molecules), Երևան, ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 158 էջ: Մենագրությունը բացահայտում է այն, ինչը բնության գաղտնարաններում պահվում էր «յոթը փակի տակ»:

Քիմիայի պատմության մեջ առաջին անգամ մոլեկուլներում ընդգրկված ատոմների խնամակցության համար գտնվել է մի բնական միավոր, որի օգնությամբ քիմիկոսը հնարավորություն է ստանում բացահայտել և լուծել տեսության և սինթեզի այնպիսի խնդիրներ, որոնք երբևէ չէին կարող ոչ բացահայտվել, ոչ հասկացվել դասական մոտեցումների հիման վրա: Այդ պատճառով կարճ ժամանակահատվածում հնարավոր է քիմիայի բուհական ուսուցումը և գիտահետազոտական աշխատանքների որակը և կանխատեսող ուժը բարձրացնել մի մակարդակի, որին հնարավոր չէ հասնել անգամ տասնամյակներ անց:

Այսպես՝ Հայաստանում գտնվել է մի տեսություն, որի օգնությամբ քիմիայի պատմության մեջ առաջին անգամ քիմիկոսը (լինի դասախոս, թե գիտնական) իր ձեռքն է վերցնում մոլեկուլների քիմիական վարքի կառավարման ղեկը: Կարևորը մոտեցումը բացառություններ չունի և այն առաջին անգամ պատասխանում է այն հարցին, թե ինչո՞ւ և ինչպե՞ս են ատոմները միմյանց հետ ռեակցաների մեջ մտնում կամ ոչ: Եթե առկա է ատոմների փոխազդեցությունների բազմություն, ապա ի՞նչ հերթականությամբ պիտի նրանք ռեակցեն (և ռեակցում են իրականում) և այլն: Ավելին, այդ ամենը կատարվում է ելնելով դասագրքերում զետեղված աղյուսակային տվյալներից և՝ քանակապես:

Ալեքսանդր Գևորգյանը ծնվել է Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանի Ճարտար գյուղում: Ավարտելով Մարտունու միջնակարգ դպրոցը՝ 1953-ին նա ընդունվել է ԵՊՀ-ի քիմիայի ֆակուլտետը: Նա հիշում է, թե ինչպես հենց ուսման առաջին ամիսներին համարձակվեց «ժխտել» Նոբելյան մրցանակի դափնեկիր Նիլս Բորի պոստուլատը ատոմի կառուցվածքի մասին և «արժանանալ» դասընկերների և դասախոսների... խղճահարությանը: Մինչդեռ, ինչպես հետագայում պարզվեց, ոչ Բորն էր սխալվել, ոչ հայ ուսանողը: Գիտնականը ատոմին նայում էր միկրոաշխարհի ակնոցներով, իսկ ուսանողը՝ մակրոաշխարհի: Կարևորն այստեղ ոչ թե ակնոցով կարդալ կարողանալն է, այլ նաև կարդացածում թերություն բացահայտելը: Ո՞վ կսպասեր, որ այդ «ուսանողը» տասնյակ տարիներ հետո նորից կանդրադառնա Բորի նույն սկզբունքներին, այս անգամ արդեն հիմնավորելով նրա պոստուլատը քիմիական գիտության հայեցակետով իր վերոհիշյալ մենագրության մեջ:

1958-ին ավարտելով համալսարանը՝ նա աշխատանքի ընդունվեց Ա. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտում՝ հենց Ա. Մնջոյանի լաբորատորիայում: Իսկ ամիսներ անց տեղափոխվեց Օրգանական քիմիայի ինստիտուտ: Ինչպես Ա. Գևորգյանն է վկայում, քիմիայում նրան «հետաքրքրում էր մոլեկուլների վարքի փիլիսոփայությունը և ոչ թե ինչ-որ նոր կամ հայտնի նյութեր սինթեզելը կամ նրանց կենսաբանական հատկությունների բացահայտելը»: Դա էր պատճառը, որ նա աշխատանքի տեղափոխվեր Օրգանական քիմիայի ինստիտուտ:

«Մեկ տարի անց ինձ հաջողվեց գտնել նոր ռեակցիա, սակայն «երեխայության» պատճառով չպաշտպանեցի»,- ավելացնում է գիտնականը: Բանն այն է, որ հետևելով իր սկզբունքներին, նա չէր մասնակցել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ընտրություններին: «Ոչ միայն չգնացի, այլև գրեցի, որ այդպիսի խեղաթյուրված ընտրությունների մասնակցել ես չեմ կարող, քանի որ մեզ մոտ՝ Ղարաբաղում, հնարավոր չէր, որ մեկը մյուսի փոխարեն ընտրություն կատարի, իսկ Երևանում դա մասսայական բնույթ ուներ»,- ասում է Ա. Գևորգյանը: Իր հանդուգն արարքի համար նա հեռացվեց կոմերիտմիությունից: Մարդիկ խորհուրդ տվեցին ներողություն խնդրել և հետ ստանալ կոմերիտմիության տոմսը, բայց նա հրաժարվեց: Սկզբունքը նրա համար ավելի թանկ էր: Այդ ընթացքում նա թողեց իր հայտնաբերած ռեակցիայի ուսումնասիրությունը և ԳԱԱ Օրգանական քիմիայի ինստիտուտը ու աշխատանքի անցավ Պոլիմերների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտում: Դա Նաիրիտի տարածքում գործող «Վնիպոլիմեր» կոչված ինստիտուտն էր:

«Չնայած գիտությունների թեկնածու չէի, սակայն զբաղեցնում էի ավագ գիտաշխատողի և խմբի ղեկավարի պաշտոն: Այդտեղ էլ չկարողացա երկար մնալ, քանի որ շուտով պարզ դարձավ, որ գիտական հետաքրքրություններս այդտեղ հագեցնել չեմ կարող: Ստիպված մեկնեցի (1963թ.) Մոսկվա և ընդունվեցի Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի էլեմենտ-օրգանական միացությունների ինստիտուտի ասպիրանտուրան, չնայած 5 տեղի համար 36 դիմում կար: Ղեկավարս աշխարհահռչակ ակադեմիկոս Իվան Կնունյանցն էր: Ժամանակից շուտ ավարտեցի հետազոտությունս, որը նվիրված էր ֆոսֆորի և ֆտորի քիմիաներին, գրեցի իմ ատենախոսու-

թյունը և ժամկետից էլ շուտ պաշտպանեցի թեկնածուական թեզս (1965թ.): Դրանից հետո վերադարձա Հայաստան և աշխատանքի անցա պոլիմերների ինստիտուտում: Սակայն շուտով կրկին տեղափոխվեցի (1968թ.) Օրգանական քիմիայի ինստիտուտ, սկզբում՝ որպես ավագ գիտաշխատող, 1973-ից՝ ինքնուրույն խմբի ղեկավար և ապա՝ լաբորատորիայի վարիչ (1974թ.): Դրանից հետո ես իմ տարերքի մեջ ընկա, որի արդյունքը եղավ նոր էֆեկտի ու ռեակցիաների բացահայտումներ, բազմաթիվ բուրավետ նյութերի սինթեզներ (իսկ մեկի ներդրում Լենինգրադում) և դոկտորական թեզի պաշտպանություն 1978-ին: Բախտն ինձ մեկ անգամ էլ ժպտաց. բարեբախտաբար, իմ վայ «բարյացկամներից» մեկը չարախոսել-ահազանգել էր ԽՍՀՄ ԲՈՀ իմ ատոնախոսության մասին: Ստիպված ատենախոսությունս պաշտպանեցի նաև այդ ԲՈՀ-ի հատուկ նիստում, վաստակաշատ ու բանիմաց մասնագետների մասնակցությամբ: Իմ այդ ելույթով և հարցերի պատասխաններով փառավորվեցի ամբողջ Միությունով մեկ: ԲՈՀ-ի անդամներից մեկն այսպես ասաց. «Ո՞վ կիմանար, թե Հայաստանում այդպիսի գիտելիքներ ունեցող քիմիկոս կա: Իսկ անանուն հեղինակը, հակառակ իր կամքի՝ օգնեց քեզ փառավորելու»:

Ավելի մեծ անակնկալներ բացահայտվեցին հետագայում, երբ հետամուտ եղա հասկանալ մեր գտած էֆեկտի շարշիչ ուժերի բնույթը: Հենց այդ պրպտումներն են, որ ի վերջո հանգեցրին այն տեսությանը, որը մենք անվանել ենք ընդհանրական թթվա-հիմնային տեսություն: Այդ մոտեցման հենքը դրել էր հանրահռչակ Նոբելյան մրցանակի միակ կրկնակի դափնեկիր Լայնուս Պոլինգը: Ճիշտ է՝ նա անարատ ատոմների համար դեռևս 1932թ. գտել էր քիմիական խնամակցության գնահատման մի մոտեցում, որը, սակայն, կիրառել մոլեկուլների մեջ մտած ատոմների համար այդպես էլ չհաջողվեց: Ոչ Լ. Պոլինգը կարողացավ հասկանալ տեսության այդ անհաջողության պատճառը, ոչ որևէ այլ քիմիկոս կամ ֆիզիկոս: Այդ առեղծվածը բացահայտվեց Հայաստանում, 2006-ին: Այդպես էլ ծնվեց այն տեսությունը, որը գիտնականը անվանել է «Թթուների և հիմքերի ընդհանրական տեսություն»:

Տարիներ առաջ ՆԱՏՕ-ի «գիտություն հանուն խաղաղության» ծրագրով առաջնություն շահեց իմ այն առաջարկը, որով Երևանի «Նաիրիտ» գործարանի կեղտաջրերը հնարավոր էր փոքրացնել գոնե հարյուր անգամ (առաջարկել էի կատալիզատոր, որը 100-150 անգամ ավելի ակտիվ է, քան գործածության մեջ գտնվողը): Սակայն ես հրաժարվեցի այդ թեման կատարելուց, քանի որ ինքը գործարանն էր անգործության մատնված: Պարզապես, միջոցները կգային Հայաստան, մերոնք՝ «կյուրացնեյին», իսկ այդ անտերության պատասխանատուն ես կլինեի: Այդպես վարվել ես չէի կարող»,- ասում գիտնականը:

Գիտնականն այսօր էլ շարունակում է իր հետազոտությունները, որովհետև, ըստ նրա, տեսությունները, ընդհանրապես, լուսարձակներ են խնդիրների լուծման մրցունակ ուղիներ որոնելու ճանապարհին: Նա մտահոգվում է, որ արտերկրում դասախոսելու, իր տեսությունը բացատրելու և տարածելու հնարավորություն չունի: Բացի այդ, մեր երկրի բարձրաստիճան այրերը ևս որևէ շահագրգռվածություն չեն ցուցաբերում գիտության զարգացման և տարածման ուղղությամբ: Գիտնականը դժգոհում է, որ բազմիցս է փորձել կապ հաստատել կրթության և գիտության նախարարի հետ, որպեսզի այս տեսությունն ուսուցանվի դպրոցներում և ԲՈՒՀ-երում, սակայն նրա հետ հանդիպել նրան դեռ չի հաջողվել: Գիտնականի աշխատանքին խոչընդոտում է նաև այն հանգամանքը, որ միջազգային սիմպոզիումներին ընդունվում են նրա զեկուցումները, սակայն ֆինանսավորում չունենալու պատճառով «մնում են տանը, անհայտության մեջ»:

Մինչդեռ այս գիտելիքները, ինչպես Ալեքսանդր Գևորգյանն է համոզված ասում, կարող էին հանրայնացնելու դեպքում Հայաստանին բերել մեծ պատիվ և միլիոնավոր դոլարների շահ: «Միայն այդպես է, որ հայերն ու Հայաստանը կդառնային քիմիական նոր գիտելիքների տարածման կենտրոն: Այդ ակնկալիքով, ես իմ աշակերտներին ասում եմ, որ «դուք այս գիտելիքների առաջնեկներն եք, բնագավառի իրական լիդերները և պետք է այս ամենը յուրացնեք լավ ու գերազանց, որ կարողանաք ուսուցանել ուրիշներին»»,- ասում է նա՝ համոզված, որ գիտության մեջ այս տեսության ներդրումը միլիարդների օգուտ կարող է բերել:

«Մեր երկիրի անպարտելի ուժը մեր գիտելիքներն են, որոնք էլ այսպես անտեղի ոչնչացնում ենք»,- ասում է քիմիկոսը և ավելացնում, որ Հայաստանի, առհասարակ երկրի, հումքը վաճառելը մեծագույն անմտություն է, քանի որ քիմիայի միջոցով այդ հումքից կարելի է բազում և թանկարժեք բարիքներ ստանալ:

Հայ քիմիկոսի առաջադրած սկզբունքների մասին պատմող 350 հոդվածները տպագրվել են ինչպես Հայաստանում, այնպես էլ Ռուսաստանում, Եվրոպայում և ԱՄՆ-ում: Մխիթարականն այն է, որ աշխարհը տեղյակ է այս հայտնագործությանը: Սակայն, ինչպես միշտ, ժամանակ է պետք, որպեսզի մարդիկ հասկանան և ընդունեն ավանդականից շեղվող նոր մոտեցումները և կարողանան դրանք օգտագործել գիտության և արտադրության խնդիրներ լուծելու համար:

Ալեքսանդր Գևորգյանը համոզված է իր առաջադրած տեսության ճշմարտացիության մեջ և վստահ, որ հատկապես քիմիայի զարգացմամբ կզարգանա Հայաստանի տնտեսությունը:

Հարցազրույցը՝ ՎԻԿՏՈՐՅԱ ԲՈՒՌՆԱԶՅԱՆԻ

Եագոպ Քիւնցլէր

Հ Ա Յ Ե Ր Ը

Հայերը ատեն մը արեւապաշտ եղած են: Վերջէն սակայն, կը յարին քրիստոնէութեան ու հետագային շարունակ պայքարելով՝ պաշտպանած են իրենց կրօնը թշնամի ժողովուրդներու դէմ, որ կրկին ու կրկին կը փորձեին բնաջնջել քրիստոնեայ հայութիւնը:

Արարատի շուրջը սեփական երկիր ու պետութիւն ունեցած են հայերը, ու ատեն մըն ալ մինչեւ Միջերկրականի ափերը կը հասնէին Հայաստանի սահմանները: Այնուհետեւ հայկական անկախութիւնը կը կործանի ու երկիրը կ'իյնայ մահմէտականներու, առաւելաբար՝ Օսմաններու ձեռքը: Սակայն, անկախօրէն կանգուն կը մնան հայութեան կրօնն ու լեզուն: Բարձր կարողութիւններով մեծապէս օժտուած ժողովուրդ մըն է հայ ժողովուրդը:

Հայութիւնը դարերու ընթացքին հալածուեր ու ջարդուեր է իր կրօնին ու լեզուին համար: Գերազանցօրէն մարտիրոս ժողովուրդ մը: Նորագոյն շրջանին, 1895-էն ասդին, հայերն ենթարկուեցին հալածանքի ու ահաւոր կոտորածներու քաղաքական պատճառներով: Թուրքերն էին հալածողն ու ջարդողը, որովհետեւ անոնք չէին հանդուրժեր, որ հայերը համառօրէն կը պահպանէին իրենց ցեղային ու կրոնական նկարագիրը և չէին ուզեր թուրք դառնալ, մահը գերադասելով թրքութենէ[1]:

---

1. Եագոպ Քիւնցլէր. <Dein Volk ist mein Volk> («Քու ժողովուրդդ, իմ ժողովուրդն է») գրքից:

ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՔ

(Բնագանցական հիմք, ուրվագծեր եւ դիմաստվերներ)

ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿՑՈՒՄԸ ԿԱՐԱՎԱՆԱՊԵՏԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՄԲ

Բ-1. ԱՐԱՐԱՏՅԱՆ Մշակույթ ԿԱՄ ԱՐՄԵՆԱԿԱՆ ինքնագիտակցություն՝ ամեն բանից էլ առավել.

ԿՈՍՏԱՆ ԶԱՐԵԱՆ

ՄԵՆՔ ՉԵՆՔ ՃԱՆԱՉՈՒՄ ԱՅԼ ԿԵՐՊ ԵՒ ԿԱՄՈՒՐՋ ՄԱՐԴՈՒ ԵՒ ԱՍՏՑՈ ՄԷՋ ՔԱՆ ՑԵՂԸ: ՑԵՂԸ... ՅԱՒԻՏԵՆՈՒԹԵԱՆ ՈՒՂԻ Է: ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ... ԴԱ ԵՐԿՈՒՆՔ Է ԱՐՄԵՆԱԿԱՆ ՑԵՂԻ ՈԳՈՒ: (Տե՛ս, ՀԱՅԿ ԱՍԱՏՐԵԱՆ, Հատընտիր, Երեւան, 2002, էջ 53)

...բարոյապես մեռցնելու համար անտաղանդներն ու սնոտիները, գեղեցկութեանց մուրճ կը շարժուի արդարութեան հարուածներով...: (Կոստան Զարեանին ուղղված Սիամանթոյի նամակից. գրված 1914-ին ԺՆԵՒՑ). տե՛ս ավելի մանրամասն Արեւմտահայ գրողների նամականեր, «Գրական ժառանգություն», գիրք 6-րդ, պրակ 1-ին, Երեւան, 1972, ԵՊՀ հրատ., էջ 298):

«ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆԸ ԳՐՈՒԹԵԱՆ Մէջ» վերլուծական-իմաստասիրական ուղղվածությամբ էսսեն Նիկողայոս Սարաֆեանը սկսում է, ինչպես արդեն այդօրինակ միջնորդավորում իրականացրել ենք Ա. Չօպանեանի մասին գրության վերջում, հետեւյալ գաղափարի շեշտադրմամբ.

-Կոստան Զարեան անկում մը տեսնելով աշխարհի արդի արուեստագետներուն մէջ՝ կը յայտարարէ. «Ամեն մի մեծ արուեստ խոստովանութիւն մըն է»:

Որը՝ «այս յայտարարութիւնը, կը հնչէ մեր առջեւ նետուած ոսկի ու կախարդական բանալիի մը պէս»:[1]

Վերջին հաշվով, ինչպես Կ. Զարեանը, այնպես էլ Ն. Սարաֆեանը՝ որպես ՀԱՅ ՑԵՂԻ մարդիկ, սիրեցին արվեստագետի այն առնական տիպարը, որ **«ԻՆՔԶԻՆՔԸ կուտայ ամբողջութեամբ**, ինչպես կը պահանջէ արուեստը»:[2]

Եվ այս ամեն էականը մտածական այն հիմքից, ըստ որի, ամեն մի արվեստ իր իսկ ժողովրդի հոգու պատմությունն է,[3] նախ՝ ԻՆՔԶԻՆՔԸ գիտակցելով եւ հետո՝ պատմելով անհրաժեշտորեն:

Նաեւ այսպես ու այստեղ է, որ ԻՆՔԶԻՆՔԸ գիտակցելն ի սկզբանե նշանակում է գիտակցել սեփական էությունը, գոյության էությունը եւ նշանակումը բուն ապրելիք կյանքում, որն իրական-ռեալ է սոսկ այն դեպքում, երբ ինքնագիտակցող ես-ը տեսնում է ուրիշի՝ գիտակցողի մեջ իր իսկ անդրադարձը, իրեն, ինչպես Չրաքեանի խոսքերով ԱՐՇԱԿ Չօպանեանի վերլուծությունների ու գրածների մեջ է ՀԱՅԸ լավագույնս ճանաչել իր հոգու պատմությունը՝ իրեն այն օրերին...:[4]

Այս տեսակետից գոյավորվելով **ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ եւ ՀԱՅՔԻ գիտակցման ու որոնման գաղափարի** ճանաչման հիմքում, առաջադրելով զուտ ազգային ինքնագիտակցականից բխող խոստովանաքի տարրեր, որի ներկայացուցիչներից է նույն ինքը՝ Կոստան ԶԱՐԵԱՆԸ, փորձենք մեր այս հայորդում մոտենալ իր իսկ առաջադրումներով եւ սկզբունքային հիմնավորումներով, քանզի ՆԱ նույնպես, մեզանում, ինչպես արդեն ակնարկվեց, ի սկզբանե այն գրագետն է, որ **«պատեր շոշափելով... իսկ որոնել է ՀԱՅԻ հոգին»:**[5] ՆԱ կենսագրական տվյալների, կամ ավելի որոշակի արտահայտված կյանքի չափանիշներ վկայակոչող եղելությունների մասին, որպիսի մոտեցումը հարազատ է ցեղադրում իրականացնող ՀԱՅ այս գրագետին:

Կ. Զարեանը բնիկ Շամախեցի է. ծնունդով Արցախից:

Ծնվել է 1885 (կամ 1895 թվականին, ծննդյան թիվը տարբերվում է աղբյուրե աղբյուր): Նախակրթություն ստացել է Բաքվում եւ պատանեկան տարիներն անցկացրել Փարիզում, համալսարանական կրթություն ստանալով Բրյուսելում, որտեղ էլ սկսել է գրել հատկապես ֆրանսերեն: Այնուհետեւ տեղափոխվել է ԺՆԵՒ, որտեղ հետեւել է գրականության եւ իմաստասիրութեան դասերին: Ավարտելով ստացել գիտությունների դոկտորի աստիճան,- ինչպես ասվում է **«ԱՆՑՈՐԴԸ ԵՒ ԻՐ ՃԱՄԲԱՆ» ԳՈՐՇԻՆ ՄԷՋ ՏԵՂ ԳՏԱԾ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՇՈՒՄՆԵՐՈՒՄ: ՀՈՆ ԻՐ ՀԱՒԱՍՏՈՒՄՈՎ՝ ռուսերէն ԳՐԱԾ է նաեւ Լենինին «Դրոշակ» ԹԵՐԹԻՆ ՄԷՋ»:**[6]

Աշակերտել, մտերիմ հարաբերությունների մեջ է եղել հատկապես էմիլ Վերհարնի հետ:

1910-ին անցել է ՊՈԼԻՍ, այնուհետեւ՝ Վենետիկ, որտեղ ՀԱՅՐ Արսեն Ղազիկեանից հայերեն դասեր է վերցրել եւ ՀԱՅՐ ՏԻՐՈՅԵԱՆԻՑ՝ գրաբարի:

1913 թվականին վերադարձել է ՊՈԼԻՍ, միացել **Դ. ՎԱՐՈՒԺԱՆԻՆ, Գ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻՆ, Յ. ՔԻՒՖԵՓԵԱՆԻՆ (ՕՇԱԿԱՆ), Ա. ՏԱՏՈՒՐԵԱՆԻՆ եւ Յ. ՍԻՐՈՒՆԻԻՆ**՝ հրատարակելով «ՄԵՀԵԱՆ» ամսագիրը:

Երբ...., երբ պայթել է պատերազմը, Կ. ԶԱՐԵԱՆԸ տեղափոխվել է Վենետիկ, ուր գրել է «Երեք երգ» վիպերգը (պոեմ), որ իտալացի երաժշտահան եւ երաժշտական տեսաբան **Օ. ՌԵՍՊԻԳԻՆ** մեղեդիի է վերածել (համանուագ) եւ լեհ ուսուցչապետ Լանտովսկին լեհերեն է թարգմանել այդ վիպերգության կարեւոր մասերը:[7]

Ինչպես շեշտադրում է Մ. Նշանեանը, Զարեանի ներկայութիւնը... Դ. Վարուժանի եւ Յ. Օշականի կողքին կ'ընդունուի իբրեւ պատմական փաստ, նկատի չառնուիր իբրեւ գրական հարց, որի ծանրութեան շարժական կեդրոնը կը գտնուի **«ՄԵՀԵԱՆ»** հանդեսին ծիրին մէջ: Իսկ այն պատկերը, որ կը պարզուի ՀԱՅԻ առջեւ,- համոզված է Մ. Նշանեանը,- սերունդի պատկերն է, որը եւ կոչվում է համաստեղութիւն,[8] որի նպատակն էր ՀԱՅԻՆ տանել ազգային ես-ի ինքնագիտակցումի երկար եւ ոլորապտույտ ճանապարհով:

Լինելով պատմական փաստի կրողներ, ուրեմն, **«ԵՌԱՆԿՅՈՒՆԻ»**-ի **(Կ. Զարեան - Դ. Վարուժան - Յ. Օշական)** ներկայացուցիչները յուրովի են գիտակցել ինքնաճանաչումի ցեղային անհրաժեշտությունը.

Վարուժանը՝ «Հեթանոս երգեր»-ի խորքերում՝ «թաքնվելով» անցելապաշտ դպրոցի առաջադրման գաղափարագրման հիմքից, որ իրականացել է մինչ եղեռն, **Յակոբ Օշականը**՝ ետ եղեռնի ժամանակներից մինչ ի մահ՝ գրա-

կան-գիտական սկզբունքների հիմնավորման զուտ մշակութաբանական եւ քաղաքակրթական միտումներ առաջադրելով՝ երեք սերնդի հոգեւոր կյանքի վերարժեվորմամբ, այսինքն՝ դիտարկելով ՀԱՅԻՆ բուն ներսից, եւ **Կ. Զարեանը**՝ նույն այդ ճանաչումը՝ որպես գիտակցման ենթակա անհրաժեշտ հոգեկանություն, այդ ընթացքի անհրաժեշտ ներկայությունը տեսել-առաջադրել է այսպես ասած «դրսից» ԱՇԽԱՐՀԻ մշակութային նախամիջավայրից, գոյավորվելով **ՀԱՅ-ՍՊԱՆԱԿԱՆ** մշակույթի, **ՀԱՅ-ամերիկյան քաղաքակրթության եւ ՀԱՅ-եվրոպական**՝ մասնավորապես՝ ՀԱՅ-իտալական հոգեւոր արժեքների փոխհարաբերության հոգեկցվող կապի հնարավոր ներկայության զուգահեռականին:

Իսկ խոսելով այսօրինակ գոյացած, երբեմն էլ հոգեկցվող փոխհարաբերությունների մասին՝ կարծում եմ ավելորդ չէ շեշտել, որ ՀԱՅ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ կապը՝ որպես սպասվող ակնկալիքի հիմնավորում, Կ. Զարեանի մոտ (գերմանականը՝ նաեւ Դ. Վարուժանի մոտ)[9] իրականացել է ՎԱԳՆԵՐ, ՆԻՑՀԷ եւ ՇՓԵՆԿԼԵՐ փոխազդեցությամբ եւ փոխհարաբերության մանրակրկիտ կապերի հաստատմամբ:[10]

Եվ այսպես ազգային ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ամեն բանից էլ առավել, որպիսի հոգեընթացը Կ. Զարեանի ներաշխարհում՝ ի տար բերություն ՎԱՐՈՒԺԱՆԻ եւ Յ. Օշականի, կայացել-իրականացել է համաշխարհային մշակույթի եւ իմաստասիրության պատմության գիտակցման նախամիջավայրին, այն է՝ որոշակիորեն «ենթարկված ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՄԱՆ» սկզբունքայնությանը:

«Տեղի է ունեցել,- պնդում է Զարեանը այսօրինակ նախահիմքից,- անցյալում չ'տեսնված մի երեւույթ,- աշխարհը հանկարծ լայնացել, մեծացել է եւ դրա հետ միասին ինքը՝ բովանդակ մարդկային կեանքը: Դարերով բացակա երկրագունդը կանգնել է մարդկանց առջեւ իր ամբողջ հասակով»:[11]

....այսինքն՝ չպետք է մոռանալ նաեւ, որ Կ. Զարեանը ՀԱՅՈՒԹՅԱՆ այն գրագետն է, ում աշխարհայեցումները ո'չ միայն պետք է քննել արեւմտաեւրոպական մշակույթի գիտակցման ու «ՄԵՀԵԱՆԻ ԾԻՐԻՆ ՄԷՋ», այլեւ այդօրինակ միջավայրները պայմանավորվել է հատկապես **Եղիա Տէմիրճիպաշեանի եւ Տիրան Չրաքեանի** ստեղծած ավանդույթի յուրովի շարունակմամբ: Եվ ամենեւին էլ պատահական չէ, որ մեր ժամանակակից՝ երեւանյան մշակութաբաններից լավագույնը Ա. Կոստանյանը, շեշտադրում է. «Կոստան Զարեանը գրական երկու սերնդից առանձնացնում է Եղիային եւ Չրաքեանին. նրանց կյանքն ու ստեղծագործությունը համարելով խորհրդավոր ու հերոսական»: ...եւ ինչպես ժամանակին Չօպանեանը, այնպես էլ Կ. Զարեանը, ներկայի արտահայտիչն է եւ մարտունակ իր ձգտումներն ու ըմբռնումներն իրագործելու մեջ:[12]

Ինքնագիտակցություն ասված անհրաժեշտությունը, ըստ այդմ էլ՝ որպես պատմական հիշողության արտահայտություն, ինչպես գիտի ցանկացած խորհող ու խոսող մարդ, բարդ ու հակասական երեւույթների թվին է դասվում...

Բարդ ու հակասական է նաեւ Կ. Զարեանը, ինչպես գիտեն այն փոքրաթիվ հետազոտողները, որ առնչվել են նրա ստեղծագործությանը, որը, իր հերթին, կայացել է կյանքի (ԱՇԽԱՐՀ) ու ՀԱՅԻ ողբերգական ժամանակաշրջանի եղելությունները միասնական ձեւում գիտակցելու փորձի ներքո՝ «բախումներից եւ բաբախումներից»:

Այս տեսակետից աշխարհի հետ ունեցած իր փոխհարաբերություններում ի անհրաժեշտություն նշենք, որ Կ. Զարեանին երբեք չի լքել ազգայինի **(ցեղայինի հիմքից գիտակցված)** բարձրագույն համոզմունքը՝ առողջ մտածողությունը՝ որպես այդպիսին, այն, որ ինչպես նշվել է նախորդ գրության մեջ. **«համամարդկայինը առավել կատարյալ ազգայինն է»** հոգեկանությունը..., ինչպիսի պայմաններում եւ պայմանականություններում, որ չի հայտնվել նա: Հենց այսօրինակ ինքնագիտակցական միջավայրի առաջադրմամբ եւ հաստատմամբ էլ Զարեանը՝ Գարեգին Նժդեհի պես, կամ էլ Նրա հետ միասին, տարբերվում է գրեթե բոլոր այն ՀԱՅ գրագետներից, ովքեր գործունեություն են ծավալել 20-րդ դարում ընդհանրապես...

Իսկ այսօրինակ նպատակայնության բանական հենքից էլ, ի սկզբանե ՑԵՂԱԴՐՄԱՆ անհրաժեշտության (ազգային գիտակցություն ընդհանրապես) մասին.

«Մենք ապրում ենք իրարամերժ բեւեռների վրա սլացող մի աշխարհում»,- պնդում է Կ. Զարեանը «ՆԱՎԱՏՈՄԱՐ»-ում եւ ավելացնում,- **«այդ վիճակը առաջ է գալիս մանաւանդ տիրող եւ թավալւող միթոսի բացակայութեան պատճառով», որ կեանքի հիմքն է՝ դարե դար ժառանգուած: ...Եվ փշրվեց ամբողջական աշխահազգացման ղեկը:[13] ...իսկ մեր բոլոր Աստուածները ներկա են մեր բոլոր մկանունքներում, մեր արյունի հոսանքում, ուղեղի ծալքերում: ԵՒ ՀԱՅԻ ՈԳԻՆ եւ ՀԱՅՔԸ ներկա են այնտեղ միայն, ուր ներկա է ՀԱՅ հավաքական գիտակցության փրկարար հրամայականը:[14]**

Այսօրինակ մտածականից, ինչպես դժվար չէ տեսնել, Կ. Զարեանի համար նույնպես, կա երկու հավիտենականություն՝ ՑԵՂԸ եւ ՀՈԳԻՆ: ..., ուր ՑԵՂԸ ազգի իսկությունն է, այն խորքը, ուր ամբարված են բոլոր ՇԻՆԻՉ կարելիութիւնները, սկզբնասկիզբ (նախասկզբնական) ուժերի բոլոր աղբյուրները, նաեւ բուն արժեքայինի շերտը, ազգի անսահմանությունը, լինելու եղանակից միջնորդավորված, տիեզերական ներկան, որ նաեւ այն բովանդակ քարայրն է, ուր դեռ եւ միշտ բնակվում են դյուցազներգակ քաջերը:

ՎԱՐԴԱՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ ԵՒ ՕԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Սարաֆեան Ն., «Տեսարանները, Մարդիկ եւ ես», Երեւան, «ԵՐԿ» ,1994, էջ 242:
2. Տե՛ս նույն տեղում, էջ 243:
3. Տե՛ս, Զարեան Կ., «Դեպի ԱՐԱՐԱՏ», Երեւան, «Սարգիս Խաչենց», 2001, էջ 255:
4. Տե՛ս, մեր նախորդ գրությունը նույն ամսագրի մեջ:
5. Տե՛ս, Զարեան Կ., «Դեպի ԱՐԱՐԱՏ», Երեւան, «Սարգիս Խաչենց», 2001, էջ 288: Տե՛ս նաեւ «Անցորդը եւ իր ճամբան», Երկեր, Տպարան Կաթողիկոսութեան ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, Անթիլիաս, Լիբանան, 1975, էջ 120:
6. Մեր ձեռքին ունենալով պարոն Մ. Նշանեանի մեկ գրությունը՝ անհրաժեշտ համարեցինք որոշ գրառումներ, մեջբերումներ անել նրա հետազոտությունից, որ կոչվում է «Եղեռնի լռութիւնը Կոստան Զարեանի արձակին մէջ»: Իսկ բուն մեջբերման հետ ընթերցողը կարող է հարաբերվել Կ. Զարեանի «Անցորդը եւ իր ճամբան» գրությունում. տե՛ս, ԵՐԿԵՐ, Տպարան Կաթողիկոսութեան ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, Անթիլիաս, Լիբանան, 1975, էջ 108-109. Լենինը եւ իր կողմնակիցները «ՌԱԴՈՒԳԱ» անունով թերթ են հրապարակել եւ 17-ամեա Կ. Զարեանն այնտեղ տպագրել է մի քանի (ռուսերեն լեզվով գրած) բանաստեղծություն՝ «Կ. Մարքսի մորուքը թաթախելով ՄԱԽԻ փիլիսոփայության մեջ», տե՛ս նույն տեղում:
7. Տե՛ս, Զարեան Կ., «Դեպի ԱՐԱՐԱՏ», Երեւան, «Սարգիս Խաչենց», 2001, էջ 326-327:
8. Միջնորդավորումն իրականացել է նույն աղբյուրից, որի մասին խոսվեց վեցերորդ հոլման մեջ:
9. Տե՛ս եւ խորամուխ եղիր Վարուժանի, ԵԼԺ 3 հատորով, Երեւան, ԳԱԱ հրատարակության հ. 3-ի, էջ 93,147 գրություններում:
10. Միջնորդավորումն իրականացել է ինչպես նույն աղբյուրից, այնպես էլ «ԱՆԿԱՐԵԼԻ ԹԱՏՐՈՆԸ»՝ Կ. Զարեանին նվիրված հետազոտությունից:
11. Զարեան Կ., «ՍՊԱՆԻԱ», Երեւան, «Նաիրի»,1998, էջ 18:
12. Տե՛ս, Կոստանյան Ա., «Բացարձակի որոնումը», Երեւան, «Սարգիս Խաչենց», 2004, էջ 129: Տե՛ս նաեւ, կամ հատկապես Զարեան Կ., ԵՐԿԵՐ, Տպարան Կաթողիկոսութեան ՀԱՅՈՑ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ, Անթիլիաս, Լիբանան 1975, էջ 29-30:
13. Տե՛ս, Զարեան Կ., «Դեպի ԱՐԱՐԱՏ», Երեւան, «Սարգիս Խաչենց», 2001, էջ 299:
14. Տե՛ս, նույն տեղում, էջ 302:

ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻ



Օձունի վանք

Հեռավոր անցյալը միշտ էլ մշուշով է պատված, ու ներկան այդ մշուշոտ դեմքերի ու դեպքերի բացահայտիչն է: Սերունդների պայքարն էլ հենց այդ դեպքերի ու դեմքերի մշուշը փոքրիշատե մաքրելն է:

717-ին՝ Եղիա Արծիշեցի կոթողիկոսի մահից հետո, Ամենայն հայոց կաթողիկոս է ընտրվում Հովհաննես Իմաստասերը (Հովհան Օձնեցի): Օձնեցին ծնվել է 650-ականներին, Լոռու մարզի (այժմ՝ Տաշիր գավառ) Օձուն գյուղում՝ ազնվականի ընտանիքում: Աշակերտել է անվանի ճգնավոր վարդապետ Թեոդորոս Քռենավորի մոտ: Եկեղեցական-քաղաքական գործիչ, հայոց հայրապետը, շնորհիվ իր հավասարակշռության ու կեցվածքի, կարողանում է դիմակայել Հայաստանի վրա մեծ ազդեցություն ունեցող Բյուզանդիայի և Արաբիայի նման հզոր երկրներին: Իր քաղաքականությամբ նա հակված էր արաբների կողմը, և ոչ թե հույների: Նրա օրոք Հայաստանը համեմատաբար խաղաղ ժամանակներ էր ապրում: Օձնեցին պճնասեր հանճար ուներ: Մի օր Հայոց հայրապետին Դմասկոս է հրավիրում արաբ ամիրապետը և խնդրում, որ նա ներկայանա տոնական զգեստով: Ամիրապետը տեսնելով Օձնեցու շքեղ զգեստը հարցնում է.

- Ես լսել եմ, որ ձեր Քրիստոսը այդպիսի զգեստ չի հագել, իսկ դու, ո՞վ աստվածատուր, բնական գեղեցկության վրա գույներ ես ավելացնում, որ նույնիսկ չենք համարձակվում հպվել, համբուրել:

- Քրիստոսը զորությամբ ու հրաշքներով էր օժտված, իսկ մենք այդպիսի զորությամբ չենք օժտված: Այդ իսկ պատճառով մեզ պատկառելի ենք ցույց տալիս: Իսկ եթե ուզում ես իմ ներքին կյանքը իմանալ՝ հրամայիր, որ ներկաները հեռանան,- պատասխանում է Օձնեցին:

Երբ ամիրապետն ու նա մենակ են մնում, հայրապետը ցույց է տալիս շքեղ զգեստի տակից հագած այծի կոշտ մազից հյուսված զգեստը: Զգեստը քսվում էր մարմնին և այրան հետքեր առաջացնում: Ասես՝ պատմության անվերջ ճանապարհին իր հետքերը չկորցնելու համար:

Հովհան Օձնեցին մեր այն հայրապետներից մեկն է, որ նշանավոր է եղել իր մատենագրտական վաստակով (ճառեր, մեկնություններ, ներբողներ): Իմաստասերի նշանավոր գործն է եղել «Կանոնագիրք Հայոց»-ը (719թ), որն իր կաթողիկոսության ժամանակաշրջանում կազմել ու շրջաառության մեջ է դրել, ինչն ավելի թափանցելի է դարձրել քրիստոնեական դավանանքի էությունը և ակնառու՝ աղանդներն ու նրանց «բացիլները»: Մինչ Օձնեցու ժամանակաշրջանը հայերն ամփոփ կանոնագիրք չեն ունեցել. որոշումներ ու կանոններ, որոնց անգիտակ էին շատերը:

Օձնեցու գրչին են պատկանում նաև «Գիրք Թղթոց» ժողովածուն (որն իր մեջ ամփոփում է տիեզերական եկեղեցու հայրերի թղթակցություններն ու պաշտոնական նամակները՝ թանկագին աղբյուր ժամանակի պատմության համար), «Եկեղեցու կարգերի մասին», «Ատենաբանություն» և այլն:

Օձնեցու գահակալության օրոք՝ 719-720թթ., տեղի է ունենում Դվինի 6-րդ ժողովը՝ ներքին հարցերի բարեկարգման նպատակով: Իսկ 726թ. Մանազկերտում գումարվում հայ եկեղեցու պատմության մեջ հայտնի Մանազկերտի ժողովը, որտեղ հիմք է դրվում հայ-ասորական եկեղեցական դաշինքին:

Այսպիսի եռանդուն աշխատանքն էլ հիմք է հանդիսացել ամենազոր ու ամենակարող ուժին, որ հավանական ու անհավանական պատմություններ է հյուսել Օձնեցու մասին: Հովհան Օձնեցի հայրապետ-քաղաքական գործչի հետ կապված շատ պատմություններ կան: Առավել հետաքրքիր է նրա երկրորդ բնակավայրի՝ Արդվու հետ կապված պատմությունը. խոր ծերության հասակում՝ 728-ին, հայրապետական աթոռին նստեցնելով Դավիթ Արամոնեցուն, Հովհան Օձնեցին հեռանում է Արդվի գյուղի Սուրբ Հովհաննես եկեղեցին և այնտեղ կնքում իր մահկանացուն:

Ասում են, մի օր ճգնավոր Օձնեցին աղոթելիս է լինում, երկու զարհուրելի վիշապներ հարձակվում են եկեղեցու վրա: Հրաշագործ Օձնեցին դուրս է գալիս, սուրբ գավազանով խփում վիշապների գլուխներին և ասում.

- Քար դառնաք, պորտներիցդ ջուր գնա, որ սպեղանի դառնա տկարներին:

Այսօր էլ Արդվու եկեղեցու մոտակա ժայռերին երևում են քարացած օձերը, որոնց պորտից ջուր է հոսում: Այդ վայրը մինչ օրս կոչվում է «Օձի պորտ»:

1998թ. Օձուն գյուղում կանգնեցվեց Հովհան Օձնեցու արձանը:

Ժամանակին հայկական ամեն գյուղ ու շեն ունեցել է իր հոգևոր առաջնորդը, ով համարվել է հոգևորը և լուսավորչականը տարածող: Հիմա Օձունի VI դարի բազիլիկ եկեղեցին ունի իր հոգևոր հովիվը, ով ձեռնամուխ եղավ եկեղեցու վերանորգման աշխատանքներին: Եկեղեցին տարիներ, դարեր շարունակ իր ներսում թաքցրել է որմնանկարներ, որոնք բացահայտվեցին վերանորոգման ժամանակ:

Տեր Վրթանեսը կազմակերպում է մանկական ճամբարներ ու երիտասարդական հավաքներ...: Իր դռները բացել նաև Օձունի մշակույթի տունը, որը հետխորհրդային տարիներից ի վեր անգործության էր մատնվել: Մշակույթի տան մի փոքրիկ սենյակում հիմա ամեն օր երեխաների հետ պարապում են «Հոգևոր երգեր» և «Հայրենասիրական ընթերցումներ»:

Եկեղեցու դարպասներից ներս կազմակերպվում են նաև երիտասարդական քննարկումներ, այնպիսի թեմաների շուրջ ինչպիսիք են՝ հայրենիք, սեր, ընտանիք, ծնողներ և մարդու կենսագործունեությունը կազմող այլ թեմաներ: Իսկ Օձունի գմբեթավոր բազիլիկը գահին բազմած թագուհու նման ասես ժպտում է, որ անհայտ չմնացին տարիներն ու որմնանկարները, որ օձնցիները հավաքվում են իր շուրջն ու գովերգում դարեր շարունակ մաքառող հնաբույր, սակայն միշտ երիտասարդ ու հմայիչ իրենց թագուհուն:

ԱՐՓԻՆԵ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ԼԵՌԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՎԵՐՀՈՒՇԸ

Խաչատուր Աբովյան

Սկիզբը՝ թիվ 11-րդ համարում

21

«Սա՞ է, սա՞... լսե՛ք այս Հաբեթ, Սեմ և Քամ որդիներ անդրանիկ,
Լսո՞ւմ եք ինչ նոր լուր է, նոր դարաշրջան է սկսվել հիմա,
Այս Ավետիսն ահա իմ դարում էլ էր հնչել, դեռ չեղած՝ թե մարտնչող մի այր,
Բազուկով հուժկու, զորությամբ խաչի պիտի փշրեր դռները դժոխքի»:

22

Ասաց և բռնեցին ոմն ոտներս, մյուսը ձեռքերս,
Շրջապատելով ինձ չորս կողմերից ինչպես մաքիներն հոտի գառներին:
«Գնա՛, տա՛ր, աղաչում ենք քեզ, կերպարով այս խաչի,
Գնալով տար, կնքիր շիրիմները մեր՝ քո նախահայրերի»-ասացին:

23

Երկնասլաց բարբառմամբ, արտասված դեմքերով՝
անմահության լույսով ողողված,
Նայեցին իրենց հինավուրց օրրանին, նայեցին կարոտով:
Եվ այնտեղ բազկատարած սրտառուչ ձայնմամբ միաբերան
Օրհնեցին դարերի անհուն կառքը Վարողին երգով գովության:

24

Հեղեղի ալիքները Քեզնով դադարեցին, Անսահման էակ,
Ու Քեզ ընծայված իմ գերդաստանի ճյուղերն այստեղ հանգիստ գտան,
Բայց իմ հետագայի թոռներն որբացած արդեն ծովի մեջ արյան,
եղդվում էին ծփալով, մինչև Քո հզոր ձեռքով փրկիչ տվիր նրանց:

25

Քեզ, վերասլաց մեր այս աղերսով Քո ատյանն վերին՝ առաջդ ենք գալիս,
Պահիր Դու ամուր իմ ազգն ու երկիրն, որ Դու ես հիմա Հայրը նրանց,
Այ՛ս է ծառը փրկագործ, այ՛ս է ազատարարը սերունդների մարդկանց:
Չ՞է որ նրանք չեն մնալու անտերունչ, անհող:

26

Նազաքայլ ճեմելով այստեղ լուսինն է ծագում, համեստ փայլով պաճուճված,
Բացելով վարագույրը երկնային, ցոլում են այստեղ աստղերն հրաշալի:
Տեսնում եմ անցնող՝ անճառ փառքերի հրաշքը ներկա,
Չնայած գետնամած, բայց երկնքում է ամփոփվում դեռ միտքս զմայլված:

27

Աչքերից, վարդափթիթ այտերով շուրթերից ժպիտ ու արտասուք,
առնված մեղմ փայլով՝ լուսասփյուռ շողում են դեմքերին երջանիկ նախնեաց:
Եվ երկնագնաց ճամփով (**ծիր կաթին**) վեր համբառնալով, ջերմ դեռ նայում են լեռանն ու կիրճին,
Օրհնելով դրանց, երկնաչու ամպերի թևերով վեր խոյանալով:

28

Ես էլ համբուրելով սրբազան տեղին կայանի նախնեաց,
աղաղությամբ մաղթում եմ նրան լինելու պատվար իմ երկրի համար:
Մնալ այսուհետ ընդդեմ թշնամիների՝ ամրոց անսասան,
Մնալ նրան հուսացած տարագիր որդոց համար՝ հզոր ապաստան:

(շարունակելի)

Թարգմանությունը՝ ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ

ՀԱՅ ՍԵՐՈՒՆԴ

Վրեժխնդիր մեր հայորդիք գալու են դեռ
Նոր ուժերով հին մտքերով,
Սերունդներին պատիվ բերող,
Վաղվա համար կռվի ձգտող,
Նախնիների սահմանները նորից գծող,
Ընկած խաչեր վեր բարձրացնող,
Քանդված բերդեր վերականգնող,
Պարզ ճակատով կռվի ձգտող,
Մեր ապագան գալո՛ւ է դեռ:
Հայկի ուժը մեզ է տրված
Մենք ենք սերունդն արիածին քաջ Վահագնի,
Մեր պապերի խաչքարերը մի օր պիտի զարթնեն քնից,
Մի օր պիտի մահդ տեսնեն,
Մի օր պիտի ապագայում
Իբրև ժառանգ արիների
Սերունդները իրար պատմեն
Իրենց անցյալ սերունդներում
Հայի փառքի, արիության,
Վրեժխնդիր Հայի ուժի,
Արյան դիմաց արյուն թափող Հայի մասին:
Այդ ժամանակ՝ արդեն վաղուց,
Եռագույնը կփողփողա մեր պատմական հայրենիքում,
Կփողփողա, կհուրհրա
Հայը կապրի փառքով, պատվով
Նախնիների վեհ լեռներում՝
Մեր լեռնային բարձրավանդակ հայրենիքում:

ՆԱՐԵԿ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ՝ ԿԱՆԱՅՔ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԻԿ

Հաճախ կյանքի ընթացքում համոզվում ենք, որ կանայք ու տղամարդիկ կարծես այրահեղություններ լինեն, երկու տարբեր մոլորակների բնակիչներ: Նրանց նպատակներն ու ցանկությունները ծայրահեղ տարբեր են և գրեթե չեն հատվում: Ահա թե ինչու՝ ուրաքանչյուր զույգի կազմավորումը հիրավի հրաշք է: Հավատանք, որ այս տեսակետը սուբյեկտիվ կարծիք է և անվերապահորեն տարածվել բոլոր դեպքերի վրա չի կարող, սակայն խոստովանենք, որ կանանց ու տղամարդկանց պատկերացումներն ու համոզմունքները, սպասումներն ու հավատալիքները հաճախ իսկապես դժվար համադրելի են:

Ի՞նչն է ընկած կանանց ու տղամարդկանց տարբերությունների հիմքում: Ինչո՞ւ նույն քաղաքում, դպրոցում և անգամ բակում մեծացող երկու անհատներ այդքան տարբեր են: Մի՞թե անհավանական է նրանց միջև երջանիկ ու երկարատև հարաբերությունների առաջացումը:

Փորձենք տեսնել այդ տարբերությունները ձևավորող հիմքերը:

Ահա ընտանիքում ծնվեց զավակը: Անկախ սեռից, այն ուրախություն ու նոր ապրումներ է առաջացնում բոլորի մոտ: Գրեթե լույս աշխարհ գալու առաջին օրից սկսվում է ***<u>տղամարդու և կնոջ ավանդական դերերի ձևավավորումը:</u>***

Վաղ մանկական տարիքից սկսած՝ երեխաներին, կախված սեռից, շրջապատողները տարբեր պահանջներ են ներկայացնում, խրախուսում վարքի այս կամ այն դրսևորումները: Սա էլ տարիքին զուգահեռ նպաստում է վարքի ու բնավորության, համոզմունքների ու սպասումների ձևավորմանը: Մանկուց ի վեր խրախուսվում են տղաների նախաձեռնողականությունը, ինքնուրույնությունը, ֆիզիկական ուժի դրսևորումը: Եթե աղջկա լալկանությունը, վախը, այլոց ապրումներին հաղորդակից լինելը, հուզականության այլ դրսևորումները չեն արժանանում քննադատության, ապա տղաների մոտ հուզականության ցանկացած արտահայտություն ծնողները և մոտակա շրջապատը դիմավորում են հետևյալ արտահայտություններով՝ «Չե՞ս ամաչում, չէ՞ որ դու տղա ես», կամ «Ի՞նչ ես աղջկա պես լաց լինում»: Ցավոք, հիմնականում այս կերպ են արձագանքում տղայի հուզականության դրսևորմանը, անկախ նրանից, թե ինչն է դրա առաջացման պատճառը. հասակակցի պատճառած ցավը, վախը ինչ-որ մի բանից, թե այլոց ապրումներին հաղորդակից լինելը:

Հետաքրքիր է, որ այն դեպքերում, երբ դեռ մի քանի ամսեկան տղան լալիս է, իսկ աղջնակը՝ ոչ, նրան մատնանշում են ու ասում՝ «Նայի՛ր, աղջիկ է, բայց լաց չի լինում», դրանով իսկ ձևավորելով համոզմունք, որ աղջիկները ինչ-որ տարօրինակ լալկան էակներ են: Ահա սա է առաջին տարբերության ձևավորման հիմքը:

Սեռերի միջև ընկած հոգեբանական տարբերությունը չի նշանակում, որ նրանց մոտ սեռից է կախված այս կամ այն բնութագրի բացակայությունը կամ առկայությունը: Պարզապես, նույն բնութագիրը, նույն որակը տարբեր երանգավորում են ստանում՝ սեռից կախված: Եվ ահա, այս տարբերությունները մեծապես անդրադառնում են կանանց և տղամարդկանց միջև գոյություն ունեցող փոխհարաբերություններում:

Դիտարկենք *<u>հուզականության</u>* տարբեր դրսևորումները: Մի դեպքում, հուզականություն ասելիս, հասկացվում է այլոց հոգեկան վիճակը հասկանալու, նրանց զգացմունքները կիսելու (այլոց ապրումներին հաղորդակից լինել) և դրանք արտահայտելու (հուզական էմպատի) կարողություններ: Մյուս դեպքում՝ դա սեփական զգացմունքների վերապրումն է, դրանց արտահայտումը (հուզական էքսպրեսիա):

Շրջապատում հաճախ ենք հանդիպում կանանց, ովքեր բողոքում են, թե տղամարդը՝ ամուսինը, չի հասկանում իրեն՝ անզգա է: Եվ իսկապես, երբեմն թվում է, թե տղամարդիկ բոլորովին ընդունակ չեն հասկանալ այլոց (հատկապես՝ կանանց զգացմունքներն ու հոգատար, կարեկցող վերաբերմունքը): Սակայն հետազոտությունները ցույց են տալիս, որ տղամարդիկ, կանանցից ոչ պակաս կարողանում են նկատել ու հասկանալ դիմացինի զգացմունքները: Ավելին, տղամարդիկ ներքուստ ապրումակցում են, սակայն նրանց համար չափազանց կարևոր է, որպեսզի այլոք չնկատեն դա: Ինչ-ինչ պատճառներով տղամարդիկ հաճախ չեն ցանկանում, որպեսզի իրենց համարեն ապրումակցող, կարեկցող, ցավակցող:

Ահա մի դեպք, ուր պարզ երևում է տղամարդու ու կնոջ հույզերի դրսևորման տարբերությունը:

Մի կին պատմում է. «Նույն բաների մասին պատմում եմ ամուսնուս և ընկերուհուս: Հետո էլ կասեն թե մարդու ամենամտերիմը ամուսինն է: Չգիտեմ, գուցե ուրիշների մոտ այդպես է, բայց մենք, թեև բավականին լավ հարաբերություններ ունենք, սակայն կարծես՝ երկու տարբեր լեզուներով խոսենք: Քանի տարի է միասին ենք, սակայն այդպես էլ կարոտ մնացի մի սրտակից զրույցի: Գրեթե երբեք չի հասկացել ինձ և չի էլ հասկանում: Վերջերս այսպիսի մի դեպք պատահեց: Ամեն ինչ այնքան լավ էր. տրամադրությունը լավ, նստած իր համար հանգիստ սուրճ էր խմում: Դրանից առաջ ամբողջ ընտանիքով նստած ճաշում էինք, կատակում էր, ծիծաղում: Ես էլ սկսեցի պատմել վերջերս եղած - չեղածի մասին: Մարդ եմ, չէ՞, ես էլ եմ ուզում կիսվել, խոսել մեկի հետ□ Աշխատանքիս տեղն էլ որքան ժամանակ է լարված վիճակ է. կրճատումներ են նախատեսվում: Սկսեց խորհուրդներ տալ, աշխատանքի հետ կապված. «Քեզ պե՞տք է այդ աշխատանքը: Դուրս արի, եթե պիտի այդքան նյարդայնանաս: Պետք լինի, նոր աշխատանք կգտնենք»: Հարևանները նոր կահույք էին գնել, բավականին էլ լավ որակի, գնացել էի շնորհավորելու□ Երեխային նոր դասարան եմ տեղափոխել՝ ուսուցչուհին շատ կոպիտ էր□ Հա՛, նորից այս աշխատանքը, որ հիշում եմ, թե ինչ կա-

րող է պատահել□ Ու հանկարծ պոռթկաց: «Ես ի՞նչ անեմ: Ի՞նչ ես ուզում ինձանից, չեմ հասկանում: Ասացի չէ՞, գործիդ հետ կապված ի՞նչ կարող ենք անել□»:

Ապշեցի, ես նրանից ամենևին էլ խորհուրդ չէի ակնկալում: Պարզապես զրուցում էի: Նեղվեցի: Որոշեցի հանդիպել ըներուհուս հետ: Հաջորդ օրն էլ հենց հանդիպեցինք: Զրուցեցինք, կիսվեցինք: Ինքն էլ անհանգստացավ աշխատանքիս առումով, հիշեց, որ մի քանի ամիս առաջ էլ իր մոտ նույն խնդիրը կար, սակայն ամեն ինչ բարեհաջող ավարտվեց: Զգում էի, որ հասկանում է ինձ, կարեկցում, թե՛ իր խոսքերից, թե՛ իր դեմքի արտահայտությունից: Հանգստացած վերադարձա տուն: Ինձ ընդամենը պետք էր, որ մեկը կարեկցեր: Դրանից հետո իրականում ամեն մեկս էլ կարող ենք լուծել մեր խնդիրները»:

Եթե ուշադիր լինենք, ապա այս դեպքում կնկատենք մի կարևոր մոտեցում, որը բնորոշ է տղամարդկանց: Հիմնականում տղամարդիկ, պայմանավորված գուցե նրանց մտածելակերպի առանձնահատկություններով, նման զրույցներն ընկալում են՝ որպես օգնության կոչ, խնդրանք: Քիչ կհանդիպեք այնպիսի տղամարդու, ով լսելով ձեր զրույցը կսկսի ձեզ հետ միասին «վայ-վույ» անել: Նա պարզապես վստահ է, որ ամենևին էլ դա չեն ակնկալում իրենից: Տղամարդը սկսում է ելքեր որոնել նկարագրված իրավիճակից, փորձում է դիտարկել, թե ինչ հնարավոր ու արդյունավետ քայլերի կարելի է դիմել: Մինչդեռ զրուցակիցը, պարզապես, լսված լինելու ու կարեկցանքի կարիք է ունենում: Իսկ տղամարդու կողմից նման «չոր» ու գործնական վերաբերմունքը հաճախ ընկալվում է որպես սառը անտարբերություն, անզգայնություն: Անգամ, եթե ներքուստ տղամարդը կարեկցում է (ինչն անշուշտ անժխտելի փաստ է, սակայն, մի մոռացեք, որ տղամարդը խնդիր ունի թաքցնելու, շրջապատողների համար անտեսանելի դարձնելու իր հուզական ապրումները, քանի որ համոզված է, որ դա չի համապատասխանում տղամարդու ավանդական դերին): Տղամարդիկ հաճախ հայտնվում են այնպիսի իրավիճակներում, որոնք նրանցից պահանջում են ուժ, ինքնուրույնություն, իշխանություն, մրցունակություն, այսինքն՝ այնպիսի հատկանիշներ, որոնք հազիվ թե ներդաշնակ են կարեկցանքի հետ: Իսկ եթե անգամ տղամարդը «արձակում է» իր զգացմունքները, նա սովորաբար ավելի զուսպ է արտահայտում վախը, անհանգստությունը, ափսոսանքը, կարեկցանքը և նման այլ զգացմունքներ:

Մինչդեռ կինն ավելի հակված է հուզականորեն արտահայտել իր ապրումները, իր վերաբերմունքը դեպքի վերաբերյալ: Այսինքն՝ կանայք և տղամարդիկ իրականում ունեն հավասար հուզականություն, պարզապես, նրանք տարբեր ուժգնությամբ ու նշանակությամբ են արտահայտում դրանք: «Իսկական տղամարդ» ասելով՝ տղամարդկանց մեծամասնությունը հասկանում է ամրություն, պնդություն, կարծրություն:

Կանայք ավելի շատ են արտահայտում իրենց զգացմունքներն ուղղված շրջապատողներին (հետաքրքրության արտահայտում՝ այլոց և նրանց ցանկությունների, պահանջմունքների նկատմամբ): Մինչդեռ տղամարդիկ հիմնականում արտահայտում են եսակենտրոն զգացմունքներ, պահանջներ, ցանկություններ, սեփական հետաքրքրություններ: Կանայք հեշտությամբ կարող են արտահայտել վախի ու տխրության զգացմունքներ, քանի որ հասարակության մեջ նրանց նմանատիպ ապրումներն ավելի ընդունելի են և «անհարմար չեն»: Այս զգացմունքներն գրեթե նույն ուժգնությամբ առաջանում են բոլորի մոտ՝ անկախ սեռից:

Ագրեսիվության արտահայտման տարբերությունը ևս կարելի է բացատրել սեռային դերերով: Այսպես, դրանցից ոմանք, որոշ առումներով, խրախուսում են տղամարդու ագրեսիվության դրսևորումը: Մինչդեռ կանանց դրսևորած ագրեսիվությունը քննադատվում է: Տղամարդկանց հաճախ հրահրում են ագրեսիվության, անգիտակցաբար կամ գիտակցաբար, բացահայտ կամ քողարկված եղանակներով՝ կասկածի ենթարկելով նրանց հասարակական դիրքը, ուժը:

60 ամյա Լիդայի փեսան նախկինում հասարակական լավ դիրք, հարգված աշխատանք, կայուն եկամուտ ուներ: Սակայն Լիդան սկզբից էլ դեմ էր այդ ամուսնությանը: 5 տարի առաջ դուստրը ամուսնացավ և ունեցան երկվորյակներ: Այսօր Լիդան ասում է. «Իմ անհանգստություններն ու մտահոգություններն արդարացվեցին: Ես միշտ էլ իմացել եմ, որ նման աշխատանքային հաջողությունները կասկածելի ու անցողիկ են: Տեսա՞ք, որ ես իրավացի էի: Հիմա իմ ամուսինն ու որդին են նրանց կերակրում: Նա էլ ձեռքերը ծալել, չգիտես՝ ինչին է սպասում»: Լիդան, պարզվում է, առիթը բաց չի թողնում ակնարկելու, որ վերջին ամիսներին նա «Մի լումա տուն չի բերել»: «Դու ի՞նչ տղամարդ ես, որ քո զավակներին չես կարող պահել» «դաստիարակչական նպատակներով օգտագործվող» նախադասություններ է օգտագործում զոքանչը՝ փեսայի հետ խոսելիս: «Վերջերս էլ այնքան անհարգալից է դառել, կոպիտ: Մի խոսք դեռ չասած պոռթկում է, անպատվում...»:

Հոգեբանը, որին դիմել էր Լիդան, բացատրեց, որ գուցե փեսայի աճող ագրեսիայի պատճառը կայանում է նրա կարողությունների վերաբերյալ թերահավատության արտահայտման ու տղամարդկությունը կասկածի ենթարկելու մեջ: Սկզբից չէր համաձայնում և համարում էր, որ նախկինում կիրք, հանգիստ ու հավասարակշռված մարդու տպավորություն թողնելը ընդամենը դիմակ էր, որը վաղ թե ուշ պետք է պատռվեր:

Մի քանի հանդիպումների ընթացքում հաջողվեց փոխել կնոջ մոտեցումը և դադարեցնել անընդհատ հնչող ստորացնող արտահայտությունները: Ու թեև բավականին բարդ էր առաջին օրերին զերծ մնալ նման, արդեն սովորական դարձած, «արտահայտչաձևերից», հետզհետե հարաբերությունները հարթվեցին: Մեր այցելուն ընդունեց, որ իսկապես, երբ նա չէր փորձում «դաստիարակել» իր փեսային ու չէր անպատվում նրան, վերջինս բավականին հանգիստ էր, ավելի ակտիվ էր աշխատանքի որոնման հարցերում: Նա չէր պաշտպանվում, քանի որ բացակայում էին ընդհարումներ հրահրող մեղադրանքները:

Այսինքն, ցանկացած տղամարդ, ում տղամարդկային արժանապատվությունը ու տղամարդուն բնորոշ առանձնահատկությունները կասկածի են ենթարկվում, հիմնականում ագրեսիվ է դառնում՝ նպատակ ունենալով ցրել նման կասկածները:

Անկախ սեռից յուրաքանչյուր մարդ ագրեսիվ է դառնում, երբ փորձում են վիճարկել իր արժանիքները, կարողությունները: Սակայն պետք է նշել, որ ուժեղ, առնական տղամարդուն ոչինչ չի կարող դրդել «ապացուցելու» սեփական առնականությունը, քանի որ նա երբեք չի կասկածում դրանում:

ՆԱՐԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ-ԹՈՎՄԱՍՅԱՆ
Հոգեբան

ՀԱՅՐԵՆՆԵՐԻ ԿԱՊՆԻՆ

Եփրատի աջ ափին, խոտորնակ-խոտորնակ լեռնալանջերի վրա, յոթ ծունկ է տվել հայրենների ոստան Ակը: Սա քնարերգուների օրրանն էր, Հայոց աշխարհի երկրորդ Գողթնը: Բոլոր ակնեցիներն էլ կարող են հայրեններ հորինել: Նրանք բանաստեղծելու շնորհք են ստացել ի վերուստ: Հայրեններ էին հորինում և՛ բանաստեղծներն ու պարտիզպանները, և՛ հողագործն ու արհեստավորը, և՛ սիրահար աղջիկն ու զառամյալ կինը:

- Էլ ի՞նչ ակնեցի, որ հոգին հայրենով չքաղցրացնի,- ասում էին իրենք իրենց մասին: Ակնում մի սովորություն կար. յուրաքանչյուր նոր ստեղծված հայրեն գրի էին առնում մատյանում հնամենի այն ծառի մոտ, որ կոչվում էր Հայրենների կաղնի: Այդ ծառը գտնվում էր Ակնի արևելյան կողմում: Դա քաղաքացիների սրբությունն էր: Ակնեցիները համոզված էին, որ Հայրենների կաղնին կպատժի նրան, ով փորձի կողոպտել ուրիշի հոգու խայտանքը՝ իրեն վերագրի ուրիշի հայրենը:

ՓՉԱԿԸ՝ ՁԵՌԱԳՐԱՏՈՒՆ

1170 թվականին սելջուկ հրոսակազորքը՝ Ելակուզ ամիրայի գլխավորությամբ, պաշարեց Ողջի գետի ձախ ափին գտնվող Բաղաբերդ ամրոցը: Թշնամին մեծաթիվ էր, պաշտպանները չէին դիմանում, և ուր որ է բերդը կկործանվեր:

Կարող էր ազատվել միայն մեկը: Ահռելի կիրճի վրայով մի պարան էր կապված: Հայ զորականներից մեկը ամրացում պահվող ձեռագիր մատյաններից մի քանիսը կապեց մեջքին, անջատեց պարանի ամրոցակողմի ծայրը և պարանից կախված սլացավ կիրճի մյուս կողմը: Թշնամիները տեսան թռչող մարդուն, բայց չհասցրին նետեր արձակել:

Ամրոցը կործանվեց, սրի քաշվեցին ողջ մնացած պաշտպանները: Ավարի մատնվեց տասը հազար հայերեն մագաղաթյա մատյան:

Մազապուրծ զորականը, որի ճակատը քերծվել և արյուն էր հոսում, խորացավ Խուստուփ լեռան լանջի թավուտ անտառի մեջ:

Զորականին թվում էր, թե ինքը արյունաքամ է լինում, իսկ շալակի թանկարժեք բեռը շատ ծանր էր: Նրա հայացքը կանգ առավ կողքի հսկա կաղնու փչակին: Առանց հապաղելու՝ նա ձեռագիր մատյանները տեղավորեց փչակում և, սրբելով ճակատի արյունը, շարունակեց առաջ շարժվել: Ոտնաձայնը կրկնվեց, բայց նրա մշուշված հայացքը ոչինչ չէր տեսնում: Հավանաբար սելջուկ զորական է, անցնում է նրա մտքով: Սելջուկը երևի կարծում է, թե այս զորականը ամրոցի ոսկին շալակն առած փախցնում է անտառի խորքը: Կարևորն այն է, որ փչակը նրա աչքով չընկնի, մտածում է հայ զորականը, ինքը՝ ոչինչ, ինքը արյունաքամ է լինում և, միևնույն է՝ չի ապրի:

Իրկնադեմին զորականը մեռավ:

Անցավ յոթ հարյուր տարի: Ծառի փչակը դարձավ ձեռագրատուն: 1870 թվականին Բեխ գյուղ բնակիչներից մեկը գտավ այդ ձեռագրատունը, ուր պահպանվել էր տասներկու հնաբույր մատյան:

Հայոց ծառերը հենց այնպես չեն սոսափել: Նրանցից շատերը ժողովրդական մասունքները պաշտպանող ամրոցներ են դարձել: Հայկական փչակավոր ծառերը հաճախ փոքրիկ մատենադարաններ են եղել: Նրանք էլ են կողոպտվել: Բայց ոչ բոլորը: Եթե մարդիկ որոնեն, շատ ձեռագրատուն-փչակներ կգտնեն Հայկական լեռնաշխարհում:

ՄԽԻԹԱՐ ԳՈՇԸ ԻՐ ԱՌԱԿՆԵՐԸ ԳՐԻ ԷՐ ԱՌՆՈՒՄ ԿԱՂՆՈՒ ՏԱԿ

Աղստևի հովտում՝ Գոշավանքի շրջակայքում, շատ են հնաբույր կաղնիները: Մխիթար Գոշը սիրում էր իր առակները գրի առնել այդ կաղնիներից մեկի տակ: Սաների այն հարցումին, թե ի՞նչ խորհուրդ ունի դա, Մխիթար Գոշը պատասխանել է.

- Կաղնու տակ եմ գրի առնում, որպեսզի իմ առակները կաղնու պես երկար կյանք ունենան:

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԴԵՍՊԱՆ ՋՈՆ ԴԱՆԻԼՈՎՐՉԸ ԱՅՑԵԼԵԼ Է ԱԽԱԼՔԱԼԱՔ

ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիային (ՀՄԿ) գլխավոր գործադիր տնօրեն, դեսպան Ջոն Դանիլովիչը օրերս այցելել էր Ախալքալաք: Նրան ուղեկցել են Վրաստանում ԱՄՆ-ի արտակարգ և լիազոր դեսպան Ջոն Տրաֆտոն, Վրաստանում ՀՄԿ-ի ծրագրի տնօրեն Լուշա Շարիձեն:

Ըստ Ա-ԻՆՖՈ-ի, նրանք ուղաթիռով անցել են այն ճանապարհների վրայով, որոնք ներգրավված են ՀՄԿ-ի ծրագրերում: Պաշտոնյաները հանդիպել են Ախալքալաքի սակրեբուղոյի անդամներին և ներկայացրել ողջ ծրագիրը, որում նախատեսվում է նորոգել Թբիլիսի-Ծալկա-Նինոծմինդա-Քավրա և Կարծախ-Նինոծմինդա ճանապարհները:

Ծրագրի իրականացման համար նախատեսված է 300 մլն դոլար, որից 100 մլն-ն արդեն հատկացվել է: Ընդհանուր գումարի մեջ է մտնում նաև գյուղատնտեսության զարգացման ծրագիրը: Մնացած գումարը կտրամադրվի հուլիս ամսին, երբ պարզ կլինի թե Վրաստանում գործող չորս շինարարական ընկերություններից որը կշահի հայտարարված մրցույթում: Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Համլետ Մովսիսյանը ողջունել է հյուրերին՝ առաջարկելով, որ կատարվելիք աշխատանքներում աշխատեն տեղացիները: Առաջարկությունը ընդունվել է հյուրերի կողմից:

Շինարարական աշխատանքները կսկսվեն 2007թ. հուլիսին և կավարտվեն մինչև 2011թվականը:

(15. 06. 2007թ., «Հայաստանի Հանրապետություն»)

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԱՄՐՈՑՆԵՐԸ՝ ԿԻԶԻՍՏՈՒ

Նկարում Կոռիկոս բերդն է

Լեռնային Կիլիկիայի սահմանային բերդերից մեկն էր Կիզիստռան, որը մեր պատմիչների՝ Մաթևոս Ուռհայեցու, Սմբատ Գունդստաբլի, Սամուել Անեցու կողմից հիշատակվում է Կինդռոսկավի անունով:

Ստրաբոնն ու Պտղոմեոսը, հիշատակելով Կիզիստռայի բերդը, այն դասում էին Կատավոնիայի կուսակալության բերդավանների կարգին:

Հենվելով Ալիշանի վկայություններին՝ կարելի է ենթադրել, որ այս անուններից մեկը վերագրվում էր բերդին, իսկ մյուսը՝ մոտակա գյուղին կամ ավանին:

Քոնրատ Փոյթինկերի իջևանագրության մեջ բերդի դիրքը նկարագրվում է Կեսարիայի և Տիանայի միջև:

Մաթևոս Ուռհայեցին այն տեղադրում է Արճիասի մոտակայքում (հնում՝ Արգրում բերդի դիրքը). «Առքա ունէին ամուր բերդ մի մօտ ի Ձկնջուրն, վերահաեաց յաշխարհին Գամբաց, որ էր անուն բերդին Կենդռօկաւի»,- և ավելացնում, որ Մանտալյան եղբայրները խոստացել էին այն տալ Թորոսին: Հավանական է, որ այս բերդը Սարոսի ձախ ափին էր գտնվում՝ Վահկայից (որը Թորոսի սեփականությունն էր) դեպի հյուսիս-արևմուտք:

Հայտնի էին բերդի գանձատանը պահվող անբավ հարստությունների մասին պատմությունները:

1079թ. Կիզիստռան դեռ պատկանում էր մի հույն իշխանի: Նույն թվականին էլ այստեղ դավադրաբար խոշտանգեցին և սպանեցին Հայոց Գագիկ Բ Բագրատունի թագավորին:

1111-12թթ. Թորոս Բ իշխանը, հանկարծակիի բերելով հույներին, հարձակվեց բերդի վրա: Վերջիններս, որ առավոտյան դուրս էին ելել բերդից, ետ են փախչում, սակայն չեն կարողանում բերդի երկու դռներն էլ փակել. փակում են միայն ներքին պարսպի դուռը, իսկ արտաքինը բաց է մնում: Թորոսի զինվորների սարսափից՝ բերդի բնակիչները խուճապի են մատնվում և սկսում են հետևի դռնից փախչել: Թորոսի զորքը այնտեղ էլ է հասնում...: Կիզիստռայի անառիկ բերդը Թորոս իշխանի ձեռքն է անցնում: Բերդ, որ երեսուն տարի առաջ ողբերգության թատերաբեմ էր եղել Գագիկ թագավորի մահով:

Կիզիստռայի գրավումով Թորոսը լուծում է Հայոց թագավորի վրեժը հույն իշխաններից: Բերդի մի կողմում անդունդ էր բացվել, հույներին օգնած Մանտալյան եղբայրներից մեկը՝ հուսահատ, ինքնիրեն այնտեղից ցած է նետում, մյուս երկուսը գերվում են, որոնցից մեկը սպանվում է գավազանի հարվածով, մյուսը ողջ է մնում և նշանակվում՝ Վահկայի պահապան:

Կիզիստռան վերջին անգամ հիշատակվում է 1307-ին՝ Սիսի եկեղեցական ժողովի առիթով, որի մասնակիցներից մեկն էլ Կիզիստռայի տերն էր:

Ո՞ՒՄ ՈՒՂԱՐԿԱԾ ԹԱԳԸ ԴՐԵՑ ԼԵՎՈՆ Բ-Ն

1198թ. հունվարի 6, Տարսոնի Ս. Սոփիա տաճար: Կիլիկիայի Մեծ իշխան Լևոն Բ-ի թագադրման համար նրան թագ էին ուղարկել գերմանական կայսեր Հենրիկոս 6-րդը, Բյուզանդիայի կայսր Ալեսոս 3-րդ Անգելոսը և Հռոմի պապը;

Թագադրման արարողապետը՝ Սսի Հովհաննես Մեծաբարո արքեպիսկոպոսը, ճառով դիմեց հավաքվածներին (հայերեն, լատիներեն, գերմաներեն, հունարեն լեզուներով), ապա նշան արեց տեղապահին: Վերջինս, 70 հայ իշխանների և բազմաթիվ օտարերկրյա բարձրաստիճան հյուրերի զարմացած հայացքների ներքո, բերեց Գագիկ Բ Բագրատունի թագավորի թուրը, սուրը, արքայական ողջ հանդերձանքը, այն ամենը, ինչ հայերը պահում էին ութսունյոթ տարի, երբ Թորոս Մեծ իշխանը 1111-ին պատժեց Գագիկ Բ-ին սպանող (1079թ.) բյուզանդացի Ցիցիստրա (Կիզիստռա) ամրոցի իշխան Մանդալեի երեք տղաներին և վերադարձրեց արքայական ողջ հանդերձանքը:

Հովհաննես Մեծաբարոն, որը Լևոն Բ-ի մտերիմներից էր: Նախօրեին գինու սեղանի շուրջ նա կարողացավ համոզել Լևոն Բ-ին կրել միայն հայկական թագը:

- Միայն այդ ձևով մեզ կհարգեն օտարները,- թագադրումից հետո հպարտանում է արդեն կաթողիկոս դարձած Հովհաննես Մեծաբարոն:

ՋԵՄՄԱ ԲԱՂԴԱՂԱՆՅԱՆ
ՀԱԿՈԲ ՄԱՆՋՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ. Միքայել Վ. Յովհաննէսեան, «Հայկական Կիլիկիոյ բերդերն ու բերդաքաղաքները», 1970թ., Վենետիկ:
2. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. III:
3. Մաթևոս Ուռհայեցի, «Հայոց պատմություն»:

ՎՐԱՍՏԱՆԻ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՄ Է ՄՍԽԵԹՑԻ ԹՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻՆ

«Վրաստանի իշխանությունները պետք է մի քանի տարով հետաձգեն պատմական հայրենիք շուրջ 300 հազար մսխեթցի թուրքերի վերադարձը, որոնց երկրից բռնի վերաբնակեցրել են 1940-ական թվականների կեսերին»,- օրերս Վրաստանի խորհրդարանի նիստում հայտարարել է «Ժողովրդավարական ճակատ» ընդդիմադիր խմբակցության առաջնորդ Զվիադ Ձիձիգուրին:

«Վրաստանն առայժմ պատրաստ չէ պատմական հայրենիք մսխեթցիների վերադարձին, որոնք իսլամ են դավանում: Մենք կարծում ենք, որ ամենից առաջ պետք է Վրաստանի բնակչությունից իմանանք, թե նրանք ինչպես են վերաբերվում մսխեթցի թուրքերի վերադարձին: Դրա համար հարկ ենք համարում կազմակերպել համաժողովրդական հարցում»,- ասել է Զ. Ձիձիգուրին: Ընդդիմադիր պատգամավորն այն կարծիքին է, որ Վրաստանի քաղաքական ղեկավարությունը մեծ սխալ է թույլ տվել՝ 1999 թվականին Եվրախորհրդի հանդեպ պարտավորություն ստանձնելով պատմական հայրենիք հարկադիր վերաբնակների վերադարձման վերաբերյալ: «Վրաստանի պետությունը պարտավոր չէ կրել պատասխանատվությունը և պատասխան տալ այն քաղաքական որոշումների համար, որոնք ընդունել է խորհրդային ղեկավարությունը»,- նշել է Զ. Ձիձիգուրին:

(20. 06. 2007թ., «Հայաստանի Հանրապետություն»)

ԳԵԼԻԳՈՒԶԱՆ

Գելիգուզան- գյուղ Արևմտյան Հայաստանի Բիթլիսի նահանգի Մուշ գավառի Շատախ գավառակում, Մուշ քաղաքից մոտ 20-22 կմ հարավ - արևմուտք, Անդոկ լեռան փեշերին, Շենիկ և Սեմալ գյուղերի մոտ: Գելիգուզանը տեղադրված էր Անդոկի գեղատեսիլ ձորակում, որը մինչև 1915թ. ուներ ընկուզենիների հարուստ պուրակներ: Տեղի անհարթ և լեռնոտ լինելու պատճառով, տները իրարից հեռու էին, կառուցված առանձին-առանձին բարձրունքների կամ լեռնաճյուղերի վրա, որը պաշտպանական լավ հնարավորություն էր ստեղծում բնակիչների համար: Գելիգուզանի գրեթե միջից է սկիզբ առնում Խիլփի վտակ Կուս գետակը: Գյուղն ուներ 17 թաղ: Դրանցից էին Տաղվրնիկը, Հարսնգոմերը, Ղարիպշանը, Մխիթարը և այլն: 1881թ. Գելիգուզանը ուներ 413, 1890-ական թվականներին՝ 1000 հայ բնակիչ, որոնք ավանդապահ, քաջ ու խիզախ մարդիկ էին: Նրանք բազմիցս անհավասար ու համարձակ կռիվներ են մղել քուրդ ու թուրք բռնադատիչների դեմ, երբեմն օգնության հասել նաև հարևան գյուղերին: Գելիգուզանն ուներ մեկ եկեղեցի, մոտակայքում կա մի հին և ավերված բերդ-ամրոց: Սասունի ու Մուշի մյուս հայկական գյուղերի նման Գելիգուզանը նույնպես տակնուվրա արվեց. 1915թ. բնակիչներից շատերը զոհվեցին, մյուսները՝ տարագրվեցին Արևելյան Հայաստան:

Գելիգուզան: Չեմ գիտեր քանի տարեկան էի, երբ սորվեր էի Սասնոյ այս գիւղին անունը: Աղբիւր Սերոբի եւ Հրայրի նուիրուած երգերէ՞ն իմացեր էի արդեօք: Թերեւս յուշերէն, թերեւս հայ յեղափոխութեան պատմութիւնէն: Յետոյ ալ նոր երգ մը կը լսէինք Դպրեվանքի մեր Գամիշլեցի ընկերներէն.

«Արեւ դիպաւ սարերուն
Սերոբ տարան թաղելու,
Երբ որ Սերոբ թաղեցին
Հայերը սուգ կապեցին:
Ելի՛, ելի՛ Սերոբ ջան
Վե՛ր կաց, կանգնի՛, փաշա ջան»:

Ու Գելիգուզանը, Սփիւռքի մէջ ծնած, հայ դրօշին կարօտ մեր հոգիներուն, անկախ Հայաստանի հաւատքով մեծցած տղաներուս համար դարձեր էր հոգեւոր հայրենիք, խորհուրդ, գիւղերու գիւղը, տեսակ մը մայրաքաղաք: Ու ահա, կեանքիս վերջալոյին բաղդը ունիմ խումբ մը հայերու հետ երթալ Գելիգուզան: Մեր ինքնաշարժը կը վարէ ինքնավստահ քիւրտ մը՝ Ռամազան: Բայց հայու կը նմանի: Արիւնը կը քաշէ, կ'ըսեն: Գամիշլիի ընկերներէս մէկը կը յիշեմ, ատեն մը դեսպան ալ եղաւ, այժմ հանգուցեալ է: Ան ալ սասունցի էր: Ու Ռամազանը ժամը մը մեզ կ'առաջնորդէ լեռներն ի վեր, լեռներն ի վար: Մուշէն բարձրացեր էինք հարաւ-արեւմուտքի ուղղութեամբ, հասեր էինք Կուրդիկի բարձունքին, որ Կեփեկի եւ Ծիրիճկատարի հետ միասին կը կազմէր Սիմ լեռը: Յետոյ իջանք Առաջաւորի ձորը, հեռուի մէջ տեսանք Շենիկը, Գեղաշէնը ու հասանք Սեմալ: Մեր պատանութեան աշխարհն է: Մեր սիրած երգերուն մէջ յիշուած սարերն ու գիւղերն են... Անդոք, Ծովասար, Շենիկ, Սեմալ: Սեմալի մէջ ժանտարմները կը կեցնեն մեզ: Քաղաքավարութեամբ զիս կ'առաջնորդեն հրամանատարին մօտ: Ժամ մը կը տեւէ այցելութիւնս: Պէտք է, որ Մուշէն հրաման ունենայինք: Հեռախօսը չէր աշխատեր եւ պէտք է սպասէինք, որ ժամը 10 ըլլար: Ու մի քանի հոգիով կը խօսինք ամէն հարցի մասին-Մուշը, Սասունը, բնակչութեան կեանքը, ապրուստի նեղութիւնները: Յետոյ կրօնական հարցեր յառաջ կուգան- Յիսուս, Մոհամմէտ, Աստուածածին, Փէյղամպեր, Մխիթարիչ Սուրբ Հոգին: Սպաներէն մին քիչ մը աւելի հետաքրքիր է. կը սկսի հարց տալ մեր եւ կաթոլիկներու միջեւ եղած տարբերութեանց մասին: Կոտրտուած թրքերէնս կարծես թէ կը գոհացնէ զիրենք, ու վերջապէս հրամանը կուգայ, եւ Սեմալէն կը սուրանք դեպի Գելիգուզան: Ռամազանէն բացի մեր հետ է Մշոյ զբօսաշրջիկութեան գրասենեակի ներկայացուցիչը եւ Գելիգուզանի գիւղապետը, որ մեզի կը ներկայացնէ գիւղը, գիւղի տուները: Լաւատեղեակ անձ կ'երեւի, եւ որոշ չափով բնական է: Մեզի ցոյց կուտա Իսոյի տունն ու բլուրը, Պետոյի տունը, կարգ մը թաղեր՝ որոնցմէ լաւ կը յիշեմ՝ Մխիթարի թաղը: Կարծեմ Պետոյի տանն էր, որ, 1903թ. Հոկտեմբեր-Նոյեմբեր ամիսներուն կարեւոր ժողով մը կը գումարուի՝ յստակեցնելու համար Սասնոյ ապստամբութեան հետ կապուած հարցերը: Այնտեղ էին Անդրանիկը, Հրայրը, Գէորգ Չաւուշը, Սեբաստացի Մուրադը, Սեպուհը, Սպաղանաց Մակարը, Աւօն, Կայծակ Առաքելը, Կորիւնը (Գոմսայ Իսոյ)...Ո՞ւր են հիմա այս հերոսներու հոգիները: Յետոյ կը բարձրանանք եկեղեցի: Կէսը գոմ է, կէսը մարագի պէս բան մը: Անկիւնը՝ մկրտութեան աւազանն է: Կը նստինք, կը կանգնինք, անհանգիստ ենք: Կ'որոշենք աղօթել: Կանգնած ենք այնտեղ՝ ուր թաղուած է Սերոբ փաշայի մարմինը, Հրայր Դժոխքը:



Հրայր նահատակուած է 13 Ապրիլ 1904թ.... «Ի վերին Երուսաղէմ...», «Յիշեա Տէր զհոգի Աղբիւր Սերոբի, Սօսէ մայրիկի, Հրայր Դժոխքի»...եւ յանկարծ Ալիքն է, որ կ'երգէ Հրայիր երգը.

«Յուսով եմ կնքած աչացս վերջին քուն,
Տեսնէ Հայաստան իւր ազատութիւն,
Իմ գերեզմանիս քով թող կայնին ու ձայնեն,
Ահա ազատութիւն,
Եւ ահա փրկութիւն
Քաղցր Հայաստանի»:

...Բայց ամէն գեղեցիկ բան իր վերջը ունի, եւ մենք պէտք է թողունք Գելիգուզանը եւ դառնանք Մուշ: Կը սկսինք քալել դարաւոր ընկուզենիներու մօտէն: Կամաց մը քանի մը կանաչ ընկոյզ գրպանս կը դնեմ: Բայց դեռ գոհ չեմ: Կ'ուզեմ որ մեկնելէ առաջ, Գելիգուզանի մեջ, Սասնոյ պարը պարենք: Ու կանաչ, սիրուն բացատի մը մէջ կը հնչէ զուռնան, եւ օդին մէջ՝ շկահիւնի պէս կը տարածուի Եարխուշտայի ափերուն տաք աղմուկը: Պարէ՜ Սասուն... Աւելքն ու ժօրօն զիրար կը գերազանցեն: Եւ Մշոյ պարերու Կշռոյթին տակ ալ ինքնաշարժ կը նստինք ու կը փորձենք մեր ետին թողուլ Գելիգուզանը: Բայց անհնար է ու գէթ ինծի համար՝ Գելիգուզանը այլեւս մշտահարազատ տուն է, ծառ է, երկինք է, Սասուն է:

Մեսրոպ արք. Աշճյանի հուշերը տպագրության պատրաստեց ՀՈՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԸ

Գելիգուպան
Լուսանկարը՝ Սամվել Կարապետյանի

Աշխատանքները՝ Նաիրի Սաֆարյանի:
Արվեստագետի հետ հարցազրույցը
կարդացեք էջ 23-ում: